ISSN 1829-4804

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պրակ Ա

Երևան – 2019

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պրակ Ա

**(Հումանիտար և հասարակական գիտություններ,
դրանց դասավանդման մեթոդիկա)**

Երևան – 2019
«Միսմա» ՍՊԸ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ

ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Выпуск А

(Гуманитарные и общественные науки,
методика их преподавания)

Ереван – 2019
ООО «Мисма»

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TOUMANYAN

SCIENTIFIC PROCEEDINGS OF

VANADZOR STATE UNIVERSITY

Issue A

(Humanities and Social Sciences, Their Teaching Methodology)

Yerevan – 2019
"Misma" LTD

Տպագրվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Գ.Կ. Խաչատրյան, բ. գ. դ. (խմբագրական խորհրդի նախագահ, գլխավոր խմբագիր)
Ա.Մ. Սանթոյան, բ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)
Ա.Ժ. Պողոսյան, բ. գ. թ. (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ

Հ. Հ. Այվազյան, բ. գ. դ., **Վ. Վ. Բաղդասարյան**, տնտ. գ. դ., **Պ. Հ. Գևորգյան**, մ. գ. դ., **Գ. Լ. Եթիմյան**, պ. գ. դ., **Ս. Ա. Զաքարյան**, փ. գ. դ., **Ա. Ե. Մկրտիչյան**, փ. գ. դ., **Մ. Պ. Սկրտումյան**, հ. գ. դ., **Ֆ. Վ. Մովսիսյան**, պ. գ. դ., **Ա. Գ. Վաղարշյան**, իր. գ. դ., **Գ. Մ. Քեռյան**, քաղ. գ. դ., **Կ.Ս. Առուստամյան**, բ. գ. թ., **Ռ. Ա. Ավագիմյան**, հ. գ. թ., **Թ. Վ. Թաղևոսյան**, բ. գ. թ., **Ս. Մ. Թումանյան**, բ. գ. թ., **Հ. Պ. Հարությունյան**, բ. գ. թ., **Լ. Յու. Վարդանյան**, բ. գ. թ., **Վ. Ա. Փիլոյան**, բ. գ. թ.:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ,
Ա ՊՐԱԿ / հումանիտար և հասարակական գիտություններ, դրանց դասավանդման մեթոդիկա // ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան/: Խմբ. խորհուրդ՝ Գ. Խաչատրյան և այլք. – Երևան: «Միսմա» ՍՊԸ, 2019. – 186 էջ:

Ժողովածուն ամփոփում է հումանիտար և հասարակական գիտությունների տարաբնույթ հարցերին, ինչպես նաև դրանց դասավանդման մեթոդիկային վերաբերող գիտական հոդվածներ, որոնք խմբագրական խորհրդի անդամների կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ISSN 1829-4804

© Հեղինակային խումբ, 2019
© Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան, 2019

Печатается по решению ученого совета
Ванадзорского государственного университета имени О. Туманяна

Редакционный совет

Г. К. Хачатрян, д. ф. н. (председатель редакционного совета, главный редактор)
А. М. Сантоян, к. ф. н. (заместитель председателя редакционного совета)
А. Ж. Погосян, к. ф. н. (ответственный секретарь)

Члены редакционного совета

О. О. Айвазян, д. ф. н., **В. В. Багдасарян**, д. э. н., **П. О. Геворкян**, д. пед. н., **Г.Л. Етимян**, д. и. н., **С. А. Закарян**, д. филос. н., **А. Е. Мкртичян**, д. филос. н., **М. П. Мкртумян**, д. псих. н., **Ф. В. Мовсисян,** д. и. н., **А. Г. Вагаршян**, д. ю. н., **Г. М. Керян**, д. пол. н., **К. С. Арустамян**, к. ф. н., **Р. А. Авагимян**, к. псих. н., **Т. В. Тадевосян**, к. ф. н., **С. М. Туманян**, к. ф. н., **А. П. Арутюнян**, к. ф. н., **Л. Ю. Варданян**, к. ф. н., **В. А. Пилоян**, к. ф. н.

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА, ВЫПУСК А/ гуманитарные и общественные науки, методика их преподавания// Министерство образования, науки, культуры и спорта РА, Ванадзорский государственный университет/ Ред. совет – Г. Хачатрян и др. – Ереван, ООО «Мисма», 2019.– 186 с.

В сборнике представлены статьи, относящиеся к вопросам гуманитарных и общественных наук, а также методике их преподавания, которые после рецензирования и редактирования были рекомендованы к печати по решению редакционного совета.

ISSN 1829-4804

© Авторская группа, 2019
© Ванадзорский государственный университет имени О. Туманяна, 2019

Printed by the Resolution of the Academic Council of
Vanadzor State University named after H. Toumanyan

Editorial Board

G. K. Khachatryan, Doctor of Philological Sciences (Chairman of the Editorial Board, Chief Editor)
A. M. Santoyan, Candidate of Philological Sciences (Deputy Chairman of the Editorial Board)
A. Zh. Poghosyan, Candidate of Philological Sciences (Secretary-in-Charge)

Editorial Board Members

H. H. Ayvazyan, Doctor of Philological Sciences, **V. V. Baghdasaryan,** Doctor of Economic Sciences, **P. H. Gevorgyan**, Doctor of Pedagogical Sciences, **G. L. Yetimyan**, Doctor of Historical Sciences, **S. A. Zakaryan**, Doctor of Philosophical Sciences, **A. E. Mkrtichyan,** Doctor of Philosophical Sciences, **M. P. Mkrtumyan**, Doctor of Psychological Sciences, **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, **A. G. Vagharshyan,** Doctor of Law (Jurisprudence), **G. M. Keryan**, Doctor of Political Sciences, **K. S. Arustamyan**, Candidate of Philological Sciences, **R. A. Avagimyan**, Candidate of Psychological Sciences, **T. V. Tadevosyan,** Candidate of Philological Sciences, **S. M. Toumanyan**, Candidate of Philological Sciences, **H. P. Harutyunyan**, Candidate of Philological Sciences, **L. Yu. Vardanyan**, Candidate of Philological Sciences, **V. A. Piloyan,** Candidate of Philological Sciences.

SCIENTIFIC PROCEEDINGS OF VANADZOR STATE UNIVERSITY, ISSUE "A" / Humanities and Social Sciences and their teaching methodology // RA Ministry of Education, Science, Culture and Sport, Vanadzor State University/. Editorial Board: G. Khachatryan, etc. – Yerevan. "Misma" LTD, 2019. – 186 p.

The collection summarizes scientific articles on various issues of Humanities and Social Sciences, as well as scientific articles referring to their teaching methodology, which have been reviewed, edited and recommended for publication by the members of the Editorial Board.

ISSN 1829-4804

© Authors' group, 2019
© Vanadzor State University
named after H. Toumanyan, 2019

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

LITERARY STUDIES

Կերպարակերտումը գրողի և պատմողի հայեցակետերից՝ ըստ Դովլաթովի «Մերոնք» նովելաշարի

Մալումյան Գայանե

Հանգուցային բառեր՝ *կեղծ վավերագրություն, պատումային արձակ, պատմող, կենսակերպ, այլախոհ, առասպելական նախատիպ*

«Ժանրը, որով ես հանդես եմ գալիս, այսպես ասած կեղծ վավերագրականությունն է: Ամերիկայում այն կոչվում է նոնֆիքշըն, այսինքն՝ ոչ գեղարվեստական արձակ: Երբ պահպանվում են վավերագրական արձակի բոլոր ձևական հայտանիշերը, դու գրական միջոցներով փաստաթուղթ ես ստեղծում: Ես էլ կեղծ վավերագրական պատմություններ եմ գրում՝ հուսալով, որ դրանք ժամանակ առ ժամանակ իրականության զգացում են արթնացնում, թե ամեն ինչ հենց այդպես էլ եղել է, չնայած փաստացի այդ ամենը հարյուր տոկոսով չի կատարվել, հորինվել է: Փորձել եմ իմ պատմվածքները վավերագրանման դարձնել, բայց դրանք, ըստ էության, «ֆիքշըն» են, հորինվածք՝ քողարկված վավերագրական իրադարձություններով»,– ասել է Դովլաթովը Ջոն Գլեդի հետ հարցազրույցում [3, 322]:

Պատումային արձակ (narrative prose) էսսեների, ակնարկների, առանձին կերպաշարերով հուշագրության ժանրային ձևառճը Դովլաթովին հնարավորություն էր տվել ներկայացնելու իր տոհմի գեղարվեստականացված դիմանկարները: «Մերոնք» նովելաշարը կազմված է 12 առանձին պատմություններից և վերջաբանից:

Գրվել է ԱՄՆ-ում 1980-ականներին: Հարցազրույցներից մեկում Սերգեյ Դովլաթովը գրողի և պատմողի («story teller») տարբերությունն այսպես է բացատրում. «Գրողը լուրջ խնդիրներով է զբաղված. գրում է այն մասին, թե հանուն ինչի են ապրում մարդիկ, թե ինչպես պետք է ապրեն մարդիկ: Իսկ պատմողը գրում է, թե ԻՆՉՊԵՍ են ապրում մարդիկ»: Իբրև պատմող՝ նա չի պարտավորվում դիպաշարային զուգահեռների դիմելու: Յուրաքանչյուր կերպար տիպական է դառնում իր ներքին ու արտաքին համա-

մասնություններով, աշխարհայացքով, կենսակերպով: Կենսական կարևորություն ունեցող հիմնախնդիրները թեթև, կատակային տոնով ներկայացնելու ոճական առանձնահատկությունն է հատուկ այս նովելաշարին (նաև Դովլաթովի ողջ ստեղծագործությանը): Զգացվում է ձանձրալին բացառելու, կերպարը առանց ավելորդ ջանքերի համակողմանիորեն ներկայացնելու միտումը: Եզրափակող պարբերությունը, ինչպես նովելներին է հատուկ, երբեմն անսպասելի փակագծեր է բացում, հակասական զգացմունքներ՝ պատումի ընթացքից տարբերվող:

Տարիների հեռվից ամեն ինչ այլ կերպ է ընկալվում, կարծես հեղինակը անցյալի հուշերը ամբողջացնում է ներկայի գիտակցությամբ: Հեղինակի մեկնաբանությունը ստեղծագործության առանցքային տարր է, քանի որ հուշագրության նպատակն անցյալն օբյեկտիվորեն վերականգնելը չէ, այլ սուբյեկտիվորեն ներկայի տեսանկյունից մեկնաբանելը:

Ազգային տիպաբանության խտացում կա հրեա պապի կերպարում. «Մեր նախահայր Մովսեսը Սուխովո գյուղից էր: Հրեա և գյուղացի. սա բավական հազվադեպ համադրություն է: Հեռավոր Արևելքում, սակայն, պատահում էր»: Թվում է՝ իմիջիայլոց ասված տեղեկություն է, բայց կռահում ենք, որ նախահայրը այնտեղ է հայտնվել ոչ իր կամքով: Իսկ Իսահակ պապն արդեն քաղաքում էր ապրում. «Ասել է թե՝ վերականգնել էր իրադարձությունների բնականոն ընթացքը» [1, 1]: Էջ առ էջ շարժանկարի պես կենդանի ներկայանում է Մարդը՝ իր արտաքին ու ներքին ներդաշնակությամբ ու հակասությամբ: Անմեղ թվացող արտահայտությունը անսպասելի ճյուղավորվում է. «Պապս տանել չէր կարողանում անկարգությունները: Այդ պատճառով էլ բացասաբար ընդունեց հեղափոխությունը» [1, 2]: Ոչ մի մանրամասն ավելորդ չէ, նպատակային է հետագա ծավալումը: «Ես իմ պատմվածքները կրկնում եմ հազարավոր անգամներ, և պատմելու ընթացքում ավելորդը կորչում է, ոչ պիտանի մանրամասները դուրս են ընկնում»,– խոստովանել է Դովլաթովը [3, 324]: Սա խոսքարվեստի հետաքրքիր դրսևորումներից է: Թվում է՝ պապի անսովոր հաղթանդամ լինելը, հյուր գնալուց առաջ կուշտ ուտելը, օղին կրեմ-սոդայի բաժակով խմելը, ան-

մեղ տեղը բանտ նստելու փաստերը ներկայացված են՝ բնութագրելու հենց այդ կերպարը միայն: Սակայն պատումի վերջաբանը փաստացի ապացույցն է այն իրողության, որ Դովլաթով պատմողը կարողանում է շրջանը սահուն փակել. «Ես պապիս հաճախ եմ հիշում, թեև ծանոթ չեմ եղել: Ընկերս, ասենք, զարմանում է.

– Ինչպե՞ս ես կարողանում ռոմը թեյի բաժակով խմել:

Անմիջապես պապիս եմ հիշում: Կամ կինս է ասում.

– Երեկոյան հրավիրված ենք խնջույքի: Դու պետք է նախապես ճաշես:

Ես կրկին այդ մարդուն եմ հիշում: Բանտում էլ նրան հիշել եմ…

Ես պահել եմ պապիս լուսանկարներից մի քանիսը: Թոռներս շփոթելու են մեզ…» [1, 3]: Ահա այն, ինչ չի կարող որևէ մեկի կամքով լինել՝ գենետիկական կապը, ժառանգականության անխուսափելի վավերականացումը:

Նրա կերպարների մեծ մասը հաջողության բազմասայթաք սանդուղքներով վերուվար անողներից է. փակվում է մի դուռը, մեկ ուրիշն է բացվում, ընդ որում՝ գրեթե բոլորը իրենց տարօրինակությամբ ասես ուսուցանում են և հաստատում՝ մարդու բնավորությունն իր ճակատագիրն է, ինչ լինելու է, կլինի: Դովլաթովը դեմ էր բարոյական ցանկացած կտրական ձևակերպման և սովորաբար հրաժարվում է փաստերի և դեպքերի ճշգրիտ ժամանակագրական հաջորդականությունից: Ժամանակային տարբեր միաձուլումների շնորհիվ են հուշագրություններն առանձնանում այլ ժանրերից:

Լևոն-Զավեն Սյուրմելյանը «Արձակի տեխնիկա» գրքում կերպարակերտման մասին գրում է. «Եթե անձնավորությունը այնքան եզակի է, որ կարող է խիստ առանձնահատուկ, հիվանդագին դեպք լինել, գրողը կարող է հիվանդագինից պոեզիա կերտել. ոչ նորմալը առանձին հմայք ունի: Սովորական գիծը կհստակեցնի կերպարը, իսկ անսովոր գիծը յուրահատկություն կհաղորդի» [2, 196]:

Դովլաթովի կարծիքով՝ իրար նման մարդիկ օգտակար են ամենքին, ոչ նմանները թշնամանք են ծնում: Բայց կյանքի աղը վերջինների մեջ է: Սա կարծես իր հայազգի պապի մասին է, որին գեղարվեստական մեծ ուժով է կերտել: Տիպական կերպար է՝ իր խորհրդավոր «Աբանամա՛տ» սաստող բառով, որի իմաստը հեղի-

նակը միայն համալսարանում սովորելիս է գուշակել: «Բարձրահասակ, նրբագեղ ու հպարտ» պապի ըմբոստ ու անհանդուրժող լինելու պատճառը երևի այն էր, որ երեխա ժամանակ հայրը նրան միշտ փայտով ծեծել է, նույնիսկ լքված ջրհորն է նետել: Ամբողջ ընտանիքը անխոս ենթարկվում էր նրան, իսկ ինքը՝ ոչ ոքի, նույնիսկ երկնային ուժերին: Վկայում է, որ պապի մենամարտն աստծու հետ մի անգամ նույնիսկ ոչ-ոքի է ավարտվել: Տարիները ծերունուն ավելի անհանդուրժող էին դարձրել: Խեղված մանկությունը անդառնալիորեն ստվերել էր հետագա կյանքը: «Պապիս շուրջը գոյացել էր մեկուկես մետր տրամագծով վտանգավոր գոտի: Այդքան էր նրա մահակի երկարությունը» [1, 5]: Ողբերգական վերջաբանը՝ ինքնասպանության գրոտեսկային պատկերը, հաստատում է Դովլաթովի՝ աֆորիզմային արժեք ստացած արտահայտությունը. «Անիմաստ է սեխի բուրմունքի մասին պատկերացումներ ներշնչել մարդուն, որը տարիներով ծամել է իր կոշիկի քուղերը»:

Յուրաքանչյուր ինքնակենսագրության կամ հուշագրության հետևում կանգնած է անհատը՝ իր ներաշխարհով և հայեցակետերով: Յուրաքանչյուր կերպարի՝ իր սեփական տեսակին համապատասխանող կաղապարը գրողը հյուսում է յուրովի, երբեմն միմյանց հակասող բնութագրություններով: Ռոման քեռուն կինտո է անվանում և բացատրում. «Կինտոն ո՛չ խուլիգան է, ո՛չ հարբեցող, ո՛չ էլ պորտաբույծ: Թեև խմում է, խուլիգանություն է անում ու չի աշխատում» [1, 6]: Սրամիտ, համարձակ, կյանքի «անորոշ ու մշուշոտ զգացողությամբ» քեռուն մարդ դարձրեց պատերազմը. «Վերադարձավ փոխգնդապետի կոչումով»: Փողոցային կռիվների շուրջ հորինել ու պատմել սիրող քեռին պատերազմի մասին համառորեն լռում էր. «Չէր սիրում այդ մասին խոսել: Չեմ կարող ասել, թե ինչու» [1, 7]: Այդ խոսուն լռությունը ցրում է քեռուն թեթևամիտ մարդու տեղ դնելու հավանական ենթադրությունը: Հեղինակը պնդում է, որ իր պատմությունները ոչ մի բարոյական խրատ չեն պարունակում, քանի որ ինքն էլ չգիտի, թե ինչի համար են ապրում մարդիկ: Այդ հանգամանքի մեջ նա տեսնում էր իր՝ պատմողի և բարձրագույն նպատակներին լավատեղյակ գրողի դասական տիպի տարբերությունը:

Նկատելի է, որ Դովլաթովի կերպարների բնութագրման մեջ ավելի քիչ տեղ է գրավում մարդու արտաքին մանրամասն նկարագրությունը. փոխարենը շեշտվում է ընդհանուր տպավորությունը՝ հասակը, գրավչությունը, շրջապատի վերաբերմունքը նրա հանդեպ: Կարևորը կերպարի ներքին էության բացահայտումն է: Հեղինակի հետ համաձայնելը բնավ էլ պարտադիր չէ. վիճելի են, ասենք, նրա դատողությունները մարդու անվան շուրջ. գտնում է, որ մարդու անունը պայմանավորում է նրա բնավորությունն ու կենսագրությունը (մի քանի օրինակով փորձում է հաստատել այդ կարծիքը): Դովլաթովի հորեղբայրներից մեկը՝ Լեոպոլդը, Թիֆլիսի ինտելիգենտ «աֆերիստներից» էր. անունն էր «մեղավոր. կարծես դիտմամբ էին անդրծովյան անուն տվել՝ հաշվի առնելով ապագա կոսմոպոլիտի կենսագրությունը» [1, 10]:

18-ամյա Լեոպոլդը անձրևոտ մի օր համեստ հագնված մտնում է կենտրոնական խանութներից մեկը և խնդրում իր ջութակը ժամանակավորապես պահել: Մեկ ժամից շքեղ հագնված մի օտարերկրացի խանութ է մտնում. «պատահաբար» նկատում է ջութակը և հիացած ու զարմացած առասպելական գին առաջարկում այդ իսկական Ստրադիվարիուսի համար: Խանութի տերը չի կռահում խարդախությունը, և լացակումած պատանին իր «պապի հիշատակը» վաճառում է հինգ հազարով: Սա սկիզբն էր, բայց եթե մարդու մեջ կա երևույթի նախասկիզբը, նա ջրապտույտի մեջ կհայտնվի ավելի շուտ, քան կմտածի ընտրություն կատարելու մասին: Դովլաթովը համոզված է, որ ընթերցողն ավելի լավ է մտապահում հերոսներին իրենց արատների պատճառով, ուստի դրանք էլ առանցքային է դարձնում: Արտասահման փախած Լեոպոլդը նամակներում եղբորը բողոքում էր իր «աղքատությունից». «Տներս վերանորոգման կարիք ունեն: Մեքենաներս չորս տարի չեն թարմացվել» [1, 13]: Իսկ եղբայրը պատասխանում էր լավատեսական նամակներով. «Ապրում եմ փոքրիկ, հարմարավետ բնակարանում (նկատի ուներ ֆաներայի միջնապատով առանձնացված իր խուցը)»:

Օտարության մեջ կյանքն ապրած հորեղբոր հետ իր հանդիպման մասին նկարագրելիս ոչ մի մանրամասն չի մոռանում. «Գիտեի, որ հարկավոր է գրկել այդ ըստ էության անծանոթ մարդուն»

[1, 14]: Միտումնավոր շեշտում է նրա «առատաձեռնությունը»՝ ռեստորան հրավիրելը, շռայլ հյուրասիրելը, նվերներ տալը, քաղաքում շրջերթը, փող առաջարկելը, ցանկացած հարցում իր օգնությունը տրամադրելը… Բայց արյունակից հարազատը օտար է մնում: Երբ վերադառնում է, հյուրանոցատեր Ռեյնհարտն ասես զգում է նրա ընկճվածությունը և ընդհատում է իր գործը, որ միասին խմեն, զրուցեն ոչ մի բանից… Ու հանկարծ հասկանում է, որ «կյանքն անհեթեթ է թեկուզ այնքանով, որ գերմանացին ինձ ավելի մոտ է, քան հարազատ հորեղբայրս: Ճիշտն ասած, ինքս էլ չհասկացա, թե նա ինչպես մտավ այս պատմվածքի մեջ: Չէ՞ որ խոսքը միանգամայն այլ մարդու մասին էր: Իմ հորեղբայր Լեոյի մասին» [1, 20]: Զարմանալի փաստ է, բայց կենսասիրության տրամադրում են նրա արձակի տխուր սյուժեները՝ օբյեկտիվ իրականության՝ հեղինակի սուբյեկտիվ վերլուծությամբ: Փաստի նշանակությունը պայմանավորված է այլ փաստերի հետ հարաբերակցությամբ, հեղինակի կողմից վերլուծությամբ և վերաիմաստավորմամբ: Տվյալ դեպքում պատումի կենտրոնում է հայտնվում օտար հարազատը, ոչ թե հարազատ օտարը:

Խորհրդային իրականության, գրական միջավայրում տիրող աներևակայելի դեպքերի, անհատի պաշտամունքի տարիներին միմյանց վարկաբեկելու և ճակատագրեր խեղելու զուգահեռ դրվագներ են սրբագրիչ մորաքրոջը ներկայացնող գլխում: Գիրք խմբագրելու մասին հեղինակի կարծիքը ևս ինքնատիպ է. «Ամենևին չեմ հասկանում, թե ինչի է պետք խմբագիրը: Եթե գրողը լավն է, խմբագրի կարիք կարծես թե չկա: Եթե վատն է, ապա խմբագիրն էլ չի փրկի: Կետադրությունն էլ ամեն հեղինակ ինքնուրույն է ստեղծում» [1, 21]:

Բարյացակամ հեգնանքը աստիճանաբար վերաճում է սարկազմի (թարգմանիչը յուրովի է ձևափոխել հայհոյախառն երկխոսությունը): Զավեշտալի է բարձրահասակ ու մարմնեղ Ալ. Տոլստոյի հետ կապված դրվագը, երբ ցածրահասակ ու վտիտ մորաքույրը ընթացքից թափով հարվածում է նրա փորին.

– Այ քեզ բան,– հարվածի տեղը շփելով՝ ասում է Տոլստոյը:– Բա որ այստեղ աչքս լիներ…

Սրան հաջորդում են մորաքրոջ պատմած մյուս «զավեշտալի» պատմությունները՝ ժամանակի դաժանության կնիքը կրող.

«Որ Զոշչենկոն փառաբանել է ճամբարային ստրկական աշխատանքը:

Որ Ալեքսեյ Տոլստոյը սրիկա էր և երեսպաշտ:

Որ Յուրի Օլեշան դավաճանել է իր ընկեր Շոստակովիչին:

Որ հետաքրքրասեր Պավլենկոն գնում էր նայելու, թե ինչպես են հարցաքննում Մանդելշտամին: Եվ այլն»:

Եվ այլն-ը տվյալ դեպքում նշանակում է, որ կարելի է այս սարսափելի թվարկումը երկար շարունակել: «Գրողը կարող է իր հերոսների մասին մանրամասն տեղեկություններ տալ կտրուկ ձևակերպումներով և կարող է ցանկացած կետում դադարեցնել պատումը» [2, 209]:

Ոչ ոքի համար գաղտնիք չէր Դովլաթովի «այլախոհ անհատապաշտ» լինելը, իսկ վերոնշյալ իրողությունները բարոյական սկզբունքներիդ հետ հաշտեցնելով ապրելն անհնար էր: «Գրողի երևակայության ազատությունը արձակի բնութագրիչներից է, սակայն երևակայությունը հիմնված է հենց իրականության վրա» [2, 9]: Եվ մորաքրոջ ամուսնու՝ Արոնի հետ բանավեճը բացահայտում է նաև հեղինակի հակախորհրդային հայացքները: Նովելի բեկումային հատվածը գաղտնազերծում է «սիրելի և սոսկալի» պետության գովքն անող, իսկ մահացու հիվանդ ժամանակ պետությանն ու կոմունիստներին հայհոյող, գաղափարական պարտություն կրած Արոնի կերպարը. «Նրա կենսագրությունն արտացոլում է մեր պետության պատմությունը» [1, 28]: Այս ընդհարացումը մարդկային հավատի և կասկածանքների բախման հետևանքն է:

«Գրողը պարտադրված չէ ստանձնելու կատարյալ տեղյակության պատասխանատվությունը: Նա կարող է մարդկանց և իրադարձությունները մեկնաբանել այնպես, ինչպես հիշում է տարիներ անց» [2, 108]: Մորաքրոջ ամուսնու հոգեպես անհավասակշիռ վիճակի նկարագրությունը մարդկային հոգին «աստառի վրա շրջելու» և ճշմարտությունը վեր հանելու նպատակ ունի: Եվ բնավ էլ կարևոր չէ՝ այդպես է եղել իրականում, թե ոչ:

Հայտնի է, որ խորհրդային հասարակության մեջ հակասեմի-

տական թեքում էլ կար: Հրեա-հայկական արմատները հեղինակին (իր իսկ խոստովանությամբ) հոգեբանական անկայունություն էին հաղորդել: Մի հատված Վիկտոր Երոֆեևի հետ հարցազրույցից.

– Մայրս հայուհի է, հայրս՝ հրեա: Երբ ծնվեցի, նրանք որոշեցին, որ իմ կյանքն ավելի անամպ կլինի, եթե ես հայ դառնամ, և իմ ծննդականում ազգությունս հայ գրվեց: Այնուհետև, երբ եկավ մեկնելու ժամանակը, պարզվեց, որ դրա համար անհրաժեշտ է հրեա լինել: 1978թ. օգոստոսին, հրեա դառնալով, մեկնելու ձևական հնարավորություն ստացա:

Հայուհի մոր կերպարը գեղարվեստական ամբողջացում ունի՝ սկսած Ստալինի նկատմամբ տածած քամահրանքից. «Վրացին չի կարող կարգին մարդ լինել» [1, 29] (բացատրությունը՝ մեծացել էր Թբիլիսիի հայկական թաղամասում), մինչև որդու հետ Նյու Յորք տեղափոխվելը. «Մորս չէի հարցրել՝ ուզո՞ւմ է, թե՞ ոչ»: Մայրն այնտեղ է, որտեղ պետք է լինի որդին:

Ծնողների մասին պատումներում գերակշռում են քաղաքական-ազգային կյանքի դրվագները: Այդ մթնոլորտում է ձևավորվել հեղինակի անհատականությունը, արմատավորվել է ատելությունը Ստալինի, առհասարակ կոմունիստական ռեժիմի հանդեպ. «Գիտեի, որ թերթերը ստում են: Որ արտասահմանում սովորական մարդիկ ավելի հարուստ և ուրախ են ապրում: Որ կոմունիստ լինելն ամոթ է, բայց՝ ձեռնտու» [1, 29]: Նման խորամտությունը մայրն էր ներշնչել:

Գրաքննադատ Բենեդիկտ Սարնովը «Ս. Դովլաթովի «Աբսուրդի թատրոնը» հոդվածում [4, 5-38] գրում է, որ ամերիկացի մի քննադատ 60-ականներին է իր համար բացահայտել Միխայիլ Զոշչենկոյին: Նրան զարմացրել է գրողի երևակայությունը՝ հորինել մի դաժան իրականություն, որտեղ ամեն ինչով տարբեր ընտանիքներն ապրում են ընդհանուր բնակարանում, օգտվում ընդհանուր խոհանոցից, լոգասենյակից ու զուգարանից: Խորհրդային պետության մեջ ապրողները գիտեն, որ սա հորինվածք չէ, այլ իրականություն: Հետագայում Բուլգակովի հերոսի խոսքերը՝ բնակարանային հարցի մասին, նույնպես տարակուսանք էին առաջացնում այն երկրներում, որտեղ մարդիկ չգիտեին՝ ինչ է կոմունալ բնակարա-

նը: Դովլաթովը, Զոշչենկոյի հավատարիմ հետևորդը լինելով, գիտակցաբար շարունակում էր զարմացնել իր գեղարվեստական հայտնագործություններով, քանի որ «աբսուրդի հարցում մենք, ինչպես միշտ, մոլորակի առջևից ենք գնում» [4, 37]:

Մայր և որդի ապրում էին մի զազրելի կոմունալ բնակարանում, որի խզբզված պաստառները «կոմունալ ենթագիտակցության տխուր ժամանակագրությունն էին»: Բնակարան կոչված այդ խառնաշփոթում «քողարկված պատերազմը երբեք չէր մարում: Փոխգրգռվածությամբ լի կաթսան կրակի վրա էր… Միջանցքում վազվզում էին երեխաները, դոփում էին Տիխոմիրովի զինվորական սապոգները, համերգի էր պատրաստվում Ժուռավլյովան» [1, 28]: Երեք հերթափոխով աշխատող սրբագրիչ մայրը այդ հավերժական աղմուկի մեջ քունը չէր առնում. «Իսկ աշխատանքը պատասխանատու էր (այն էլ՝ Ստալինի օրոք): Ցանկացած վրիպակի համար կարելի էր բանտ ընկնել: Բավական է մեկ տառասխալ՝ վե՛րջ: Անպայման գռեհկություն կստացվի կամ ավելի վատ՝ հակասովետիզմ: Իսկ երբեմն՝ երկուսը միասին» [1, 29]: Հաջորդում է զավեշտական օրինակների շարք, և հեղինակի դիտողությունը. «Մեր թերթերում, ինչպես հայտնի է, միայն վրիպակներն են ճշմարիտ»: Մոր անձնվիրության մասին մի երկու ակնարկ կա, բայց դա հենց այն է, ինչ հուզում է առանց ավելորդ մակդիրների. «Մայրս օր ու գիշեր աշխատում էր: Ես չափազանց շատ էի ուտում. աճող օրգանիզմ էի: Մայրս սնվում էր հիմնականում կարտոֆիլով: Մինչև 17 տարեկանս միանգամայն համոզված էի, որ մայրս միայն կարտոֆիլ է սիրում: (Այստեղ՝ Նյու Յորքում, վերջնականապես պարզվեց, որ այդպես չէ… [1, 30]»:

Անդրեյ Արևը «Արձակ և ճակատագիր» հոդվածում Դովլաթովի մասին գրել է. «Արձակագիրն ասում է, թե իր խնդիրն է պատմել այն մասին, թե ինչպես են ապրում մարդիկ: Իրականում նա պատմում է, թե նրանք ինչպես չեն կարողանում ապրել: Եվ առաջին հերթին դրանից զրկված է հենց ինքը՝ հեղինակը: «Լավ կյանքից գրող չեն դառնում»,– դառնորեն կատակում էր նա» («Գրական թերթ» 15 մարտի, 1991թ.): Ինքնախարազանումը՝ «վատ տղա» ներկայանալու ցուցադրականությունը, ձևական կարող է թվալ, եթե

պատմողը դովլաթովյան անփույթ լեզվառճը չունենա: «Վատ էի սովորում: Ընկերություն էի անում դպրոցական թափթփուկների հետ: Ծխում էի, երբեմն նաև՝ խմում: Համալսարանում էլ վատ եմ սովորել: Մորս սպառնում էի, թե կամուսնանամ: Այն էլ՝ ում հետ ասես: Հետո ինձ բանակ տարան: Բանակում էլ վատ եմ ծառայել» [1, 32]: Երկար ժամանակ չտպագրվելու վշտից ավելի շատ էր խմում, մորուքավոր, ներփակ ու մռայլ ընկերներ ուներ: «Մայրս համակրում էր ընկերներիս, կերակրում էր նրանց: Համբերությամբ լսում էր նրանց անզուսպ ինքնագովաբանությունը»: Երբ Դովլաթովին տպագրում են արտասահմանում, բոլոր ընկերները (մի մասը՝ նախանձից, մյուսները՝ վախից) դատապարտում են, նախազգուշացնում՝ կբանտարկեն, քրեական գործ կսարքեն գլխին, գրողը հայրենիքում պիտի տպագրվի: «Եվ միայն մայրս էր անընդհատ կրկնում. «Անչափ ուրախ եմ, որ քեզ վերջապես տպագրում են» [1, 34]: Իր մասին է գրում, բայց բնութագրվում է մայրը: Առանց ամպագոռգոռ խոսքերի է նաև վերջաբանը. «Հիմա Նյու Յորքում ենք: Եվ այլևս չենք բաժանվի: Առաջ էլ չէինք բաժանվում: Նույնիսկ երբ ես երկար ժամանակով մեկնում էի» [1, 35]:

Դովլաթովի կարծիքով՝ աշխարհն անհեթեթ է, եթե ենթարկված է բնականոնին, կորցրել է բնական քաոսի հատկանիշը: Այդ է հաստատում նաև Լ.Ջ. Սյուրմելյանը. «Գրողը կարող է կործանել իր պատմությունը չափից ավելի կարգ ու կանոնի, չափից ավելի մշակված սյուժեի պատճառով: Պատմությունն ավելի ճշմարտացի է թվում, երբ դրա մեջ որոշ անկարգություն կա, և այս անկարգությունը կարող է լինել արվեստը քողարկող արվեստ» [2, 139]: Նման ձևով է գրել իր հոր մասին, որն իրեն չի դաստիարակել, բայց շատ արտահայտություններ բացահայտում են ժառանգական այն նմանությունը, որին ոչ մի դաստիարակություն չի կարող խոչընդոտել: Այս կերպարում հեղինակը իրենից շատ բան է դրել. սա բնական է: «Դիմանկարների համար հեղինակը ստվերների և լուսավոր կետերի կարիք ունի»[2, 197]:

Ահա սկիզբը. «Հայրս միշտ սիրել է ուշադրության կենտրոնում լինել: Դրա համար էլ դերասան դարձավ»: Սա մարդու բնութագիրն է: Հաջորդ տողերում բնութագրվում է հասարակարգը. «Կյանքն

իրեն ներկայանում էր որպես մի վիթխարի թատերականացված ներկայացում: Ստալինը հիշեցնում էր շեքսպիրյան չարագործներին: Ժողովուրդը լուռ էր, ինչպես «Գոդունով»-ում» [1, 35]: Անհատի պաշտամունքի տարիներին մարդկանց անհետանալը հոր համար դրամա էր, ուր արատը պատժվում էր: Մայրն անիծում էր Ստալինին, իսկ հայրը փորձում էր ձերբակալվածների մեջ շոշափելի թերություններ գտնել, որ համակերպվի կորստին: Բայց երբ իր հորն են տանում, դրաման վերաճում է ողբերգության. «գլխավոր հերոսին վտանգ էր սպառնում, ինչպես Շեքսպիրի ողբերգություններում»: Այդպես էլ լինում է. հորը թատրոնից վռնդում են. «Ինչպե՞ս չվռնդեին իր իսկ մշակած տեսությամբ: Հրեա, հորը գնդակահարել են, եղբայրը արտասահմանում է» [1, 36]: Հայրն ամբողջ կյանքն ապրեց ասես բեմի վրա. կյանքն ընկալում էր որպես մի ներկայացում: Փոխվում է իրավիճակը, և նա համակերպվում է դրան: Սկզբում «արհեստավարժ երգիծաբան» էր, հետո՝ էստրադային կատակների հեղինակ. նրա հումորային ելույթների մեջ դովլաթովյան երանգ կա՝ անմիջապես աչքի չզարնող, բայց սրամիտ: Այսպես, օրինակ.

– Այժմ կկատարվի «Ալ ծաղիկը» մեքսիկական երգը: Բովանդակությունն այսպիսին է. Խուանիտոն ինձ ալ ծաղիկ նվիրեց: Ես աղքատ եմ,– ասաց նա,– ու չեմ կարող քեզ մարգարտե մանյակ նվիրել: Այս ծաղիկը գոնե վերցրու: Խուանիտո,– ասացի ես,– քո նվիրածը շատ ավելին է, քան մարգարտե մանյակը: Դու քո սերն ես ինձ նվիրել… Եվ այսպես՝ Ռուբինա Քալանթարյան: Մեքսիկական երգ՝ «Ալ ծաղիկը»: Երգը կատարվում է ՌՈՒՍԵՐԵՆ… [1, 37]:

Դովլաթովյան սեղմ բնութագիրը խոսուն է. «Ռոմանտիկ արտաքին ուներ. ավելորդ կերպով ներկայացուցչական»: Ծնողների բնավորության ծայրահեղ հակադրությունը հուշում էր. այս ընտանիքը չի կարող երկար գոյատևել: «Մորս բարոյական առաքինության անողոք լույսը աղետալի կերպով ի ցույց էր դնում հորս թերությունները»՝ բարեհոգությունն ու թեթևամտությունը, խմիչքի հանդեպ սերը, կատարյալ ազնվությունը, իրական կյանքի «խորացված ու համառ անհասկացողությունը, ներողամտությունն ու մեծահոգությունը («հորս՝ թատրոնից հեռացրած մարդուն մայրս

ատում է մինչև օրս: Իսկ հայրս ժամանակ առ ժամանակ բարեկամաբար խմում է հետը»): Սա հենց Դովլաթովն է: Եվ նովելի վերջում այդ հաստատում է սեփական կինը. «Աստված իմ, ինչ նման ես հորդ…» [1, 40]:

Հեղինակը պարզապես քանդում է դրական-բացասականի բնութագրման ձևաչափերը: Նրա հերոսների մեծ մասը ասես արատների հավաքածու լինի, բայց նրանց մեջ այնքան մարդկային և որոշ իմաստով բարոյապես բարձր հատկանիշներ կան, որ անկարելի է չհամակրել: Կա միատարր հասարակություն, և կան անհատներ՝ տաղանդավոր, հետաքրքիր, ընդունակ համարձակ արարքների, որոնց համար հատուցում են իրենց բարեկեցիկ ապագան խաթարելու գնով: Այդպիսին է մորաքրոջ տղա Բորյան՝ հակասությունների մի կծիկ: Սա ամենածավալուն նովելն է: Ահա սկիզբը. «Կյանքը նրան քրեական հանցագործ էր դարձրել: Ինձ թվում է՝ նրա բախտը բերել է: Այլապես անխուսափելիորեն դառնալու էր խոշոր կուսակցության աշխատող» [1, 41]: Նույն նժարին դրվող երկու ծայրահեղություններից մեկի գերադասումը բարոյալքված համակարգի էությունն է ցույց տալիս: Բորյայի կյանքը սրընթաց վերելքի և գլխիվայր գահավիժման շղթայական անվերջություն էր: Սա թելադրված էր նրա բնավորության մեջ ժամանակ առ ժամանակ առկայծող անհանդուրժողությամբ: Պատերազմի տարիներին ծծկեր եղբոր (հեղինակի) համար բերանում պահած ռաֆինադ շաքար էր բերում: Արտասովոր արտաքինը՝ արևմտաեվրոպական տիպի գեղեցիկ (առաջին անգամ մանրամասնում է՝ բաց գույնի աչքեր և մուգ մազեր), «ցուցադրական» սովետական տղային բոլորի աչքի լույսն էր դարձրել. «Պիոներ, գերազանցիկ, ֆուտբոլիստ ու մետաղի ջարդոն հավաքող: Օրագիր էր պահում, ուր արտագրում էր իմաստուն ասույթները: Իրենց բակում կեչի տնկեց: Հաղթել էր օլիմպիադայում և այլն, և այլն… Եվ հանկարծ դպրոցն ավարտելուց մեկ շաբաթ առաջ… միզեց դպրոցի տնօրենի վրա» [1, 42]: Պատահաբար իմացել էր, որ նա ճամբարային վերակացու և մատնիչ է եղել: Թեև զրկվեց ոսկե մեդալից, բայց իր իսկ խոստովանությամբ՝ եթե չաներ այն, ինչ հոգու խորքում երազում էր ամեն մի դպրոցական, կդադարեր իրեն հարգելուց: Մի կողմից՝

աներևակայելի և վայրենի արարք, մյուս կողմից էլ՝ ո՞վ կունենար նման խիզախություն: Սա սկիզբն էր: Այս շրջապտույտը որոշակի տարբերությամբ նա անցնելու է ողջ կյանքում: Գերազանցության դիպլոմով ավարտում է թատերական ինստիտուտը, «անթերի կոմերիտական բնութագիր, կապիտալիզմի մնացուկների անհաշտ թշնամի, գրական մասի զուսպ և խստապահանջ վարիչ… և հանկարծ՝ տասներկու կողոպուտ»: Վայրիվերո, բայց զարմանալիորեն հետաքրքիր կյանք: Ճամբարում էլ «սրընթաց վերադաստիարակվում էր: Նրան նախանձում էին, նրանով հիանում էին»:

Ռոման քեռու կարծիքով. «Կան մարդիկ, որոնք նման են սողունների: Ապրում են ճահճում… Եվ կան մարդիկ, որոնք լեռնային արծիվների նման արևից բարձր են սավառնում՝ լայնորեն տարածելով թևերը: Խմենք Բորյայի՝ մեր լեռնային արծվի կենացը» [1, 45]: Սա բանտից նոր վերադարձածի մասին է, որին որոշ ժամանակ անց փայլուն բնութագիր են տալիս, առաջարկում են կուսակցության շարքերն ընդունվել: «Եղբայրս տանջվում էր՝ կարո՞ղ է կոմունիստը քրեական անցյալ ունենալ: Հին կոմունիստները հավատացնում էին, թե կարող է»: Խոսուն փաստ՝ առանց ավելորդությունների:

Առաքինի և ամաչկոտ տղային անսքող ոգևորությամբ սիրահետում էին կանայք, նա կարիերա էր անում և միաժամանակ կործանում այն: Հեղինակային համեմատությունն էլ անսովոր է հնչում. «Կարծես սաքսաֆոնի խռպոտ ձայնը խախտում էր «Ապասիոնատի» հանդիսավոր հնչյունների հերթականությունը» [1, 46]: Այդ խախտումը բարձրակետին է հասնում, երբ հարբած վիճակում վրաերթ է կատարում՝ մահացու ելքով: Խառնաշփոթ իրարանցման մեջ հնչում է գիշերային զանգը. Բորյան է. մի բլոկ ճապոնական գերազանց սիգարետներ է ուղարկել եղբորը, չի՞ ստացել: Դատապարտյալ լինելով՝ շատ ավելի ազատ էր, քանզի գիտեր, որ խորհրդային ճամբարը ևս հարբեցողների բույն է. «Մի գործչի օղու եմ ուղարկել, գնացել-կորել է… Բարդակ է, ոչ թե զինվորական ստորաբաժանում» [1, 53]: Անդրեյ Արեևը գրում է, որ Դովլաթովը կյանքի և բանտի միջև միայն մի տարբերություն էր տեսնում՝ փշալարը, մնացածը նույն դժոխքն էր:

Մեփական անցյալի աշխարհը երևում է հասուն գիտակցակա-

նի և ընկալման լույսի ներքո. «Բորյան ակամա տարերային էքզիստենցիալիստ էր: Գործելու ընդունակ էր միայն ծայրահեղ իրավիճակներում: Կարիերա անել՝ միայն բանտում: Կյանքի համար պայքարել՝ միայն անդունդի եզրին» [1, 53]: Վայրէջք-վերելքի հավերժական շղթա, որ անհարիր է խորհրդային կարգուկանոնին գերի դարձածների ձանձրալի կյանքին:

Երբ հեղինակն առաջարկում է միասին արտասահման գնալ, պատասխանը անկիրք էր և տխուր. «Այդ ամենն ինձ համար չէ: Հարկավոր է տարբեր հիմնարկներ գնալ: Բոլորին հավատացնել, թե հրեա ես: Անհարմար եմ զգում…»:

Չորս տարվա բաժանումից հետո մեն-մի անգամ է հեղինակը փաթեթ ստանում, որի մեջ երկնագույն ֆուֆայկա էր և մետաղե ծանր խցանահան: Հուզիչ է վերջաբանը. «Մտածեցի, թե կյանքում թանկարժեք ինչ եմ ունեցել: Ու հասկացա. չորս կտոր ռաֆինադ, ճապոնական թանկարժեք սիգարեթներ, երկնագույն ֆուֆայկա և այս խցանահանը…» [1, 55]:

«Համոզիչ կերպարը թե անհատական, թե տիպական, նույնիսկ արքետիպ է, հավերժական առասպելական նախատիպար: Համահունչ է իր ներկայացրած ընդհանուր տիպին և համապատասխանում է սեփական տեսակին: Կենդանի կերպարները զարմանալի ազատություն են դրսևորում, և հեղինակը զգում է նրանց անկախության շարունակական ձգողությունը» [2, 195]:

Թերևս ամենահետաքրքիր պատմությունը կնոջ հետ ծանոթությունն էր (գլուխ 11-րդ), այնքան արտառոց, որ հորինվածք է թվում: Դովլաթովը չի թաքցրել. «Վավերագրական ճշմարտությունը և ճշգրտությունը իմ պատմվածքներում շատ ավելի քիչ են, քան թվում է: Ես շատ բան հորինել եմ: Այնտեղ կան հերոսներ, այնտեղ հոգեբանական պատում կա, կա հումոր: Դա գեղարվեստական գրականություն է, որը ստեղծել է գրողը, ոչ թե կյանքը» [3, 322]:

Կնոջ կերպարը՝ իր աներևակայելի անխռովությամբ և անսահման հանգստությամբ, սեռին անհարիր լռությամբ գուցե շատ տղամարդկանց երազանքը լիներ, բայց հեղինակի աֆորիզմատիպ բնութագիրը. «Լռությունը զորեղ ուժ է: Այն արգելել է պետք՝ որպես բակտերիոլոգիական զենք» [1, 68], ապա համեմատությունը. «Դա

տերևների անցողիկ շրշյունին անվրդով ականջ դնող արմատների լուռ հանգստություն էր», վերջապես խոստովանությունը, որ քսան տարվա համատեղ կյանքից հետո էլ երազում էր բաժանվել կնոջից, և միակ պատճառը հենց այդ «ծայրահեղ անխռովությունն էր», բոլոր հարցերի պատասխանն էին: Նրանց ծանոթությունը զավեշտալի է եղել: Առավոտյան մի կերպ արթնացել էիր թափթփված սենյակում և զգացել, որ մենակ չէ, բազմոցին ինչ-որ մեկը քնած է:

«– Դուք ո՞վ եք:

– Ենթադրենք՝ Լենան. – կանացի ձայնն անակնկալ խաղաղ էր:

– Իսկ ինչպիսի՞ն է Ձեր կարգավիճակը, Լենա:

Լռություն տիրեց: Հետո անխռով կանացի ձայնն ասաց.

– Ինձ մոռացել է Գուրևիչը… Շրջվեք:

Քիթմռութս ծածկեցի լրագրով» [1, 62]:

Հետո տանտիրոջ վերնաշապիկով ու հողաթափերով գնում է լոգարան, հետո նախաճաշում են, անկաշկանդ զրուցում: Հետո հավաքում է իրերը, հագնում կոշիկները և. «Ես գնացի. կգամ վեցից հետո»: Այդ «աբսուրդի թատրոնը», «առօրեականության ու ցնորքի այս խառնուրդը» կրկնվում է պարբերաբար: Փոխվում է անգամ բնակարանի շունչը: Դրսի գայթակղությունները բազում էին, բայց զարմանալիորեն տունը սկսում է ձգել. ուր էլ լինում էր, ժամ առաջ ուզում էր հասնել իր «գժանոցը»: Ապրում էին միասին, բայց շարունակում էին միմյանց անծանոթ մնալ: Նույնիսկ դու-ի չեն անցնում, իսկ մեկ տարի անց ծնվում է դուստրը: Անտրամաբանական է, թե ոչ, փաստ է: «Ես այնքան քիչ գիտեի կնոջս մասին, որ միշտ զարմանում էի: Ապրում էինք աղքատ, հաճախ էինք կռվում: Ես ափերից դուրս էի գալիս. կինս լռում էր…» [1, 68]: Դովլաթովն ամենից խիստ իրեն է միշտ բնութագրում. «Որպես ամուսին խիստ կասկածելի ձեռքբերում էի: Տարիներով մշտական աշխատանք չունեի: Որակազրկված գլամարտիկի խղճահարույց արտաքին ունեի» [1, 67]: Արտասահման մեկնելու նախաձեռնությունը Լենայինն էր, և դա էլ էր աբսուրդ. «Չէ՞ որ ե՛ս էի ատում խորհրդային ռեժիմը: Ի՛մ պատմվածքները չէին տպագրում: Ե՛ս էի գրեթե այլախոհ համարվում» [1, 69]: Կինը Հռոմից ծածկագրված զեկուցագրերի նման բացիկներ էր ուղարկում. «Մայրս անդադար վերընթերցում

էր դրանք: Փորձում էր զգացմունքի որևէ նշույլ գտնել: Ես հո գիտեի, որ անիմաստ է» [1, 69]: Ի վերջո աշխարհի իրական երկու բևեռներից եթե անգամ ընտրում է «անիմաստ ու կիսաֆանտաստիկ» Այնտեղը, սիրտը «հստակ, հարազատ, հեղձուցիչ» Այստեղում է մնում, և Այնտեղի բնությունն էլ, տներն էլ երբեմն հիշեցնում են Այստեղի թաղամասերը: Սա էական մանրամասն է՝ ի պատասխան բազում մեղադրանքների, որ վկայում են հարկադրված որոշում կայացնելը, ավելի ճիշտ՝ երկընտրանքի պարտադրված լուծումը՝ բանտ կամ արտասահման: Ամերիկայում առաջին գիշերվա մռայլ խոհերը փարատվում են առավոտյան: «Զգացի որ մենակ չեմ: «Ո՞վ կա»,– հարցրի: «Լենան,– պատասխանեց հանգիստ կանացի ձայնը: – Շրջվիր»: Դեմքս ծածկեցի ամերիկյան լրագրով: Լենան վեր կացավ, հագավ խալաթն ու հարցրեց. «Թե՞յ, թե՞ սուրճ»[1, 72]: Ամեն ինչ կրկնվում է, միայն լրագիրն է ամերիկյան… «Նշանակալից ապրում փոխանցել՝ ահա թե որն է պատմության կամ սյուժեի խնդիրը» [2, 128]:

Դովլաթովը միջնորդավորված է ներկայացնում հասարակական կյանքը, մարդկային տարբեր բնավորությունների միջոցով բացահայտում նաև իրեն՝ որպես որդու, բարեկամի, ամուսնու և վերջին գլխում՝ հոր: Կաշառող անկեղծության և ոչինչ չգունազարդելու սկզբունքից չի շեղվում նաև այստեղ: Իր իսկ իմիջիայլոց պատումն է՝ տողատակում զգացմունքների հուզիչ շերտը: Դստեր մասին պատումն սկսվում է այսպես. «Մի ժամանակ նա ընդհանրապես չկար: Թեև չեմ կարողանում պատկերացնել դա: Կարելի՞ է պատկերացնել այն, ինչ չի եղել» [1, 72]: Հիշողության պատառիկներ են, որոնցից յուրաքանչյուրը զուգահեռաբար բացահայտում է խորհրդային կարգերում տիրող երբեմն աներևակայելի, երբեմն զավեշտալի անտարբերությունը: Հիվանդ դստեր մոտ թույլ չեն տալիս ոչ ոքի. «փնթի և նույնիսկ խմած» բժիշկը իր հանցավոր անտարբերությամբ միայն ասում է. «Ձեր մորն ու կնոջը մենակ չթողեք: Նրանց կողքին եղեք…»: Ծանոթ դերասանը միջնորդում է, և կնոջը թույլ են տալիս փոքրիկի մոտ մնալ: Եզրակացությունը չի ուշանում. «Այնպես որ խորհրդային պետության դեմ պայքարելու միակ զենքը անհեթեթությունն է» [1, 72]:

Հոր և դստեր հարաբերությունը զարգանում է աստիճանաբար. «Մեծանում է. արդեն երևում է աթոռի հետևից: Ես նրան պետք եմ ու պետք եմ լինելու մինչև վերջ…Ինձ դուստրս լավ էր վերաբերվում: Մի քիչ կարեկցանք, մի քիչ քամահրանք…»: Տարիների հետ ոչինչ չփոխվեց. նույն հարաբերություններն էին. «Զուրկ եմ այն ամենից, ինչն ընդունակ է նրան նվաճել: Ամերիկյան երգիչ հազիվ թե դառնամ: Կամ կինոդերասան: Կամ թմրավաճառ: Մեքենա չեմ վարում: Ռոք երաժշտությամբ չեմ հետաքրքրվում: Անգլերեն վատ եմ խոսում» [1, 75]: Ահա և սերունդների միջև անխուսափելիորեն հայտնված անջրպետը: Տխրության թեթև երանգ կա, բայց մի բան հաստատ է. Դովլաթովը չի կարող փոխվել, նույնիսկ հանուն իր երեխայի: Նա միշտ էլ հավատարիմ է մնալու իր էությանը, ինչպես իր պատկերած կերպարերից շատերը: Սա կյանքի աղը կազմող անհատի հազվագյուտ տեսակ է: Վերջաբանը նման է առանց երգի նահանջի. «Նյու Յորքում ծնվեց որդիս: Նա ամերիկացի է, Միացյալ Նահանգների քաղաքացի: Անունը, պատկերացրեք, միստեր Նիկոլաս Դոուլի է: Ահա թե ինչի հասավ մեր ընտանիքն ու մեր հայրենիքը» [1, 76]:

Գրականություն

1. Դովլաթով Ս., Մերոնք, թարգմ.՝ Լևոն Չիլֆուղարյանի, http://grapaharan.org (Հղումը կատարվել է 05.06.19 թ.):
2. Սյուրմելյան Լ.-Զ., Արձակի տեխնիկա. չափ և խենթություն, Երևան, 2008:
3. Դովլաթով Ս., Միայնակների երթը, Ստեփանակերտ, 2012:
4. Довлатов С., Избранное, Санкт-Петербург, 2005.

Создание образов с позиции писателя и рассказчика на основе новеллистического цикла Довлатова «Наши»

Малумян Гаяне

Резюме

Ключевые слова: *нон-фикшн, нарративная проза, рассказчик, быт, инакомыслящий, мифологический архетип*

Повествовательная проза – narrative prose – жанровый стиль эссе, очерков, отдельная система образов, которые дают возможность Довлатову представить художественный портрет своего рода.

Как рассказчик он не обращается к повествовательным параллелям. Каждый образ типизируется своими внутренними и внешними пропорциями, мировоззрением, стилем.

Авторский комментарий – центральный элемент произведения, так как цель мемуаристики не заключается в объективном воссоздании прошлого, а в суъбективной интерпретации с позиции настоящего.

Новеллам (как и всему творчеству Довлатова) присущ легкий, шутливый специфичный стиль изображения жизненно важных проблем. Ощущается стремление избежания скучного повествования, стремление всестороннего изображения образа без лишних усилий. В завершающем абзаце иногда выявляется характерный для новелл элемент неожиданности, вызывающий противоречивые чувства, отличающийся от хода повествования.

Character Creation in Dovlatov's Series of Stories "Our Folks" from the Writer's and Narrator's Perspective

Malumyan Gayane

Summary

Key words: *non-fiction, narrative prose, storyteller, mode of life, dissident, mythological archetypes*

Narrative prose the genre style of essays, overviews, personalized memoirs enabled Dovlatov to present artistic portraits of his dynasty. As a narrator, he is not bound to apply sequential parallels of the events. Each character is typical of its internal and external proportions, worldview, lifestyle. The author's interpretation is a key element of the work, because the purpose of the memoir is not to objectively restore the past, but rather to interpret from a subjective point of view of the present.

It is very typical of Dovlatov to demonstrate a special feature of a stylish, jolly tone to vital issues in this novel (this is observed also in Dovlatov's entire creations). It is felt that the tendency to represent the image without any unnecessary effort excludes the boredom. The final paragraph, as it is usually observed in novels, sometimes opens up unexpected parenthesis, contradictory emotions, different from the contouring process.

Ներկայացվել է 16.05.2019 թ.
Գրախոսվել է 24.05.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

Роман В. Набокова «Камера обскура»: мотив слепоты и творчесто А. Ремизова

Саакян Эгине
Матевосян Сюзанна

***Ключевые слова**: слепота, зрение, камера, слепая любовь, роман*

Несмотря на напряженные и эмоционально-выраженные личные взаимоотношения А. Ремизова и В. Набокова, между ними все же существовал тесный творческий контакт и аллюзии на творчество друд друга. Особо остро стоял вопрос о восприятии творческого наследия Гоголя. В рассуждениях о Гоголе писатели иногда оказываются очень похожими, что обусловлено их общим литературным мировоззрением. Вопреки общеэмигрантской религиозной трактовке трагической судьбы Н. Гоголя, А. Ремизов и В. Набоков считали, что именно душевная болезнь была залогом его особенного мировидения и писательского дара. Оба оценили мифотворческую склонность Н. Гоголя в создании легенды об исключительной роли А. Пушкина в его судьбе.

Наследие Н. Гоголя послужило текстом-посредником для тайного взаимодействия художественных миров В. Набокова и А. Ремизова. Гоголевская самоирония по поводу фамилии и связанная с ней игра автоссылками также не остались незамеченными обоими писателями с «птичьими фамилиями» [А. Ремизов]. Рассуждая о формах авторского присутствия в тексте, Набоков не без умысла употребляет ''птичьи'' метафоры, считая, что даже «самая примитивная curriculum vitae кукарекает и хлопает крыльями так, как это свойственно только ее подписавшему» [4, 443]. Как известно, фамилии и А. Ремизова и Набоков-Сирина имели орнитологическое происхождение.

Стержневым мифотворческим сюжетом Ремизова также была легенда о ''птичьей'' этимологии его фамилии. В эссе «Тайна Гоголя» художник образно обозначил ''птичье'' и ''демонологическое'' родство с Гоголем, подразумевая уже себя в образе Кикиморы, которую приютил «затейный и большой сказочник

Аука», умевший строить дом «лучше всех лешачьих», подобно тому как «ремез – из птиц первая, вьет гнездо лучше всех гнезд» [6, 58].

Ценностные интенции Ремизова также связаны с представлением о птичьем пере как о знаке писательской незаурядности, не случайно одна из последних подготовленных к публикации книг Ремизова называлась «Книга, написанная павлиньим пером» (1957). Оба писателя, не раз бывавшие в Праге, могли знать «птичью» этимологию чешского слова «upĜchlík» – беженец [7, 117], и, безусловно, проводили образные параллели между своей эмигрантской судьбой и сезонной миграцией птиц [1, 191].

Помимо художественных отсылак у В. Набокова к А. Ремизову и наоборот, встречаются еще и очень много автобиографичных эпизодов с помощью которых легко можно составить мнение о жизни и деятелноости обоих писателей. Особо интересена ремизовская тема в романе «Смотри на арлекинов!» (1974), в котором выводится образ секретарши-машинистки главного героя – писателя В. В., – Любови Серафимовны Савич. С одной стороны, это пародийный собирательный образ жен русских писателей. Имя «Любовь» отсылает к подтексту «Прекрасной дамы» А. Блока, однако в сочетании с фамилией «Савич» (вероятно, это анаграмма имени и фамилии известной революционерки Сары Раич) и отчеством «Серафимовна» оно вызывает ассоциации с С. П. Ремизовой-Довгелло. Вспомним, что герой Набокова отмечает, как «обольстителен был этот сплав «любови» с «Серафимовной», крестным именем раскаявшегося террориста!». Серафима Довгелло, по романной версии автобиографии А. Ремизова, после знакомства с ним разошлась во взглядах с Б. Савинковым – лидером Боевой организации и стала «раскаявшейся террористкой» [4, 443].

Кроме всех прочих тематик и аллюзивных подтекстов, в произведениях В. Набокова и А. Ремизова, часто пересекается мотив слепоты и создает глубокий символический план. В мировом литературном процессе на культурных расстояниях существуют тематически сходные очертания разных степеней сложности – начиная от простого мотива до развернутого сюжета. Фольклорное темати-

ческое пространство довольно обширное. Оно служит материалом для развития как мировой так и русской литературы. Особое место в фольклоре занимает мотив увечья как маркер принадлежности к потустороннему миру. Такие признаки как хромота, кривизна, однорукость, одноногость колдунов, слепота бесов и прочих хтонических сил являются особыми маркерами для описания потустороннего мира с его представителями. Поэтому хтонические духи в фольклорных текстах часто выступают как хромые, кривые, одноглазые, однорукие и одноногие существа. Слепота – устойчивый признак колдуна по русским поверьям, что кроме того связано с представлениями о ложности, неправедности, неправильности, противоположности истине. Подобные одноглазые персонажи потенциально связаны с мотивом слепоты, во многих сюжетах: вспомним классическую форму такой реализации в «Одиссее», где убийство приобретает форму ослепления. Вообще в мифологической слепоте содержится некое качество, заключенное между субъектом и объектом, признак, в равной мере присущий и тому и другому. Так например, в греческой мифологии слепота Феникса уже древними авторами воспринималась как эвфемизм, обозначавший импотенцию [2, 838]. Позиции воспринимающего и воспринимаемого суммированы: слепой – не только невидящий, но и невидимый. В этом плане мифологическая слепота демона сродни его невидимости и передает ту же самую идею труднопреодолимого зрительного рубежа между «нашими» и «иными» мирами [11].

Зрение является важным фактором европейской культуры XVII-XVIII веков. На эту тему не раз обращали внимание такие ученые как Декарт, Локк, Кеплер, Ньютон и др. Изобретение и распространение оптических приборов разного рода, в частности, микроскопа, способствовало развитию этого интереса. Недаром это время называется эпохой Просвещения, оно в буквальном смысле было «веком света». В этот период ориентация на зрительные элементы становится явно выраженной тенденцией также и в области художественной литературы. В истории русской культуры обнаруживается сходная ситуация. После петровских реформ Россия также вступила в эпоху Просвещения.

В художественной литературе тенденции зрительных элементов особенно сильно чувствуются в произведениях конца XIX – начала XX века. В это время было написано множество произведений, связанных с проблемой человеческого зрения. Например, в стихотворении Н.М. Муравьева «Зрение» эта проблема рассматривается с разных аспектов: здесь описывается структура зрительного органа человека, разные виды и функции глаз, в том числе, и как окна, открывающего внутренний мир человека, а также поднимается вызывавшая в то время споры тема «зрение и слепота» [9]. Особенно интересно «Путешествие из Петербурга в Москву» А.Н. Радищева. В этом произведении зрение является не только предметом обсуждения, но и проблема зрения связывается с центральной идеей произведения, то есть идеей Просвещения [8]. В этот период и в последствии тоже увеличивается количество зрительных описаний в русской литературе. Описание света, цветовых изображений и гамм, зрительных приборов приобретают особые прямые и переносные значения в произведениях русских писателей и поэтов. В стороне не остались А. Ремизов и В. Набоков. Кроме всех прочих тематик и аллюзивных предпосылок, в произведениях В. Набокова и А. Ремизова, часто пересекается мотив слепоты и создает глубокий символический план. Так например, в повести «Неуемный бубен» (1909), по мнению А. Ремизова, мотив слепоты не заключает в себе традиционное древнерусское представление, т. е. феномен своего рода бесовства, неуемность, неугомонность, отсуствие меры, а связывается с чувственной любовью, так впрочем и у В. Набокова, это своего рода затмение, разума, слепота. С другой стороны, А. Ремизов опять обращается к творчеству Н. Гоголя и точно также слепоту интерпретирует как особую черту гоголевского персонажа Вия. Многим героям Ремизова, как и ему самому, свойственно ослабленное зрение. Главным героем сборника рассказов «*Подстриженными глазами*» (1923) является сам А. Ремизов. Так, персонаж «Нового года» (1900) по прозвищу Козел на протяжении рассказа жалуется на глаза. Эта деталь свидетельствует о затруднительном общении с окружающими, которое стоновится эмблемой духовной отчужден-

ности с окружающими. Другой персонаж – Кудрин из того же рассказа, у которого также ослаблено зрение, теряет ориентиры в пространстве. Другой близорукий герой рассказа «Опера» (1900) Слякин попадает в нелепую ситуацию, приводящую к аресту, только потому, что из-за слабого зрения плохо ориентируется в пространстве. Таким образом, утрата зрения подается как символ «заброшенности», потерянности человека в мире. Этот мотив выступает тем зловещим символом безысходности, отторжения от мира, которую чувствуют многие герои. Нарушение зрения становится одним из магистральных символов невозможности для человека найти выход из мира-тюрьмы, из своего «одиночного заключения». В отдельных случаях персонаж неспособен воспринимать другого в его целостности, в результате чего происходит редукция восприятия действительности. Особенно это характерно для Кудрина («Новый год»). В силу ослабленного зрения герой не может восстановить целостный облик человека. Не видя лиц, не отличая людей друг от друга, сначала он отгоняет «от книги назойливый палец», потом ему кажется, что «какие-то руки без туловища тащут» его. Так в мире-тюрьме теряется человеческая индивидуальность, а вместе с ней способность идентификации человеческого облика. Таким образом, одиночество и отчужденность как последствие слепоты, А. Ремизовым представляется в прямом смысле, но психологический фактор вводит и раскрывает пределы отчужденного мира, которое обречено на страдания и не берет за основу ни физические отклонения, ни моральное состояние героев. С первого взгляда кажется, что Ремизов не раскрыеат понятие слепоты с новой точки зрения, но как бы парадоксально не звучало, ему удается простым описанием и понятием слепоты как физического отклонения раскрыть психологические стороны данного мотива.

Несколько схож мотив ремизовской слепоты с набоковским, в частности, в произведении «Камера Обскура» (1932) – экспериментальное произведение, где вместе с мотивом зрения и слепоты присуствует художественный мир кинематографа. Об этом говорит уже само название произведения. Камера обскура – это устройство, с

помощью которого получают оптическое изображение объектов.

Заголовок романа играет важную роль для полного раскрытия не только идеи произведения, но и используется для понимания языка кино и для визуального контакта с читателем.

Основной сюжет развивается между солидным, буржуа по имени Бруно и молоденькой девушкой Магдой. Их первая встреча подготавливает развитие действий и уже с первых страниц дает понять читателю, что эти герои из совершенно разных миров. Они разные не только по социальному статусу, но и характеру, манерам, восприятием мира и духовным нравам. Решающим становится их противопоставление именно по этому признаку: жизнь Бруно протекает в «полуслепоте», в тени и в мире темных красок. А Магда – свободна, наивна и полна жизни. Она в расцвете сил и только познает все удовольствия жизни. Ее легкомысленность и открытый взгляд на жизнь являются для нее залогом почти как беззаботной жизни. И это привлекает уже немолодого господина Бруно. Ради нее он бросает семью – жену и дочь. С Магдой он наслаждается чувственной и интересной жизнью. Кажется, что их противоположный мир складывается, но все меняет появление циничного карикатуриста Горна. В нем скрывается противник Бруно. Он бездушен, жесток и азартен. Его образ раскрывается с помощью излюбленного А. Ремизовым и В. Набоковым мотива сна. Его сны ассоциируются с образом «демонического дублера», наделенным чертами озорника и плута. Сон интерпретируется Набоковым двояко: во-первых как воплощение мечты, именно поэтому зачастую герои при физическом уничтожении будто переносятся в свою мечту, в мир Истинный. «Иные миры – это единственное условие существования творческой личности, которую душит реальность. Переход в эти миры осуществляется чаще всего во сне или в смерти героя» [3, 57]. Во-вторых, как трагизм, смерть задается сном героя, который выполняет две основные функции: композиционную – сну придаются черты экспозиции произведения: сон задает основной тон и формирует пафос рассказа, выступает своеобразной парадигмой, развертывающейся впоследствии в сюжет; и прогностическую – предсказы-

вая герою смерть. Сон интерпретируется обоими писателями как реализация смерти. В свою очередь, герои объединены силой воображения, преобразовывают мир, строят свою реальность. Сон является прорывом в данной действительности. В таком случае между реальностью, воспоминанием, мечтой и сном и зрением проводятся параллели, образуется единое метапространство внутреннего бытия личности. В. В. Набоков связывает мотив снаведения и незримости своих героев тем, что показывает сном то, что не видно в реальноти.

В. Набоков расставляет глубокие идейные мотивы, которые не позволяют счесть роман в качестве бональной мелодрамы. Данная сюжетная линия не первая в мировой литературе, по подобным моделям развил свой роман Т. Драйзера «Сестра Керри» (1900). Но ключевым моментом романа В. Набокова стал мотив зрения и слепоты, который он тонко провел по всему роману, медленно делая его центральным. Сперва мотиву слепоты пистелями вводится в виде красок, потом как способ раскрытия мира героев, придавая ему метафорический окрас, затем уже слепота как физическое явление дает роману необычную идейность.

«Любовь слепа» – важная формула для романа В Набокова, которую в своих комментариях ввел В. Ходасевич [10]. Исключительную значимость роман приобретает тогда, когда раскрываются особенности зрения героев: каждый из них что-то видит, что-то не видит. Точно так же как у камеры обскура есть размытые и четкие кадры, видение героев включает поле очевидного, видимого и невидимого. Но зрение Бруно другое. Он не видит, он – чувствует. Эти черты придают его личности глубину, открывают в нем потаенное и неочевидное. А для Горна то же самое видение моральной стороны жизни – всего лишь насмешка. Он не видит того, что видеть не хочет. Он любит наблюдать за скрытостью, за тем, что другие хотят спрятать. Его зрение – безжалостное и беспощадное.

Тем самым, зрение в романе выделяется не только в виде характеристики героев, но и часто выступает за действующее лицо, за второе «я» героев, которое полностью передает их внутренний настрой. Зрение – это не просто мотив, а инструмент, камера

обскура и большая лупа, через которую читатель вместе с героями видит невидимое.

Бруно видит достоинства людей и не видит обмана, читатель – видит обман и это следствие доверчивости Бруно и метод раскрытия, способ догадки и размышления для читателя. Сначала он не замечает мелких недостатков любимой и только в финале романа, за несколько мгновений до смерти, происходит его интуитивное прозрение: «Как душно, нельзя больше вытерпеть, она меня убила, какие у нее выпуклые глаза, базедова болезнь, надо все таки встать, идти, я же все вижу, – что такое слепота? отчего я раньше не знал… но слишком душно булькает, не надо булькать, еще раз, еще, перевалить, нет, не могу…» [5, 392-393].

Зрение в романе В. Набокова связано с катастрофой и также, как у А. Ремизова, с физическим пороком: не зря дорожное происшествие, из-за которого Бруно слепнет, видят сразу многие: старуха, собирающая поблизости ароматные травы, летчик в почтовом дирижабле, Магда, проезжавшие мимо велосипедисты, сам Бруно. Этот эпизод в романе выделен, подчеркнут – дан многократно, с нескольких точек зрения. Поэтому ясно, что, сблизившись с Магдой, приняв ее стиль жизни, в мире зримых радостей, у всех на глазах он вступает на смертельный путь. В романе он гибнет дважды, в первый раз – когда теряет зрение, когда жена обращается с ним как к нежити, без имени. А во второй раз – когда захотев отомстить Магде за измену, погибает бездушным и коварным выстрелом возлюбленной. В обоих случаях зрение – решающий фактор. Имея прекрасное чутье восприятия прекрасного, начиная с душевного и кончая профессией, Бруно, поддался соблазну и слепоте чувств, рассмотрел только эскиз, который был прекраснее картины и в итоге – погубил себя.

Таким образом, вводя мотив слепоты В. Набоков кардинально меняет направление и развязку сюжетной линии. В центральной фабуле романа «Камера обскура» стоит истории несчастного героя и несчастной любви. Бруно бросает свою семью ради «слепой любви» и вместо ожидаемого счастья ему ничего не достается. В. Набоков

строго обходится со своим героем, тем самым примыкая к А. Ремизвоу, который своих героев ''выбрасывает'' за пределы ''обжитого'' мира существом, обреченным на одиночество, страдания или смерть. Казалось бы слепота – это просто физический порок, без особых психологических сторон, но выделяя мотив слепоты в своих произведениях А. Ремизову и В. Набокову удается создать тот разрушающий пласт – размыто-видимый мир, в котором страдают их герои из-за зрения.

Литература

1. Блищ Н. Л. А. М. Ремизов и русская литература XIX-XX вв.: рецепция, рефлексия, авторефлексия. Минск : БГУ, 2013. – 191 с.
2. Грейвс Р. Мифы Древней Греции. Екатеринбург: У- Фактория, 2005. – 1008 с.
3. Клименко А. В. К вопросу о творческом методе Владимира Набокова // Филологические науки. Вопросы теории и практики. 2008. № 2. – С. 55-57.
4. Набоков В. В. Американский период. СПб.: Симпозиум, 1999. – С. 443.
5. Набоков В. Камера Обскура // Русский период. Собрание сочинений В 5 Т. Т. 3. СПб.: Симпозиум, 2006. – С. 250-393.
6. Ремизов А. М. Огонь вещей. М.: Советская Россия, 1989. С. 58.
7. Фасмер М. Этимологический словарь русского языка. М.:, 1964-1973. С. 2912.
8. Радищев А. Н. Путешествие из Петербурга в Москву [Электронный ресурс] – Режим доступа: http://lilibrary.ru/text/1850/index.html
9. Муравьев М. Н. Зрение [Электронный ресурс] – Режим доступа: http://rvb.ru/18vek/muravjov
10. О взаимоотношениях *Ходасевича* и В. В. Набокова см. в коммент. к статье "О Сирине" [Электронный ресурс] – Режим доступа: http://hodasevich.lit- info.ru
11. Образы потустороннего мира в народных верованиях и традиционной словесности. Знахарство [Электронный ресурс] – Режим доступа: http://fantlab.ru

Վ. Նաբոկովի «Կամերա օբսքուրա» վեպը. կուրության մոտիվն ու Ա. Ռեմիզովի ստեղծագործությունները

Սահակյան Հեղինե
Մաթևոսյան Սյուզաննա

Ամփոփում

Հանգուցային բառեր *՝ կուրություն, տեսողություն, խուց, կույր սեր, վեպ*

Հոդվածում ամփոփված է տեսողական մոտիվը Վ. Նաբոկովի «Կամերա օբսքուրա» վեպի և Ա. Ռեմիզովի ստեղծագործություններում նույն մոտիվի առկայությունը, որտեղ գլխավոր սյուժետային գծի միջոցով շեշտադրված է կուրությունը ոչ միայն որպես ֆիզիկական արատ, այլև սոցիալ-հոգեբանական ճնշում: Հատկապես առանձնանում է Ա. Ռեմիզովի և Վ. Նաբոկովի ստեղծագործական կապը, նրանց գաղափարական նույնատիպությունը, ինչպես նաև նշվում են Նաբոկով-Սիրինի կեղծանվան առաջացման և Ա. Ռեմիզովի որոշ կենսագրական մոտիվների նմանությունները: Հետաքրքրական է այն փաստը, որ թե՛ Ա. Ռեմիզովի, թե՛ Վ. Նաբոկովի ստեղծագործություններում տեսողության կորուստը նախ դիտարկվում է որպես արատ՝ իր պաճառած բոլոր անհարմարություններով, ապա շեշտադրվում է սոցիալհոգեբանական ճնշումը, որին ենթարկվում, և հետևանքների կրողն են հանդիսանում Վ. Ռեմիզովի պատմվածքների ու Վ. Նաբոկովի «Կամերա օբսքուրա» վեպի հերոսները: Անմասն չի մնում նաև այն տարածված կարծիքը, որ «սերը կույր է»: Չնայած «Կամերա օբսքուրա» վեպի սյուժեի մշակման հարուստ պատմությանը «սերը կույր է» հասկացույթը հանդիսանում է սյուժեի եզերապատում, որի շուրջ զարգանում է պատմությունը: Վ. Նաբոկովին հաջողվում է ներկայացնել կուրությունը ուղիղ և փոխաբերական իմաստներով: Նախ նա իր հերոսին զրկում է տեսողությունից, ապա պատկերում նրա համար բոլորովին այլ իրականություն, որը մինչ այդ անտեսանելի էր թվում:

Հետազոտության նպատակն է ցույց տալ, թե ինչ տեղ է զբաղեցնում և ինչ դերում է հանդես գալիս տեսողական մոտիվը Ա. Ռեմիզովի և Վ. Նաբոկովի ստեղծագործություններում, մասնավորապես՝ գաղափարական առումով ինչպես է փոփոխվում ստեղծագործությունների սյուժեն:

Հոդվածում նկարագրվում են Ա. Ռեմիզովի պատմվածքների և Վ. Նաբոկովի «Կամերա օբսքուրա» վեպում տեղ գտած տեսողական այն մոտիվները, որոնք ստեղծագործության գաղափարական տեսանկյունից որոշիչ են հերոսների աշխարհընկալման մեջ:

Հովածում վերլուծության է ենթարկվում նաև տեսողական մոտիվը՝ որպես ռուս ժողովրդական մշակույթի մաս, թե ինչպես է գրականության և դիցաբանության մեջ պատկերվում և ընկալվում տեսողությունից զուրկ արատավոր անձը:

The Novel V. Nabokov “The Camera of the Obscura”: the Motive of Blindness and the Creativity of A. Remizov

Sahakyan Heghine
Matevosyan Syuzanna

Summary

Key words: *blindness, vision, camera, blind love, novel*

The visual motive is summarized in the article V. Nabokov's "Camera Obscura" novel and the existence of the same motive in Remizov's works, where blindness is not only a physical defect, but also social-psychological pressure through the main line of the plot. Particularly stands out A. Remizov's and V. Nabokov's creative connection, their ideological identities, as well as the appearance of Nabokov-Sirin's pseudonym, the similarities of some of the biographical motifs of Remizov. Interestingly, the fact that in A. Remizov or in V. Nabokov's works, the loss of vision is first viewed as a disadvantage of all the inconveniences, and the social-psychological pressure is emphasized and the bearer of the consequences in A. Remizov stories and heroes of V. Nabokov's “Camera Obscura ‘ novel. The common opinion that "love is blind" does not go unnoticed. Despite the rich history of the plot of the novel “Camera Obscura,” the concept of “love is blind” is the plot of around which history is developing. V. Nabokov succeeds in presenting blindness in direct and metaphorical meanings. First, he deprives his hero of sight, and then depicts a completely different reality for him, which is invisible before.

The purpose of the research is to show the place and the role of the visual motivation in Remizov’s and V. Nabokov's works, in particular, how does the plot of the works change in the ideological sense?

The article describes A. Remizov's short stories and the visual motifs in V. Nabokov's “Camera Obscura” novel, which are ideological in terms of creativity, are perceived in the perception of heroes.

The pastoral analysis is also a part of the visual motive as part of the Russian folklore, how a vicious person deprived of sight and perceived in literature and mythology.

Ներկայացվել է 03.06.2019 թ.
Գրախոսվել է 10.06.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

Տագնապներ վասն հիշողության

Փիլոյան Վալերի

Հանգուցային բառեր *՝ քաղաքակրթություն, Հրանտ Մաթևոսյան, Ջորջ Օրուել, Օլդոս Հաքսլի, Չինգիզ Այթմատով, մանկուրտ, հիշողության խեղաթյուրում, հիշողության պահպանություն*

Ժամանակն իմաստավորելու գործառույթը գրականության պարտավորություններից մեկն է: Այդ գործառույթին հետամուտ՝ գրականությունն անում է հնարավորինն ու անհնարինը՝ պատկերելու համար ժամանակը: Այս իմաստով ժամանակն իրեն պահապան է կարգել հիշողությանը, այնինչ այդ հիշողությունը ենթակա է ոչ միայն պահպանման, այլև ձևախեղման:

Հիշողությունը քաղաքակրթության մեծագույն ձեռքբերում կարող ենք գիտակցել, սակայն այդ նույն քաղաքակրթությունը կարող է հակառակվել հիշողությանը և թշնամանալ նրա հետ:

«Մարդ ու անասուն իրարից ջոկվում են հիշողությամբ: Հիշողությունը դրած է անասունի և մարդու արանքում: Հիշողության մեջ ես, ուրեմն վառվում ես, մարդ ես, հաշիվներ ունես, անհանգիստ ես – հիշողության մեջ չես՝ հրե՛ն բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների, իսկ հորթին երեկ են մորթել» [1, 458]: Գեղջկուհու բարձրաձայնած բազմաձայնության մեջ տեղ գտած և այնտեղից զատված պատառիկը շեշտադրում է քաղաքակրթական կարևոր խնդիր ու գնահատական՝ կապված հիշողության հետ: Հիշողությունը ներկա ժամանակ է, որ ներառում է մարդու և մարդկության նախընթաց փորձը, հիշողությունը նաև ապագայի երաշխավոր է, առանց որի լավագույն դեպքում կնմանվենք խավարում խարխափողի: Հիշողությունը մարդ և ազգ է ձևավորում, առանց որի ազգը կարող է վերածվել կենսաբանական զանգվածի. «Հիշողությունից բուժում չկա, հերս: Հիշողությունը բուժած մարդը հիշողություն չունեցողն է: Իսկ հիշողություն չունեցողն արդեն մարդ չէ... Ոչ էլ ազգն է՝ ազգ... Տգեղ ենք, կոնատ ենք, ընկնավոր ենք, թունոտ ենք, մեծամիտ ենք թե վախկոտ՝ էս ենք: Աշ-

խարհի ստեղծածն ենք» [2, 200][1]: Ոչ միայն աշխարհի, այլև հիշողության ստեղծածն ենք:

Մարդու, հասարակության վերաբերմամբ տագնապները գրականության նյութ են դառնում անընդհատ ու ամենուր: Նաև այս տագնապից է խմորվել Ջորջ Օրուելի «1984» վեպը, որից էական է թվում հետևյալ դիտարկում-մտասևեռումը.

«– Եթե անցյալ գոյություն ունի, ապա՝ որտե՞ղ:

<...>

– Մտքում: Մարդկային հիշողության մեջ:

– Հիշողության մեջ: Շատ լավ: Մենք՝ կուսակցությունը, վերահսկում ենք բոլոր արձանագրություններն ու հիշողությունները: Հետևաբար՝ վերահսկում ենք անցյալը, ճի՞շտ է» [3, 264]:

Հետևաբար՝ քաղաքակրթության առաջընթացը կամ հետընթացը ենթադրում է հարաբերության որոշակի շրջանակ քաղաքակրթության և հիշողության (անցյալի) գոյության միջև: Սոցռեալիզմի ձևավորման նախնական փուլում՝ պրոլետկուլտի դրսևորման ընթացքում, անցյալի մերժումը իր դրսևորմամբ նախնական փուլում էր. մերժվում էին Պուշկինն ու Թումանյանը, Տերյանն ու այլք (գոնե մեր շրջանակում): Այնուհետ փորձեցին մերժել գաղափարներ ու տեսություններ, մարդուն և մարդկային հասարակության ողջ ընթացքը: Սրա արդյունքում համակենտրոնացման ճամբարներ հայտնվեցին, ոչնչացվեցին տասնյակ միլիոնավոր մարդիկ: Բայց սա էլ նորություն չէր, որովհետև նախորդած ժամանակներում էլ ոչնչացվեցին հնդիկներ Հնդկաստանում և հնդկացիներ՝ Ամերիկայում, սևամորթներ՝ Աֆրիկայում և ուղղակի մարդիկ՝ աշխարհի չորս ծագերում: Սա հասարակական ֆորմացիայի ծնունդ չէ, այլ քաղաքակրթության և վայրենության հերթական կամակորությունը. ոչնչացնել այն, ինչի ծնունդ ես. սա մայրասպանություն է: Այս իմաստով Ջ. Օրուելի շարադրանքը հորինվածք չէ, այլ իրա-

[1] Հիշողության խնդիրն իր ինքնատիպ արտահայտությունն ունի նաև հեղինակի «Ես ձեր հիշողությունն եմ» պատմվածքի մեջ:

կանության պատկերում, սա հակաուտոպիա չէ, այլ ամենադաժան ռեալիզմ, սա կեղծ իրականություն չէ, այլ ամենաանկեղծ 20-րդ դար: Ականջալուր լինենք Ջ. Օրուելի հաջորդ պատկերին. «Վախի ու դավաճանության աշխարհը չարչարանք է, տրորողների ու տրորվողների աշխարհ, աշխարհ, որը բարեփոխվելով ոչ թե պակաս, այլ ***ավելի*** անգութ կդառնա: Մեր աշխարհում առաջնթացն ավելացնելու է ցավը: Հին քաղաքակրթությունները պնդում էին, որ հիմնվել են սիրո կամ արդարության վրա: Մերը հիմնված է ատելության վրա: Մեր աշխարհում չեն լինի այլ զգացմունքներ՝ բացի վախից, ցասումից, հրճվանքից ու ինքնանվաստացումից: Մենք կոչնչացնենք մնացած ամեն ինչ: Արդեն արմատախիլ ենք անում մտածողության եղանակները՝ նախահեղափոխական շրջանի մնացուկները: Կտրել ենք կապերը երեխայի և ծնողի, մարդու և այլ մարդու, տղամարդու և կնոջ միջև: Ոչ ոք չի համարձակվում վստահել կնոջը, երեխային կամ ընկերոջը: Բայց ապագայում չեն լինի ո՛չ կանայք, ո՛չ ընկերներ: Ծնվելուն պես երեխաներին կխլեն մայրերից, ինչպես ձուն են հավից առնում» [3, 284-285]:

Աշխարհն ավելի անգութ է դարձել, առաջընթացն ավելացրել է ցավը, որովհետև քաղաքակրթությունը հենվում է ատելության վրա, ուր զգացմունքներ են վախը, ցասումը, հրճվանքն ու ինքնանվաստացումը: Ըստ էության մերժվում է անցյալի վերացական գոյությունը՝ հիշողությունը: Եվ Ջ. Օրուելի դիտարկումների հաջորդ շղթան դառնալու է հիշողություն այս վեպի գրությունից տասնյոթ տարի առաջ հրատարակված վեպի՝ Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ» երկի, ուր չկան ծնող-երեխա, մարդ և այլ մարդ, տղամարդ-կին հարաբերությունները, և «Ծնվելուն պես երեխաներին կխլեն մայրերից, ինչպես ձուն են հավից առնում»: Ելակետ դարձող այս պայմանականությունից ենք փորձում դառնալ Օլդ. Հաքսլիի վեպին:

Վեպը բնութագրվել է որպես «ուտոպիական վեպ-ֆանտաստիկա» (Վ. Իվաշևա) [4, 122], «ֆանտաստիկական ուտոպիա» (Վ. Իվաշևա) [4, 164]: Ներկայացված է ստանդարտացված և մեխանիկացված հասարակություն, ուր մարդը չի ծնվում, այլ մեքենա-

յացված արտադրության արդյունք է, «անոթազատվում» է, արվեստը տեղ չունի այնտեղ, գիտությունը ծառայում է կոնկրետ նպատակների, այլ ոչ թե հանուն մարդու բարօրության, որովհետև մարդը ըստ էության չկա, այլ կա մարդանմանների դասակարգում-շերտավորում ալֆաների, բետաների, գամաների, դելտաների... Սրանք եթե ունեն գիտության և տեխնիկայի ընձեռած տեղափոխման, սնվելու, աշխատելու, թմրանյութի չափաբաժին ստանալու հնարավորությունները, ապա չունեն հիշողություն, ինքնուրույն մտածելու կարողություն և հնարավորություն, չգիտեն մայր և ծնունդ բառերը, ըստ էության կենսաբանորեն մարդ, գործառույթով ռոբոտներ են «բանական» հասարակության մեջ, «աշխատում են մրջյունների պես» (Ի. Վ. Կաբանովա) [5, 325], սակայն դրանից հետո թմրանյութի շնորհիվ չունեն հոգեբանական խնդիրներ և ապրում են սպառողական հոգեբանությամբ՝ հին «սնունդ և զվարճանքներ» կարգախոսով: Եվ միայն հեռու ռեզերվացիաներում դեռ պահպանվում է բնական մարդկային վերարտադրությունը, դեռ հիշում են մայր, հայր, արվեստ, հավատ, Շեքսպիր, նմանատիպ բառեր: Եվ «չքնաղ նոր աշխարհի» «անառակ որդին»՝ Բուծման և բեղմնավորման կենտրոնի տնօրեն ալֆա Թոմասի (Թոմաքին) և ոմն Լինդայի խառնակությունից ծնված Ջոն Վայրենին է փորձում հակադրվել այս հեշտ տրվող քաղաքակրթությանը, որովհետև հիշողության տեր է:

«Չքնաղ նոր աշխարհ» վեպի պայմանականության մեջ դասական իմաստով գագաթնակետը ալֆա Մուստաֆա Մոնդի և մարդու պես ծնված Ջոն Վայրենիի զրույցն է, որի ընթացքում հնչում է վերջինի ցանկությունը.

«Բայց ես չե՛մ ուզում հարմարավետություն: Ես Աստծո՛ւն եմ ուզում, պոեզիա՛ եմ ուզում, իրական վտանգ եմ ուզում, ազատությո՛ւն եմ ուզում, առաքինությո՛ւն եմ ուզում: Ես մե՛ղք եմ ուզում: <...> Ես պահանջում եմ դժբախտ լինելու իրավունք:

– Հավելե՛ք դրան տգեղ ու անկար դառնալու իրավունքը, սիֆիլիս ու քաղցկեղ ձեռք բերելու իրավունքը, քաղցած մնալու, չքավոր

լինելու իրավունքը, վաղվա օրվա մշտական անորոշության մեջ մնալու իրավունքը, որովայնային տիֆով հիվանդանալու իրավունքը, ամեն տեսակի համր ցավից տանջվելու իրավունքը:

Լռություն տիրեց:

– Ես պահանջում եմ դրանք բոլորը,– վերջապես ասաց Վայրենին» [6, 289]:

Օլդոս Հաքսլիի պատկերած «Չքնաղ նոր աշխարհում» (կապակցությունն առնվել է Վ. Շեքսպիրի «Փոթորիկը» երկից, արարված հինգերորդ, տեսարան առաջին[2] [7, 112]) իր որոշ ժամանակ ներկայությունից ու մեկուսացած ապրելուց հետո Ջոն Վայրենին ինքնասպան է լինում՝ չընդունելով այդ աշխարհի իրողությունները ու պայմանականությունները, որովհետև այստեղ չկա շեքսպիրյան կրքերի ու զգացմունքների, մարդկային հարաբերությունների աշխարհը, չկան Աստված ու հավատք, սեր և ծնունդ, չկա կյանք, չկա հիշողություն:

Նկատվել է, որ նրա «վեպերը իրենցից մեխանիզմներ են ներկայացնում՝ գաղափարները գործի դնող» [8, 76], «Հաքսլին երբեք ըստ էության չի ձգտել ընդարձակել արձակի սահմանները» [8, 87], և «Հաքսլիի մոտ մենք լոկ խամաճիկների խառնաշփոթ հրմշտոց ենք տեսնում: Տիկնիկները խաղում են, թերևս, մեծ դրամա, սակայն այն մեզ չի հուզում. խաղում են տիկնիկները, բայց ոչ մարդիկ: <...> Ամենն, ինչ գրել է Հաքսլին «Կոնտրապունկտից» հետո, ընթերցողի մոտ լուրջ կասկած է ծնում, որ հիմա արդեն անձամբ Հաքսլիին հետաքրքրում են լոկ սուր զգացողությունները և ոչ ավելին» [8, 89]: Հետաքրքիրն այն է, որ Օլդոս Հաքսլիի մասին իր խոսքում Ուոլտեր Ալլենը ոչ մի անգամ չի հիշատակում «Չքնաղ նոր աշխարհը», սակայն այս խոսքը վերաբերում է ողջ ստեղծագործությանը, հետևաբար՝ նաև վեպին:

[2] Թարգմանիչն այս հատվածը շարադրել է. «Որքա՜ն սիրուն է մարդկային ցեղը, ազնի՜վ նոր աշխարհ, Որ իր մեջ ունի այսպիսի մարդիկ», որը, եթե ուղղորդում ենք Հաքսլիի պատկերած աշխարհին, ապա պարոդիա կարող է գիտակցվել:

Հիշողության կորստի և այդ երևույթի դեմ պայքարի թեման «մոգական ռեալիզմի» պայմանականությունների շրջանակում արծարծվել է նաև Գ. Գ. Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» վեպում [9, 53-56]:

Մարդու և հիշողության հարաբերության խնդիրն իր արտահայտությունն ունի Չ. Այթմատովի «Եվ դարից երկար տևում է օրը» վեպում՝ որպես մանկուրտի պատմություն՝ իր ասելիքով խորունկ, զգացմունքային մեծ տարողությամբ, որ ասես վեպ է վեպի մեջ: Այթմատովը բարբարոսական ժամանակներից բերում և մարդու վաղվա հիշողությանն է փոխանցում այն: Թշնամին ոչ միայն գերեվարում, այլև փորձում է ստրկացնել նվաճվածներին, և այդ նպատակով «ահավոր փորձությամբ ոչնչացնում էին ստրուկի հիշողությունը» [10, 125]: Այդ նպատակով նոր մորթված ուղտի կաշի են հագցնում ստրուկի գլխին, որ չորանալով կամ սպանում էր մարդուն, կամ մարդը «ընդմիշտ զրկվում էր հիշողությունից, դառնում մանկուրտ՝ ստրուկ, որ չի հիշում իր անցյալը» [10, 126]: Այթմատովը ոչ միայն պատկերում, այլև հընթացս մեկնում և վերլուծում է ասվածը. «Մանկուրտը չգիտեր ով է ինքը, որտեղ է ծնվել, չգիտեր իր անունը, չէր հիշում մանկությունը, հորը, մորը, մի խոսքով մանկուրտը չէր գիտակցում, որ ինքը մարդկային էակ է: Մանկուրտը, զրկված լինելով սեփական «եսի» գիտակցումից, տնտեսական տեսակետից ուներ բազմաթիվ առավելություններ: Նա հավասարազոր էր անլեզու անասունի, որովհետև կատարելապես հնազանդ էր և անվտանգ: Երբեք չէր մտածում փախուստի մասին» [10, 127]: Ըստ էության բարբարոսությունը գտել է այն եղանակը, որի միջոցով կարելի է մարդուց «խլել նրա հիշողությունը, ավերել նրա գիտակցությունը, արմատախիլ անել այն, ինչ ապրում է մարդու հետ մինչև վերջին շունչը, մնալով նրա միակ ձեռքբերումը, և նրա հետ էլ իջնում է գերեզման, անմատչելի մնալով ուրիշներին: Բայց քոչվոր ջուանջուանները իրենց խավարամիտ պատմությունից դուրս բերելով բարբարոսության ամենադաժան ձևը, ոտնձգություն են արել մարդու այդ նվիրական էության վրա նույնպես: Նրանք գտել

էին ստրուկներից կենդանի հիշողությունը խլելու միջոցը, դրանով իսկ մարդկային բնությանը պատճառելով հնարավոր և անհնարին բոլոր չարագործություններից ամենադաժանը» [10, 128]: Եվ «կողոպտված հիշողությունն անդարձ կորցնում էր անցյալի թելը» [10, 129]: Այթմատովի շարադրանքը հյուսվել է էպիկական պատումի սկզբունքներով՝ տեղ թողնելով վեհության ու ողբերգության համար: Սակայն սա կոնկրետ ճակատագիր է, որ ընթերցողի միտք ու մտորումներում կարող է ընդհանրացումների տանել:

Հիշողության խնդրին է անդրադառնում նաև Հր. Մաթևոսյանն իր «Խումհար» («Կենդանին և մեռյալը») վիպակում: Մաթևոսյանի համար ստեղծագործական սկզբունք և ելակետ է կոնկրետին պատկերելը [տե՛ս «Ի սկզբանե էր բանն...» ինքնադիմանկարը, 1, 3-17]: Սակայն այս «սցենարական նախանյութի մեջ» կա կոնկրետ խնդիրը, որ իդեա չէ անգամ, և չկան կոնկրետ կերպարներ: «Խումհար» վիպակի գլխավոր կերպար Արմեն Մնացականյանը այլ սցենարական տարբերակների շարքում կուրսի ղեկավար Ի. Վաքսբերգին ներկայացնում է պայմանականորեն «Մրջյուններ» սցենարի հայտը. «Ես մրջյունների մասին եմ պատմում, Իվան Միխայլովիչ: Գերի են տանում, բանեցնում են, իսկ գերին դու մի ասա այնքան էլ մրջյուն չի, համարյա թե մարդ է - կարոտում ու ուզում է փախչել, կարոտում ու փախչում՝ զզվեցնում է, կարծես միևնույն չի թե որտեղ է պարկեր շալակելու: Եվ բռնում ու զինվորները վիզը կծում են, մկրատը գցում ու կտրում են վիզը: <...> Գերի բանվորի վիզը՝ պահակ զինվորները: Լավ չի աշխատում, կարոտում ու փախչում է, կարոտում ու փախչում է սրիկան: Ինչի՞ն է կարոտում – իր հաստագլուխ եղբայրներին, իրենց նեղ փողոցներին, ջրի իրենց արահետին՝ որ գնում, իջնում, բարձրանում, ոլորվում, մասրենու արմատի տակով անցնում... Եվ որպեսզի մյուս անգամ այդ գերիները շատ էլ գլուխ չտանեն իրենց կարոտով, ոչ թե կենդանի մրջյուններ, այլ նրանց ձվերն են ավարում հաղթողները: Գալիս այստեղ ձվերից բանվորներ են ծնվում ու աշխատում են ու հավիտյան էլ չեն հասկանում, որ գերի են, որ զինվոր էին ծնվելու, որ

ուրիշ տեղ է իրենց հայրենիքը» [1, 347]: Այս դեպքում էլ կարևորը հիշողության խնդիրն է, և նրանից են ածանցվում մյուս բոլորը՝ ըմբոստությունը, կարոտը, փախուստը...

Սակայն սա էլ տեղ է գտել մարդկանց շրջանում, երբ Աֆրիկայից սևամորթներ էին «արդյունահանում» Ամերիկա, երբ նորածին ու չափազանց մանուկ երեխաներ էին թրքացնում ու քրդացնում, մինչ այդ ենիչերի դարձնում... Նման մեկի մասին ակնարկում է Մաթևոսյանն իր «Թափանցիկ օր» երկում [11, 339-340]:

Ռ. Բրեդբերին իր «Տարագիրները» [12, 206-223] պատմվածքում փաստում է, որ գրողի մասին հիշողությունն անհետանում է, երբ այլևս նրա գիրը, ուրեմն՝ նաև ընթերցողը չկա: Կա նաև մեկ այլ խնդիր, որ արծարծում է Ջ. Օրուելը իր վեպում՝ անցյալի խեղաթյուրում-վերափոխումը, որով խմբագրվում և վերախմբագրվում է հիշողությունը: Նույն պայմանականությունը տեղ է գտել Գ. Գ. Մարկեսի վեպում՝ կապված երեք հազարից ավելի մարդկանց կոտորածի և այդ իրողության մոռացության հետ [9, 324-326]: Եթե անցյալն առարկայանում է դեպքուդիպվածով, փաստով, իրողությամբ, ապա եղածի հետագա չգոյությունը այլևս հիշողության նյութ չի կարող դառնալ: Հիշենք Հր. Մաթևոսյանի «Տերը» վիպակից հատվածը: Տասնյակ տարիներ ճյուղատարած ապրած տանձենին արմատախիլ է արվում, և այն քարշ են տալիս սղոցարան. «Մեր զգացմունքին հարազատ մի միտք էլ բժշկի մյուս խոսքն էր. «Կար ու ահա չկա. տեսարանը փոխվեց. էսօրվա ծնունդ հովըտեցին կասի էնտեղ տանձի չի եղել»» [13, 375]: Այլևս չկա ծառը, չի լինելու նաև ծառի հիշողությունը:

Փաստորեն այստեղ՝ հիշողության փնտրտուքների խաչմերուկում է, որ իրար են հանդիպում տարբեր մշակույթների ու ժամանակահատվածների հեղինակներ՝ Ջ. Օրուել և Օ. Հաքսլի, Չ. Այթմատով և Հր. Մաթևոսյան, Վ. Բելով (հիշենք «Պրիվիչնոյե դելո» («Էս է») վիպակի՝ Ռոգուլյա կովին նվիրված գլուխը) և Վ. Ռասպուտին (հիշենք Մատյորա գյուղի ու կղզու հետ կապված հեղինակային տագնապները) և շատ ուրիշներ՝ դառնալով մարդկային հիշո-

ղության անդուլ պահապաններ, դեմ գնալով բարբարոսության ու «քաղաքակրթության»՝ հիշողության դեմ արշավանքներին, որովհետև տագնապ կա, թե «ըստ մագաղաթների մարգարեության փոթորիկը պիտի հողին հավասարեցնի ու ջնջի մարդկանց հիշողությունից թափանցիկ (և կամ ցնորական) քաղաքը, և որ մագաղաթներում գրի առած ամեն ինչը երբեք և ոչ մի անգամ չի կրկնվելու այլևս» [9, 438]:

Գրականություն

1. Մաթևոսյան Հր., Վիպակներ, Երևան, 1990:
2. Հովսեփյան Ռ., Ծիրանի ծառերի տակ, Երևան, 2006:
3. Օրուել Ջ., 1984, թարգմ.՝ Աստղիկ Աթաբեկյանի, Երևան, 2012:
4. Ивашева В., Литература Великобритании XX века, М., 1984.
5. Зарубежная литература XX века (под ред. В. М. Толмачева), 2003.
6. Հաքսլի Օլդոս, Չքնաղ նոր աշխարհ, թարգմ.՝ Լիլիթ Հայրապետյանի, Երևան, 2017:
7. Շեքսպիր Վ., Երկերի լիակատար ժողովածու 39 գրքով, գ. 4, «Փոթորիկը», թարգմ.՝ Հովհաննես Մասեհյանի, Երևան, 1998:
8. Аллен У., Традиция и мечта, М., 1970.
9. Մարկես Գ. Գ., Հարյուր տարվա մենություն, թարգմ.՝ Ռ. Հովսեփյանի, Երևան, 1979:
10. Այթմատով Չ., Եվ դարից երկար տևում է օրը, թարգմ., Սոֆի Ավագյանի, Երևան, 1983:
11. Մաթևոսյան Հր., Երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, 1985:
12. Բրեդբերի Ռ., 451 աստիճան ըստ Ֆարենհայթի, թարգմ.՝ Լևոն Անանյանի, Երևան, 1986:
13. Մաթևոսյան Հր., Տերը, Երևան, 1983:

Тревоги во имя памяти

Пилоян Валерий

Резюме

Ключевые слова: *цивилизация, Грант Матевосян, Джордж Оруэлл, Олдос Хаксли, Чингиз Айтматов, манкурт, искажение памяти, сохранение памяти*

Прогресс или регресс цивилизации предполагает определенный круг взаимоотношений между цивилизацией и существованием памяти (прошлом). Память — величайшее приобремление, однако эта же цивилизация может противиться памяти и враждовать с ней. Память — настоящее время, которое включает предшествующий опыт человека и человечества; память также гарант будущего, без которого, в лучшем случае, люди уподобятся блуждающим во тьме. Память формирует человека и нацию, без которой нация может превратиться в биологоческую маску. Тревоги человека об обществе становятся литературным материалом всегда и везде. К вопросам памяти обращаются Дж. Оруэлл, О. Хаксли, Г.Г. Маркес, Ч. Айтматов, Гр. Матевосян и другие, становясь хранителями человеческой памяти, противостоящими нашествиям против памяти.

Alerts for Memory

Piloyan Valeri

Summary

***Key words**: civilization, Hrant Matevosyan, George Orwell, Aldos Haxley, Chingiz Aytmatov, mankurt, memory distortion, memory protection*

The progress or retrogression of civilization implies a certain range of relationships between the existence of civilization and the memory. Memory is the greatest achievement of civilization, but that same civilization can resist the memory and become hostile to it. Memory is at present presenting the experience of man and mankind, and memory is also a guarantee of the future, without which we will be considered the best in the darkness of the eclipse. Memories form a human being and a nation without which the nation can turn into a biological mass. Human and public concerns are a matter of literature, wherever and whenever, and the problem of memory refers to G. Orwell, A. Haxley, G. Marquez, Ch. Aytmatov, Hr. Matevosyan, others, becoming guards of human memory, against the memory attacks.

Ներկայացվել է 07.05.2019 թ.
Գրախոսվել է 15.05.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ

HISTORY

Պարենային խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1919 թ. հունվար – 1920 թ. նոյեմբեր)

Ղուլյան Յուրիկ

Հանգուցային բառեր՝ *Հայաստանի կառավարություն, Վրաստան, ԱՄՆ, դիվանագիտական ներկայացուցչություն, պարենային ճգնաժամ, ցորեն, բոլկոտ, ապրանք*

1919 թ. հունվարի դրությամբ Հայաստանի Հանրապետության պարենային վիճակը շարունակում էր մնալ ծանր: Ճգնաժամը հաղթահարելու նպատակով ՀՀ կառավարությունը հունվարի 18-ին օգնության խնդրանքով դիմեց համաձայնության պետությունների կառավարություններին և հայանպաստ կոմիտեներին: Միաժամանակ որոշվեց միջոցներ ձեռք առնել Հյուսիսային Կովկասից և Հարավային Ռուսաստանից պարենավորման նյութեր փոխադրելու համար: Կարևորելով Վրաստանի ու Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերությունները՝ արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանին հանձնարարվեց Ադրբեջանի Հանրապետության հետ հարաբերության մեջ մտնել՝ դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակելու համար[1]: Արտասահմանից ՀՀ-ի հասցեով ուղարկված պարենը Հայաստան հասցնելու համար ՀՀ կառավարությունը դիմեց անգլիական և ամերիկյան հրամանատարություններին՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել Վրաստանի միջոցով Հայաստան պարեն փոխադրելու համար, պարենավորման նախարարին լիազորեց՝ իր հայեցողությամբ արտակարգ միջոցներ ձեռք առնել Վրաստանից պարեն բերել տալու համար[2]:

Հանրապետության բնակչության պարենավորման պարտականությունները դրված էին խնամատարության և պարենավորման նախարարությունների վրա: Ելնելով երկրի պահանջներից՝ նշված նախարարությունները լայն գործունեություն էին ծավալում Հյուսիսային Կովկասում, Վրաստանում, եվրոպական երկրներում:

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., Երևան, 2014, էջ 101:

[2] Նույն տեղում, էջ 189:

Առասպելական գներով գնվում էին մթերքներ, կուտակվում էին պահեստներում և, մեծ արգելքներ հաղթահարելուց հետո, մի կերպ հասցվում Հայաստան: Ելնելով նախարարությունների գործունեության առանձնահատուկ կարևորությունից՝ կառավարությունը նրանց լիազոր ներկայացուցիչներին օժտել էր արտակարգ լիազորություններով:

Ապրանքների և մթերքների ընդունման, պահպանման, իրացման, ուղարկման, ինչպես նաև ՀՀ կառավարության հասցեով Ամերիկայից, Եվրոպայից, Ռուսաստանից ուղարկված և ուղարկվելիք ապրանքների ու մթերքների համար Բաթումում հիմնվեց առևտրապարենային հանձնաժողով[3]:

Մեծ ծանրաբեռնվածությամբ էր աշխատում հատկապես Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը, որի միջոցով ՀՀ կառավարությունը կապվում էր ոչ միայն վրաց կառավարության, այլև տեղում գտնվող դաշնակից երկրների ներկայացուցիչների հետ: Քանի որ ՀՀ-ի և Ադրբեջանի միջև դիվանագիտական ներկայացուցիչների փոխանակում տեղի ունեցավ միայն 1919 թ. մարտի կեսերից[4], Ադրբեջանի հետ բանակցություններ վարելը, այդ թվում՝ այդ երկրից ՀՀ-ի համար ապրանքներ ձեռք բերելու գործի ղեկավարությունը նույնպես գտնվում էր Վրաստանում ՀՀ ներկայացուցչության վրա: Վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը մարտի 14-ին Վրաստանում ՀՀ նորանշանակ դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանին ուղարկած նամակում գրում էր. «Թանկագին Լեո: Այժմ, երբ դու արդեն մեր պաշտոնական ներկայացուցիչն ես, կհայտնեմ քեզ այն տվյալները և հրահանգները, որոնք անհրաժեշտ է, որ դու նկատի ունենաս. գլխավոր մեր կարիքները՝ հաց, հագուստ բանակի համար և անգլիացիների կողմից այն գաղափարի պաշտպանություն, որ թաթարները չպետք է հարձակվեն մեզ վրա, և որ իրենք կպատժեն նրանց դրա համար[5]: Թիֆ-

[3] ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.13, թ.16:

[4] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 309 :

[5] Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», (1918թ. դեկտեմբեր-1920թ. ապրիլ), Եր., էջ 113:

լիսում ստեղծվել էր Վրաստանի սահմաններում պարեն գնելու և Հայաստան փոխադրելու համար պարենավորման կոմիտե: Կոմիտեի նախագահը Ալիխանյանն էր: 1919 թ. ապրիլին Թիֆլիսից Ալիխանյանը հեռագրում էր, որ Հայաստանի համար գնված 5 վագոն եգիպտացորենն ու 3 վագոն լոբին շուտով կհասնեն Երևան[6]:

Ներմուծվող ապրանքներից առժամանակ մաքս չէր վերցվում, որովհետև երկիրը մեծ կարիք ուներ այդ ապրանքների[7]: Բացառություն էր արվում միայն այն ապրանքների համար, որոնք երկրի ներսում ենթակա էին ներքին ակցիզի, օրինակ՝ ալկոհոլ, ծխախոտ: ՀՀ ներմուծվող ապրանքների մի մասն իրականացվում էր մասնավոր մարդկանց միջոցով: Ներմուծվում էին բրինձ, եգիպտացորեն, թեյ, գարի, յուղ, մակարոն, շաքար, գարի, ծխախոտ, ձուկ և այլ մթերքներ: Կառավարությունը նաև խրախուսում էր մասնավոր անձանց կողմից ապրանքների արտահանումը: Մասնավոր մարդկանց թույլատրված էր արտահանել գինի, ամաններ, երկաթ, քացախ, կոնյակ: Ներմուծվում էր քանակով ավելի քիչ ապրանք, բայց մեծ արժեքով, իսկ արտահանվում քանակով ավելի շատ ապրանք՝ համեմատաբար նվազ արժեքով[8]:

Հանրապետություն ապրանք էր ներկրվում պարենավորման նախարարության, մասնավոր մարդկանց, կոոպերատիվների, օտար ներկայացուցչությունների կողմից:

Հայաստանի պարենային վիճակի մեղմացման գործում անգնահատելի ու ծանրակշիռ էր ամերիկյան օգնությունը: Հայաստանի համար 1919 թ. մարտին իրականացվող օգնության միջոցների մասին ամերիկյան օգնության հարցերով գլխավոր տնօրեն Հուվերի՝ գլխավոր տնտեսական խորհրդին արված զեկույցից տեղեկանում ենք, որ օգնության ադմինիստրացիայի կողմից մարտին Հայաստան էր հասցվել 4.521 տոննա հացամթերք և 731 տոննա խտացրած կաթ[9]:

---

[6] «Ժողովուրդ», Երևան, 1919, 11 ապրիլի:

[7] Քաջազնունի Հ., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 18:

[8] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 11, թ. 99:

[9] Մախմուրյան Գ., Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917-1920 թթ. փաստաթղթերում, Երևան, 2011, էջ 85:

1919 թ. հունիսին, հենվելով հավաստի տեղեկությունների վրա, ֆինանսների նախարարությունը կառավարությանը տեղեկացրեց, որ միջազգային առևտուրը արդեն կրում է ապրանքափոխանակության բնույթ, որ անհրաժեշտ է կոնյակը, կաշին, սպիրտը, բամբակը օգտագործել նմանատիպ առևտրի համար և ոչ թե վաճառել այն գներով, ինչ առաջարկում են շահագրգռված կողմերը: Կառավարությունը գտնում էր, որ առավել շահավետ կլինի հիշյալ ապրանքների փոխանակումը պարենամթերքներով, որովհետև, ելնելով առևտրի մեջ կատարված հիշյալ փոփոխություններից, սննդամթերքների գները ավելի էին բարձրանալու[10]: Հանրապետության պարենավորման հարցը մշտապես ուշադրության կենտրոնում ունենալով՝ Ալ. Խատիսյանի կառավարությունը ստեղծեց ապրանքների փոխանակության հարցերով զբաղվող կոմիտե: Կոմիտեն սահմանեց երկրից արտահանվող ու ներմուծվող ապրանքների ցանկը: Մասնավորապես թույլատրվեց Հայաստանից արտահանել կաշի, բամբակ, կոնյակ, բուրդ, գորգեր, գինի, աղ՝ դրանց փոխարեն Հայաստանի համար անհրաժեշտ ապրանքներ ստանալու համար[11]: Այդուհետ հանրապետության արտաքին առևտուրը կրեց ապրանքափոխանակության բնույթ, որը մասամբ թեթևացրեց դրամական ճգնաժամը, կրճատվեցին տարադրամ ձեռք բերելու հատկացումները:

Պարենային ճգնաժամը հաղթահարելու կառավարության ոչ բոլոր քայլերն էին, որ արդյունք էին տալիս: Այսպես, փոխանակ քաջալերելու մասնավոր առևտուրը՝ կառավարությունն ու տեղական ինքնավարության մարմինները սահմանեցին խիստ ստուգումներ: Սահմանային անցումներում կատարվող ստուգումներն ու բարձր մաքսը կատարեցին իրենց բացասական դերը՝ առևտրականներին ստիպելով նեղացնել գործունեության շրջանակները: Պարսկաստանից Ջուլֆայի վրայով Հայաստան անցնող՝ թե՛ հայաստանահպատակ, թե՛ օտարահպատակ ճանապարհորդները գանգատվում էին, որ սահմանի վրա մեր սահմանապահ և մաք-

[10] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.24, թ.197:

[11] Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 116:

սային իշխանությունները խլում են նրանց ձեռքից ամեն ինչ՝ ապրանքներ, պարենավորման մթերքներ և կենցաղային իրեր: «Սահմանապահ իշխանությունների նման գործողությունների ապօրինությունը կարող է այնպիսի անվստահություն առաջ բերել Պարսկաստանից Հայաստան անցնող ճանապարհորդների մեջ, որ այլևս ոչ ոք և ոչ մի ապրանք չի բերի Հայաստան, մինչդեռ մեր երկիրի ներկա վիճակը հրամայորեն թելադրում է վերացնել ամեն մի ուղղակի և անուղղակի արգելք արտասահմանից Հայաստան ապրանքներ ներմուծելու դեմ»[12]:

Պարենային սուր խնդրով պայմանավորված՝ կառավարությունը գնում էր արտակարգ միջոցառումների՝ կանխելու գողացված ապրանքների ու մթերքների վաճառքը: Դրանց օրենքի ուժ տալու նպատակով կառավարությունը օրինագծեր էր ներկայացնում Հայաստանի Խորհրդին: Գողացված նավթը, ալյուրը և այլ պարենավորման մթերքները վաճառելու համար խիստ պատիժներ սահմանելու մասին[13] ֆինանսների և պարենավորման նախարարի ներկայացրած օրինագիծը կառավարությունը 1919 թ. օգոստոսի 12-ի նիստում հավանության արժանացրեց և ներկայացրեց Հայաստանի խորհրդարան: Խնդիրը մշտապես գտնվում էր խորհրդարանի օրակարգում: Պարենային հանձնաժողովն օրենսդրին պարբերաբար ներկայացնում էր տեղեկություններ՝ ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ արվող քայլերի և երկրի պարենային դրության մասին: 1919 թ. փետրվարի 13-ի Խորհրդի նիստում վարչապետ Հ. Քաջազնունին հայտարարեց. «Մինչև հունձը հարկավոր է 7 միլիոն փութ ցորեն: Մինչդեռ Կարսից մենք 250 հազար փութ, Նախիջևանից և Ադրբեջանից 100 հազար փութ հազիվ ստանանք: Հյուսիսային Կովկասից մեծ սպասելիքներ չենք կարող ունենալ, որովհետև ամբողջ Ռուսաստանը պետք է այնտեղից հաց ստանա: Եվ այսպես՝ մոտակա շուկաներից մեկ միլիոն փութ հազիվ ստանանք»[14]:

[12] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 45, մ. 2, թ. 717:

[13] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 279:

[14] Հայաստանի պառլամենտի արձանագրությունները, էջ 209:

Հայաստանի Հանրապետությունը մեծ հույսեր էր կապում Դենիկինի կամավորական բանակի հետ: Չնայած կամավորական բանակը թույլատրում էր Հայաստանի Հանրապետություն ապրանքներ առաքել, սակայն Վրաստանը և Ադրբեջանը, կասկածներ ունենալով Եկատերինոդարի և Երևանի միջև գաղտնի կապի առկայության վերաբերյալ, ամեն կերպ խոչընդոտում էին հաղորդակցման իրականացմանը[15]:

Դենիկինյան զորքերի հարձակման դեպքում համատեղ հանդես գալու նպատակով 1919 թ. հունիսի 16-ին Թիֆլիսում Վրաստանի և Ադրբեջանի միջև ստորագրված ռազմական պայմանագրին Հայաստանի Հանրապետությունը չմիացավ, ինչը Վրաստանի ու Ադրբեջանի կողմից ընդունվեց թշնամաբար: Վրաստանի կողմից փակվեցին Հայաստան մեկնող գնացքների ճանապարհները, թալանվում էին Հայաստան ուղարկվող սննդամթերքի բեռները: Դրանք շատ հաճախ վրացական սահմանից վերադարձվում էին կրկին Կուբան կամ էլ առգրավվում էին Վրաստանի ու Ադրբեջանի հյուսիսային սահմաններում: Գեներալ Ա. Դենիկինը, համոզվելով, որ Հայաստանի Հանրապետություն ուղարկվող հացի և այլ ապրանքների չնչին մասն է տեղ հասնում, 1919 թ. դեկտեմբերի սկզբին հետագա առաքումներն արգելեց:

Հրաժարվելով ճանաչել ՀՀ իշխանությունը՝ Նախիջևանի մահմեդականները հայերին կենսամթերք վաճառելու բոյկոտ էին հայտարարել: Նրանց գործողությունները ուղղորդվում ու ղեկավարվում էին թուրք գործակալների կողմից, որոնք երկրամասից թուրքական զորքերի հեռանալուց հետո մնացել էին ու ղեկավարում էին տեղի մահմեդականների՝ ՀՀ իշխանությունը մերժելու գործողությունները: Այն մահմեդականը, որը կենսամթերք կհայթայթեր հայերի համար, հայտարարվում էր դավաճան ու ենթարկվում բռնության: Մթերքներ վաճառելու բոյկոտի միջոցով ցանկանում էին հայ բնակչությանը սովամահ անել: Նախիջևանի գավառի

[15] Պետրոսյան Գ. , Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Եր., 2006, էջ 87:

անգլիական նահանգապետության հայկական ներկայացուցիչ Բ. Բահաթրյանը ՀՀ ԱԳ նախարարին ուղարկած 1919 թ. փետրվարի 28-ի զեկուցագրում հայտնում էր, որ Նախիջևանի մահմեդականները գեներալ-նահանգապետ Լաթթունին առանց որևէ պայմանի խոստացել էին տալ 1.000 փութ ցորեն Նորաշենից, և երբ անգլիացի սպան պայմանավորվածությանը համաձայն գնում է ցորենն ստանալու, թուրքերը հրաժարվում են և չեն տալիս: Գեներալ-նահանգապետի կտրական պահանջին թուրք էմիսար Քարիմ խանը պատասխանում է. «Չենք տալիս, որովհետև իմացել ենք, որ այդ ցորենը հայերի համար է»[16]: Գեներալ-նահանգապետի սպառնալիքի տակ Քարիմ խանը զիջում է և խոստանում տալ ցորենը, բայց միևնույն ժամանակ առիթներ է որոնում ձգձգելու և իր խոստումը չկատարելու համար: Շարուրի շրջանի Ենգիջա, Չումարթլու և նրանց հարևանությամբ Արաքսի ափին ընկած մահմեդական գյուղերի շտեմարաններում ցորենի մեծ պաշարներ էին կուտակված: Այդ գյուղերը հրաժարվում էին Հայաստանի կարիքների համար փողով ցորեն վաճառել, բայց մեծ հաճույքով ցորենը փոխանակում էին հրացանի հետ: Ռուսական համակարգի հրացանը հաշվում էին 1.200, իսկ տաճկականը՝ 1.500 ռուբլի: «Մեր ժողովրդի այս նեղ դրությունից օգուտ քաղելով այդ ձևով նրանք ավելի ու ավելի են զինվում»,– գրում էր «Ժողովուրդ» թերթը 1919 թ. հունիսի 6-ի համարում[17]: Հայկական իշխանությունների դեմ Շարուրի թաթար բնակչության կողմից կազմակերպված ապստամբության պատրաստման մասին ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղարկած հայկական զորքերի գլխավոր շտաբի հրամանատարության ներկայացրած զեկուցագրում կարդում ենք, որ թաթարները դադարեցնում են հայ զինվորներին հացի վաճառքը, իսկ եթե ժամանակավորապես համաձայնում են, ապա պահանջում են նիկոլանյան դրամներ: Եվ իսկապես, եղել են դեպքեր, երբ թաթարները որոշակի հայտարարել են, որ նրանք Նախ-

[16] Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., (փաստաթղթեր և նյութեր), Երևան, 1993, էջ 81:

[17] «Ժողովուրդ», Երևան, 1919, 6 հունիսի:

իջևանի կառավարությունից խիստ հրաման են ստացել՝ ոչ մի փութ հաց չվաճառել հայերին: Թաթար երեխան, որը մի կտոր հաց էր վաճառել հայ զինվորին, դրա համար խիստ պատժի էր ենթարկվել թաթարների կողմից:

Հայաստանում տիրող իրավիճակի ուշագրավ վկայություն է 1919 թ. հուլիսի 24-ի Թիֆլիսում ԱՄՆ փոխհյուպատոս Դուլիտլանի՝ Փարիզում ամերիկյան ներկայացուցչությանը՝ Պոլկին ուղարկած հեռագիրը. «Սերմացուի պակասության, ինչպես նաև թուրքերի ու թաթարների՝ հայերին սերմացու վաճառելուց հրաժարվելու պատճառով, հայ ժողովուրդը այս տարի համարյա բերք չի ստացել, բացառությամբ շատ քիչ քանակության ցանած հացահատիկի, որը բավարար է միայն մի քանի ամիս: Առաջիկա ձմեռը այստեղ մթերք չի լինի, բացառությամբ դրսից բերածի»[18]:

1919 թ. դեկտեմբերի դրությամբ Երևանում մթերքների գները չափանիշ էին դարձել հանրապետության մյուս վայրերի համար: Դրանից օգտվում էին վերավաճառողները ու գները բարձրացնում, որի պատճառով թանկությունը տարածվում էր ողջ երկրի վրա:

Ադրբեջանի հետ լարված հարաբերությունների պայմաններում ՀՀ կառավարությունը փորձում էր երկրի պարենային խնդիրները մասամբ լուծել դաշնակիցների միջոցով: 1919 թ. երկրորդ կեսից մինչև 1920 թ. փետրվար ամիսը դա արվում էր ամերիկացիների օգնությամբ: 1920 թ. փետրվարի 6-ի կառավարության նիստում լսելով ֆինանսների նախարարի զեկուցումը 3.000 տոննա սերմացու ստանալու համար գնդապետ Ու. Հասկելին 30.000 ֆունտ ստեռլինգ տալու մասին հարցը[19]՝ որոշեց հավանություն տալ առաջարկին ու ֆինանսների նախարարին հանձնարարեց այդ առթիվ բանակցել գնդապետ Հասկելի հետ:

Քանի որ ապրանքափոխանակության կոմիտեում, ինչպես և առհասարակ պարենավորման նախարարության մեջ, թվական տվյալները ցուցակագրվում էին ավելի շատ հաշվապահական

[18] Մախմուրյան Գ., նշվ. աշխ., էջ 170:

[19] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., էջ 396:

ձևով, քան վիճակագրական եղանակով[20], դա էր պատճառը, որ ոչ մի հիշատակություն չկա այն մասին, թե ո՛ր երկրներ են արտահանվել հայկական ապրանքները, և ի՛նչ երկրների ծագում ունեին ներմուծված ապրանքները: Նման վիճակագրություն կա միայն Ամերիկայից ներկրված ապրանքների մասին:

ՀՀ գյուղատնտեսության և պետական գույքի նախարարության թիվ 2 պետական ընդհանուր վիճակագրական գլխավոր բաժանմունքի տվյալներով՝ Հայաստանի ապրանքափոխանակությունը 1919 թ. մարտից մինչև 1920 թ. մարտ նախկինում չէր արվել: Հայաստանից արտահանվում էր կաշվեղեն՝ գոմեշի, եզան, ոչխարի, այծի հում կամ պատրաստի կաշի, խմիչքներ՝ կոնյակ, կոնյակի սպիրտ, օղի, գինի, քացախ, աղ, չոր միրգ, պահածոներ[21]:

Հայաստանը, որն իրեն անհրաժեշտ հացի մի մասն ստանում էր դրսից՝ հարավային Ռուսաստանից, դրա փոխարեն արտահանում էր բրինձ, բամբակ, շերամ, պանիր, յուղ, պտուղներ, գինի, ալկոհոլ[22]:

Որքան էլ դեպքերի բերումով Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն չուներ հարևան Պարսկաստանի հետ նորմալ հարաբերվելու, այդուհանդերձ սահմանամերձ շրջանները առևտրական ու տնտեսական կապերի մեջ էին վերջինիս հետ: Մասնավորապես Գենվազ-Գողթանը ապրանքների փոխանակման ճանապարհով Պարսկաստանից ստանում էր աղ, օճառ, ծխախոտ, նավթ[23], բրինձ, փոխարենը տալիս բոժոժ, լոբի, ընկույզ:

Չնայած երկու երկրների միջև պայմանագրային հարաբերություններ այդպես էլ չհաստատվեցին, այնուամենայնիվ Հայաստանի ու Իրանի, հատկապես Ատրպատականի և Մակուի խանության հետ սկսած 1919 թ. գարնանից առևտրական որոշ կապեր պահպանվում էին: Այսպես, Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հայտնած տվյալ-

[20] ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.11, թ.105:

[21] Նույն տեղում, թ.95:

[22] Քաջազնունի Հ., նշվ. աշխ-ը, էջ 29:

[23] «Հառաջ», Երևան, 1920, 9 հունիսի:

ներով՝ Հայաստանի Հանրապետության պարենավորման նախարարության ներկայացուցիչը անասուններ էր գնել Ատրպատականում և 20-30 հազար անասուն գնելու համաձայնություն ձեռք բերել Մակուի խաների հետ: Մայիսին 4 հազար փութ հացահատիկ էր գնվել նույն խանությունում: Բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը Պարսկաստանում գնել էր 2 հազար փութ մանուֆակտուրային ապրանք, իսկ կառավարությունը կարգադրել էր բաց թողնել հազար փութ շաքար և 1000 փութ օճառ՝ Մակուի խանությունում ցորենի հետ փոխանակելու համար: Նույն նպատակով հատկացվել էին ոգելից խմիչքներ: 1920 թ. հոկտեմբերի 23-ին Մակու քաղաքում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Հ. Մելիքյանի և Մակուի սարդարի միջև ստորագրված պայմանագրով իրանական կողմը պարտավորվում էր Հայաստանի կառավարությանը վաճառել որոշակի քանակությամբ ցորեն և գարի՝ Շահթախթի կայարանում ստանալու պայմանով: Հայաստանն իրավունք էր ստանում Մակուի և Խոյի շրջաններում գնելու և արտահանելու բուրդ, բամբակ, կաշի, մորթիներ, անասուններ, գորգեր, յուղ, պանիր և այլն: Սակայն պայմանագիրն այդպես էլ մնաց թղթի վրա, քանի որ հոկտեմբերի վերջին ընկավ Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին թուրքերը մտան Ալեքսանդրապոլ: Հայկական զորքերը հետ քաշվեցին նաև Շահթախթից, և դրանով կտրվեց կապը Մակուի խանության հետ:

Այսպիսով՝ որքան էլ ՀՀ-ն մոտակա շուկաներից հաց էր ստանում, սակայն դա չէր բավարարում երկրի պարենային կարիքները: ՀՀ կառավարությունը մեծ ջանքեր գործադրեց, որ մեղմացնի հանրապետության համար այդքան կարևոր կենսական խնդիր հանդիսացող պարենային ճգնաժամը:

Продовольственная проблема в Республике Армения (январь 1919 г. – ноябрь 1920 г.)

Гулян Юрик

Резюме

Ключевые слова: *правительство Армении, Грузия, США, дипломатическое представительство, продовольственный кризис, пшеница, бойкот, товар*

На январь 1919 года ситуация с продовольственным снабжением продолжала оставаться тяжелой. Правительство РА для устранения продовольственного кризиса в стране направила обращения с просьбой о содействии руководству государств Антанты и комитетам вспомоществования армянам. Были предприняты меры по перевозке продовольственных грузов из Северного Кавказа и Южной России. Мусульманские села Шарурской области, которые имели большие запасы пшеницы, отказывались продавать ее за деньги для нужд Армении. Отказываясь признать власть РА, мусульмане Нахиджевана объявили бойкот на продажу продовольствия армянам. Их деятельность координировали и ими руководили турецкие наемники. Тех мусульман, которые снабжали армян продовольствием с целью наживы или по каким-то другим причинам, объявляли предателями и подвергали террору. Бойкотируя продажу продовольственных товаров, турки пытались обречь армян на голодную смерть. Проблема продовольственного снабжения в республике всегда находилась в центре внимания правительства, которое при Министерстве продовольствия создало Комитет по вопросам товарообмена. Комитет составил список экспортируемых и импортируемых товаров. С большим напряжением работало также дипломатическое представительство РА в Грузии, с помощью которого правительство устанавливало связь не только с грузинским правительством, но и с находящимися там представителями союзных государств.

Food Problem in the Republic of Armenia (from January 1919 to November 1920)

Ghulyan Yurik

Summary

Key words: *government of Armenia, Georgia, USA, food crisis, wheat, boycott, goods*

By January 1919 the food state in the Republic of Armenia had been terribly hard. For the purpose of smoothing over the food crisis in the country the RA government had to turn to the governments of the Agreement States as well as pro Armenian committees. The RA government took all possible measures to transport food from the North Caucasus and South Russia. The Muslim villages of the region Sharur, rich in wheat, refused to sell wheat to Armenians. Having refused the authorities of Armenia the Muslim population of Nakhijevan announced a boycott, because they didn't want to sell food to Armenians. Their actions were led and guided by hired Turks. The Muslims who dared supply food with Armenians for some purpose were terrorized and declared traitors. By means of that boycott they wanted to starve Armenians to death. Always focusing on the food problem the government of Armenia created a special committee on goods barter adjacent to the Ministry of Food. The committee defined a list of the importing and exporting goods. Especially the Diplomatic Representation of Armenia in Georgia was overburdened, with the help of which the RA government made contact with the Georgian government and representatives of the allied countries in Armenia.

Ներկայացվել է 22.05.2019 թ.
Գրախոսվել է 14.06.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

S 89.4 պարթևական դրամների վերամեկնաբանություն

Մելիքյան Արթուր

Հանգուցային բառեր՝ *դրահմա, Արտավան V, Տրդատ, Արշակունիներ, Պարթևական պետություն, Որմիզդական*

Հնուց ի վեր դրամներն իրենց բուն նշանակությունից զատ, ծառայել են իբրև պաշտոնական քարոզչամիջոցներ և կարևորագույն իրադարձությունները նշանավորող հուշարձաններ: Հաճախ դրանց պատկերագրական համալիրը մեկնաբանելու համար հարկ է լինում դիմելու գրավոր սկզբնաղբյուրների օգնությանը, բայց ոչ հազվադեպ դրամագիտական նյութերն իրենք են բանալի դառնում գրավոր սկզբնաղբյուրների տեղեկությունների իսկությունը ստուգելու համար: Այսօրինակ առաքելություն է վիճակված Պարթևական տերության մայրամուտին թողարկված արծաթե դրահմաների մի յուրօրինակ տիպին, որը Դավիթ Սելվուդի դասակարգման մեջ վերագրվել է 89-րդ տիպի 4-րդ ենթատիպին (S 89.4)[1]:

S 89.4 դրամների նկարագրությունն ու մեկնաբանությունները

Խնդրո առարկա դրամների քաշը 3,60-3,70 գ է, ինչը հարիր է II-III դդ. պարթևական դրահմաների ստանդարտին: Երեսին ներկայացված է Արտավան V-ի (213-224 թթ.) ձախ դարձած դիմապատկերը՝ հատկանշական երկճյուղ մորուքով, ուղիղ քթով և ընդգծված այտոսկրերով: Արքան պսակված է դիադեմայով և «գնդիկազարադ» սաղավարտաձև տիարայով, որը լավ հայտնի է Էկբատանում նրա հատած դրամներից[2] ու Շոշում կերտած «Հվասակի ստելայից»[3]: Դիադեմայի հանգույցից վերև դրոշմված է արամեերեն 𐡀𐡓 – «ար» տառակապակցությունը[4]: Դրամների դարձերեսին


[1] *Sellvood D.*, An Introduction to the Coinage of Parthia, London, 1980, Type 89; *Ira and Larry Goldberg Auctioneere*, 83 (7-10 January 2015), Lot 4703.

[2] *Sellvood D.*, An Introduction…, Type 89.1-2.

[3] *Olbrycht J. M.*, Parthian King's Tiara – Numismatic Evidence and Some Aspects of Arsacid Political Ideology, *Notae Numismaticae*, Tom II, Kraków, p. 36, Pl. IV, J, K.

[4] *Sellvood D.*, Parthian Coins, In: *CHI*, vol 3(1), Ed. by E. Yarshater, Cambridge University Press, 1983, p.298.

աջաղարձ դիրքով պատկերված է գահավորակին բազմած Արշակունիների արքայատան հիմնադիրը՝ Արշակ I-ը՝ աջ ձեռքով աղեղն առաջ մեկնած: Աղեղից ներքև Էկբատանի դրամահատարանի  նշանագիրն է: Այս ավանդական պատկերը չորս կողմից եզերված է հինգ տող մակագրությամբ, որոնցից երկու կողային և մեկ ստորին տողերը «բարբարոսացված» հունարեն են, իսկ վերին երկուսը՝ արամեերեն: Առաջինները դեռևս XIX դ. դրամագետների կողմից վերծանվել են որպես ΒΑΣΙΛΕΩΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ ΕΠΙΦΑΝΟΥΣ (արքայի, բարեգործի, հայտնյալի)[5]: Մինչդեռ արամեերեն տողերի վերծանությունն ու մեկնաբանությունը մինչ օրս մնում են խնդրահարույց:

Ելնելով այն ընդհանուր օրինաչափությունից, որ սկսած Ք.հ. II դ. կեսերից, պարթևական դրամների դարձերեսի հորիզոնական տողի վրա արամեերեն լեզվով գրվում էին տիրակալի անունն ու պաշտոնը՝ շատ հեղինակավոր դրամագետներ խնդրո առարկա դրամի արամեատառ մակագրությունը վերականգնել են  ձևով և ընթերցել՝ «Artabazu malka» = «Արտաբազի արքայի»[6]: Ըստ այդմ էլ, դրամը, չնայած այն փաստին, որ երեսին կրում է Արտավան V-ի պատկերը, վերագրվել է նրա կարծեցյալ որդուն՝ Արտաբազին (Արտավազդին)[7]:

Դավիթ Սելվուդը սկզբնապես խնդրո առարկա դրամը վերագրում էր Արտավան IV-ին (ներկայումս ընդունված հաջորդականությամբ՝ Արտավան V-ծ.հ.)[8]: Ձեռքի տակ ունենալով հիշյալ դրամի մաշված ու դժվար ընթեռնելի օրինակ և առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ «պարթևական աղեղնավորի» վերևում առկա հորիզոնական տողերում պետք է ներկայացված լինեն տիրակալի անունն ու տիտղոսը՝ նա արամեերեն գրության առաջին

[5] *Thomas E.*, Early Sassanian Inscriptions, Seals and Coins, London, 1868, p, 127-128, no 13; *Wroth W.*, Catalogue of the Coins of Parthia. In: *Catalogue Of Greek Coins in the British Museum*, vol. 23, London, 1903, p. 251, footn. 2.

[6] *Thomas E.*, Op. Cit., pp. 127-128, no 13; *Wroth W.*, Op.. Cit., p. 251.

[7] *Thomas E.*, Op. Cit., p, 127-128, no 13; *Wroth W.*, Op. Cit., p. 251. *Дибвойз Н. К.*, Политическая история Парфии, Санкт-Петербург, 2008, с. 228-229.

[8] *Sellvood D.*, An Introduction..., Type 89.4.

տողը ընթերցել է. «՝rtbnw MLK» (Արտավան արքա)։ Ապա, համաբելով որ երկրորդ տողում պետք է լինի Արտավանի «արքա» տիտղոսի շարունակությունը, Դ. Սելվուդն այն վերծանել է «MLK'N» (արքաների)[9]։

Ինչպես երևում է, անգլիացի դրամագետն այնքան էլ համոզված չի եղել իր վերծանության ճշմարտացիության մեջ։ Այդ պատճառով էլ նա այս խնդրին վերադարձավ 1990 թ., երբ երևան եկավ հիշյալ պարթևական դրամի անհամեմատ լավ պահպանված օրինակը։ Դրա մանրազնին ուսումնասիրության արդյունքում Դ. Սելվուդն առաջարկեց արամեերեն երկրորդ տողի նոր ընթերցում՝ «tr'dt» կամ «trdt»[10], որն էլ արտասանվում է՝ «Տրդատ»։ Սակայն դրամական լեգենդի վերընթերցումով S 89.4 դրամների մեկնաբանության հարցը ոչ թե լուծվեց, այլ դարձավ ավելի առեղծվածային։ Բանն այն է, որ պարթևական շուրջ 400-ամյա դրամահատության մեջ սա միակ դեպքն է, երբ դրամի դարձերեսի լեգենդը պարթևական վեհապետի անունից բացի պարունակում է մեկ այլ անձնանուն ևս։

Ո՞վ է Արտավանի պատկերը կրող դրամի դարձերեսին հիշատակված Տրդատը, ի՞նչ դերակատարում է նա ունեցել Պարթևական պետության օրհասական շրջանում, ի՞նչ քաղաքական-գաղափարական նպատակադրումով է նա, խախտելով պարթևական դրամահատության դարավոր ավանդույթները, իր անունը հավելել վերջին Արշակունի վեհապետի պատկերով արծաթե դրամների վրա։ Այս հարցերը ցայսօր մնում են մութ։

Առաջին հայացքից՝ դրամի դարձերեսին երկու հատուկ անունների առկայությունը՝ մեկը արքայական տիտղոսով, մյուսը՝ առանց տիտղոսի, գայթակղում է կարծելու, որ այն թողարկվել է Արտավան V-ի կառավարման վերջին շրջանում, և Տրդատն էլ եղել է նրա կառավարչակից որդին, որն արքայական տիտղոսով չի հիշատակվել՝ աստիճանակարգության պահանջով։ Սակայն այս ենթադրությունը որևէ կերպ հիմնավորել հնարավոր չէ։ Նախ՝

[9] *Ibid.* Type 89.4.

[10] *Sellwood D.*, The End of the Parthian Dynasty, *Spink Numismatic Circular* 98, 1990, p. 157.

գրավոր սկզբնաղբյուրները, այդ թվում և Արտավան V-ի ժամանակակից և նրա գահակալության մանրամասներին քաջածանոթ Դ. Կասսիոսը, փաստելով, որ Արտավանն ունեցել է որդիներ[11], որևէ կերպ չեն հիշատակում Արշակունիների տիրապետության վերջին շրջանում կառավարչակցության երևույթի մասին: Մյուս կողմից՝ հայտնի է, որ հելլենիստական դարաշրջանում կրտսեր կառավարիչները, թեև կրում էին արքայական տիտղոս, բայց զրկված էին դրամ հատելու իրավունքից[12], իսկ թողարկվող դրամների վրա էլ վեհապետների անվան կողքին նրանց անունները չէին հիշատակվում[13]: Այս կանոնի տրամաբանությամբ էլ համարում են, որ S 89.4 ենթատիպի դրահմաները կրկնաթողարկվել են Որմիզդականի ճակատամարտում (Սելևկյան տոմարի 535 թ[14]. = մ. թ. 224 թ.) Արտավան V-ի վախճանից հետո:

Դ. Սելվուդը վերոնշյալ դրամների երևան գալը բացատրում է Որմիզդականի ճակատամարտից հետո ստեղծված ընդհանուր խառնաշփոթ իրավիճակով և առաջին հերթին՝ Արշակունիների հիմնական դրամահատարանների Սասանյանների ձեռքն անցնելու հանգամանքով: Նրա համոզմամբ, «պարթևական բանակը, որը նահանջում էր սասանյան զորքերից, ստիպված էր բավարարվել ժամանակավոր դրամահատարանների ու տեղական վարպետների ծառայություններով: Այդ դժվարին ժամանակաշրջանում հիմ-

---

[11] Dio's Roman History, in Nine Volumes, with an English Translation by Earnest Cary, Vol. IX, London-Cambridge-Massachusetts, 1955, LXXX, 3. 3 (այսուհետև՝ Dio Cass.).

[12] *Бикерман Э.*, Государство Селевкидов, М., 1985, с. 24.

[13] *Там же*. Պարթևական դրամահատության մեջ եզակի բացառություն է Օրոդես II-ի կառավարչակից որդու՝ Բակուրի՝ Ք.ա. 39 թ. արծաթե դրահմաների և քաղքուսների թողարկումը (*Wroth W.*, Op. Cit., p. 97, plate 18, no. 12-14; *Sellvood D.*, An Introduction…, Type 49.1-3; *Triton VII* (12 Jan 2004), lot 455-456. *The New York Sale*, Auction XXXIV, (January 6, 2015), lot 451, 451: Բայց այստեղ էլ աչքի է զարնում այն փաստը, որ դրանց վրա ներկայացված է ոչ թե ավագ, այլ կրտսեր կառավարչի պատկերն ու տիտղոսը:

[14] *Մշիխա Ջեխա*, Ադիաբենեի եկեղեցու պատմություն. Թարգմանությունը՝ Հ. Գ. Մելքոնյանի, տե՛ս *ՕԱՀՀՄ*, հատ. 8. Ասորական աղբյուրներ, Երևան, 1976, էջ 83:

նական խնդիրը զորքին վճարելու նպատակով դրամների թողարկումը շարունակելն էր՝ առանց դիմապատկերների կամ այլ դետալների ճշտության մասին հոգալու: Դրա համար բավարար կլիներ ցանկացած դրամ, որը կհիշեցներ մահացած պարթև տիրակալի դրամը»[15]: Ըստ Դ. Սելվուդի՝ այդ նպատակը իրագործվել է Արտավան V-ի որոշ դրամների կրկնաթողարկման միջոցով, որի ընթացքում դարձերեսին հավելվել է «Տրդատ» անունը[16]:

Դ. Սելվուդը, իսկ մի փոքր ավելի ուշ Ա. Վոկերը, որպես S 89.4 ենթատիպի դրահմաների կրկնաթողարկված լինելու հիմնափաստարկ, նշում են «tr'dt» գրության սեղմված լինելը «պարթևական աղեղնավորի» պատկերի ու վերին հորիզոնական տողի միջև[17]: Սակայն հարկ է նկատել, որ S 89.4 ենթատիպի իրական ճանաչված[18] դրամների դիտարկումից այսպիսի տպավորություն բնավ էլ չի ստեղծվում: «tr'dt» անունը կրող տողի ստորին եզրագծի հեռավորությունը «պարթևական աղեղնավորի» գլխից նույնքան է, որքան որ գահավորակի ոտքերից ստորին տողի վերին եզրագծի հեռավորությունն է: Դա խոսում է հօգուտ այն բանի, որ դարձերեսի հորինվածքը ստեղծվել է միասնական պլանով: Ավելին, «tr'dt» անվան տառերն ավելի փռված են ու թավ, մինչդեռ «'rtbnw MLK» բառակապակցությունն ավելի բարակ տառերով է գրված, և բացի այդ, ասես «tr'dt» գրության համար բավարար տեղ ստեղծելու նպատակով կանխամտածված զետեղվել է դրամի եզրային մասում: Եվ, վերջապես, կրկնաթողարկման պարագայում պետք է որ դրամի նախնական պատկերային և գրային հորինվածքները թեկուզ և չնչին չափով աղճատվեին: Մինչդեռ S 89.4 ենթատիպի իրական ճանաչված և ոչ մի դրամի վրա նման հետքեր չկան: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա դրամների հորինվածքային ինքնատիպությունը ոչ թե կրկնաթողարկման, այլ այն թողարկողի նպատակամղված գործողության արդյունք է:

---

[15] *Sellwood D.*, The End of the Parthian Dynasty, p. 157.

[16] *Ibid.*

[17] *Ibid.: Walker A.*, Forgeries and Inventions of Parthian Coins, *Bulletin on Counterfeits,* Vol. 19 No. 2 1994/5, Editor: Silvia Hurter, Zurich, 1995, p. 27.

[18] *Ibid.* p. 27-29.

Դ. Սելվուդը Տրդատի ինքնությունը պարզելու նպատակով մի հպանցիկ հայացք է նետում III դ. առաջին քառորդի պատմական կերպարացանկին. «*Մոտ 216 թ. այդ անունով Արշակունի էր ընտրվել Հայաստանի թագավոր, սակայն մենք չենք կարող համոզված լինել, որ հենց այդ Տրդատն է թողարկել այդ դրամները: Կարծես թե Հայոց թագավորը վախճանվել է նախքան Սասանյանների դեմ վերջնական ճակատամարտը*»[19]: Տրդատի նույնականացման հարցում այլևս չունենալով որևէ այլընտրանք՝ հեղինակն ընդամենն այն փաստից, որ դրամի վրա Տրդատը արքայական տիտղոսով չի հիշատակված, հնարավոր է համարում, որ նա Արշակունիների արքայատանը չի պատկանել, այլ եղել է Արտավանի բարձրաստիճան զորապետներից մեկը, որն իր տիրոջ մահվանից հետո շարունակել է պարթևների օրհասական պայքարն ընդդեմ Սասանյանների[20]:

Տրդատի նույնականացման հարցում Դ. Սելվուդի շեղվելը «որոշակիից դեպի անորոշը» միանգամայն հասկանալի է. իբրև դրամագետ՝ նա խորամուխ չի եղել գրավոր սկզբնաղբյուրների տվյալների մեջ, այլ հիմք է ընդունել իրեն հասու հայագիտական ուսումնասիրությունների արդյունքները, որոնց համաձայն 216 թ. Հայոց գահին բազմած և 217 թ. Հռոմի կողմից պաշտոնապես ճանաչված Տրդատ II-ը վախճանվել է 221 կամ 222 թ.՝ գահը թողնելով Խոսրովին՝ հայկական պատմական ավանդության Խոսրով Մեծին[21]: Մինչդեռ Մ. Աբեղյանի, Հ. Մանանդյանի և այլոց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հայոց «Խոսրով Մեծ արքայի» կերպարը վիպական հարակցման արդյունքում ծնված կերպար է, որին են վերագրվել Հայոց Տրդատ II-ի գործերը, իսկ

[19] *Ibid.*

[20] *Ibid.*

[21] Տե՛ս *Տաշեան Հ.*, Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղայ գրոց, Վիեննա, 1891, էջ 96, *Աստուրեան Հ.*, Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք. Մինչեւ 428 յ-Ք., Վիեննա, 1912, էջ 229, 232: *Հարությունյան Հ.*, Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թ.թ.), Երևան, 1945, էջ 42:

վերջինս էլ Հայաստանում գահակալել է մինչև 252/253 թ.[22]: Տրդատ II-ի գահակալության նոր ժամանակագրության տեսանկյունից Հայոց այս արքան դառնում է դրամական S 89.4 ենթատիպը թողարկողի հավանական, իսկ հայ մատենագիրների հաղորդումների տեսանկյունից՝ թերևս միակ հնարավոր թեկնածուն:

S 89.4 դրամը հայ-պարսկական հակամարտության վերաբերյալ Ագաթանգեղոսի և Մ. Խորենացու վկայությունների համապատկերում.

Հայ-պարսկական հակամարտության սկզբնավորման փուլում Մեծ Հայքի արքա Տրդատ II-ի ռազմաքաղաքական և դիվանագիտական-քարոզչական գործունեության մասին հռոմեական աղբյուրները գրեթե ոչինչ չեն հաղորդում: Իսկ հայ մատենագիրների վկայությունները թեև վիպախառն, բայց բավականին մանրամասն են:

Դիոն Կասսիոսը պատմում է, որ Արտավանին պարտության մատնելուց և Հաթրան գրավելու անհաջող փորձից հետո «*Արտաշիրը ....ետ նահանջեց դեպի Մարաստան և այս երկրում, ինչպես նաև Պարթիայում մասամբ բռնությամբ, մասամբ էլ ահաբեկմամբ գրավելով ոչ քիչ շրջաններ՝ շարժվեց դեպի Հայաստան: Այստեղ նրան դիմադրեցին տեղի բնակիչները, և մարերից ոմանք, ինչպես նաև Արտաբանոսի որդիները, և նա, ինչպես ասում են, փախավ, իսկ ուրիշները ասում են, թե նա ետ քաշվեց՝ ավելի մեծ արշավանք նախապատրաստելու համար*»[23]:

Իրադարձությունների ընթացքը այլ կերպ են ներկայացնում Ագաթանգեղոսն ու Մ. Խորենացին: Ակնարկելով Որմիզդականի բախտորոշ ճակատամարտից առաջ կայացած հայ-պարթևական դաշինքի մասին[24]՝ նրանք փաստում են, որ այն գործնականում

[22] *Zonaras I.*, Annales, ex recensione Mauricii Pinderi, Bonnae, Bonnae impensis ed. Weberi, tome II, 1844, XII, 21. *Աբեղյան Մ.*, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1944, էջ 166: *Մանանդյան Հ.*, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 85: *Մելիքյան Ա.*, Սալմաստի ժայռաքանդակը. Պատմական Հայաստանի Սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, Երևան, 2016, էջ 242-243:

[23] *Dio Cass.* LXXX. 3, 2-3.

[24] Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց. Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանաեանց, Տփղիս, 1909, 18, Ա (այսուհետ՝ Ագաթանգեղոս): Մովսիսի Խորե-

մնացել է անկատար: **Երկու հեղինակներն էլ վկայում են, որ պարթևական ավագ ճյուղի անկումից հետո Արշակունիների պատվո աստիճանակարգության մեջ առաջինի դիրքը ստանձնած Հայոց արքան փորձել է Սասանյանների դեմ պայքարում համախմբել բոլոր հնարավոր դաշնակիցներին:** Այս առումով ուշագրավ է, որ հայ մատենագիրները, անուշադրության մատնելով հայ-պարսկական հակամարտության իրական պատճառները, Հայոց Տրդատ II արքայի հակասասանյան դիրքորոշման շարժառիթը համարում են տոհմական վրեժխնդրության ցանկությունը: *«Ուխտ եդեալ միանգամայն՝ վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւեանց ի տէրութենէն»*[25]:

Մինչդեռ հայտնի է, որ հայ-պարսկական պատերազմը գործնականում սկսվել էր Որմիզդականի ճակատամարտի նախընթաց տարում՝ 223 թ.՝ Սասանյանների կողմից Մեծ Հայքի Արզան և Նփրկերտ գավառների ռազմակալումով[26]: Սրանից ակնհայտ է, որ Տրդատ II-ը հեռահար քաղաքական դիտավորությամբ Սասանյանների դեմ պատերազմի կարգախոս է դարձրել ոչ թե իր երկրի օրինական սահմանների վերականգնումը, այլ տոհմական վրեժխնդրությունը: Ագաթանգեղոսը վկայում է, որ Հայոց արքան *«դեսպան արարեալ, զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա (Արտաշիրի-Ծ.հ.) թագաւորութեանն»*[27]:

Հայ մատենագիրները ցավով են արձանագրում, որ *«տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն»*[28]: Այդուհանդերձ, Տրդատ II-ի քաղաքական

նացւոյ Պատմութիւն հայոց: Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, II, ՀԱ (այսուհետ՝ Խորենացի Մ.):

[25] *Ագաթանգեղոս*, 19:

[26] *Մելիքյան Ա.*, Հայաստանը և Սասանյան հեղաշրջումն Իրանում, *Գիտական նյութերի ժողովածու*, Վանաձոր, 2003, էջ 172-176:

[27] *Նույն տեղում: Խորենացի Մ.*, II, ՀԲ:

[28] *Ագաթանգեղոս*, 20: *Խորենացի Մ.*, II, ՀԱ:

քարոզչությունը մասամբ հասել է իր նպատակին. «*Արդ՝ ի միւս ևս ի գլուխ տարւոյն,– գրում է Ագաթանգեղոսը, սկսաներ Խոսրով (Տրդատ II-ծ.ի) թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զզօրս Արուանից և Վրաց, և բանալ զդրունս Ալանաց և զՃորայ պահակին, հանել զզօրս Հոնաց...»:* Ագաթագեղոսը Տրդատ II-ին օգնության եկածների մեջ հիշատակում է նաև լփիներին ու ճիղբերին[29]. «*Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիով և բուռն կազմութեամբ Արուանք, Լփինք և Ճիղպք և այլ ևս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտաւանայ խնդրեսցեն»[30]:* Սասանյանների դեմ պայքարում Տրդատ II-ի բնական դաշնակիցներն էին նաև մարերն ու պարթևական զորքի մնացորդները՝ Արտավանի որդիների գլխավորությամբ:

Հայ-պարսկական անդրանիկ բախման աշխարհագրությունը Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ում նկատելիորեն այլ է, քան Դիոն Կասսիոսի երկում. «*Սկսաներ Խոսրով (Տրդատ II-ծ.ի) թագաւորն Հայոց....ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչ ի դրունս Տիսբոնի: Աւար առեալ զերկիրն ամենայն՝.... ջնջել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել քակել, հիմն ի վեր ջանայր առնել, համարէր բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից»[31]:* Այդուհանդերձ, նրա երկի 21-րդ պարագրաֆում ներ-

[29] Հ. Աստուրյանն այս ազգերին ընդհանրական կերպով անվանում է մազքութներ, որոնք մինչև V դ. ունեին Արշակունի արքաներ (*Աստուրեան Հ.*, Նշվ. աշխ., էջ 235): Բ. Հարությունյանը սրանց նույնացնում է Կ. Տակիտոսի հիշատակած սկյութական թագավորության բնակչության հետ, որոնք տակավին I դ. կառավարվում էին Արշակունիների արքայատան կողմից (*Հարությունյան Բ.*, Էրիխ Քեթենհոֆեն, Տրդատը և Պայկուլեի արձանագրությունը, ՊԲՀ 1996, թիվ 1-2, էջ 354-355):

[30] *Ագաթանգեղոս*, 19:

[31] *Նույն տեղում*: Կ. Թումանովի կարծիքով Ագաթանգեղոսի այս վկայությունները Սեպտիմիոս Սևերոսի արևելյան պատերազմներին հայոց Վաղարշ II և Խոսրով I արքաների մասնակցության արձագանքներն են (*Toumanoff C.*, The third century Armenian Arshacids. A Cronological commentary. *Revue des études Arméniennes*. N VI, 1969, pp. 238-239): Հմմտ. *Երեմյան Ս.*, Վաղարշ II-ի քաղաքական հարաբերությունները Հռոմի և պարթևների հետ, *ՊՀՀ*, 1976, թիվ 4, էջ 47): *Նույնի*՝ Հայաստանը և վերջին պարթև Արշակունիների պայքարը Հռոմի դեմ, *ՊՀՀ*, 1977, թիվ 4, էջ 63-65):

կայացված վճռական ճակատամարտի տեսարանը ակնհայտորեն աղերսվում է Դիոն Կասսիոսի վերոնշյալ վկայության հետ. *«Բայց սակայն [Արտաշիրը] ոչ կարաց ունել զդէմ նորա (Հայոց արքայի – Ծ.հ.), փախստեայ լինէր առաջի նոցա. Զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւալ կացուցանէին և չարախտավատ վատնէին և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին»*[32]: Պատումային ընդհանրությունը թույլ է տալիս կարծելու, որ խոսքն այստեղ Որմիզդականի ճակատամարտից հետո Մեծ Հայքի հարավային սահմանագլխին տեղի ունեցած առաջին խոշոր ընդհարման մասին է:

Համաձայն Ագաթանգեղոսի՝ վերոնշյալ իրադարձությունը տեղի է ունեցել Արտավանի սպանության հաջորդ տարվա տարեմուտին[33]՝ 225 թ.: Այդ թվագրումը չի հակասում դեպքերի զարգացման Դ. Կասսիոսի նշած հաջորդականությանը, քանի որ անհնարին է պատկերացնել, որ պարսկական զորքը կարող էր միևնույն տարում Որմիզդականի մոտ մեծ ճակատամարտ տալ Արտավանի դեմ, անհաջող պաշարեր Հաթրան, այստեղ «իր զինվորներից շատերին կորցնելուց» և դեպի Մարաստան ու Պարթևստան կատարած երկար ռազմերթից հետո արշավեր նաև Հայաստանի դեմ:

Շատ ուշագրավ են հաղթական արշավանքից հետո Հայաստան վերադարձած Տրդատ II-ի քարոզչական գործունեության վերաբերյալ Ագաթանգեղոսի հաղորդումները. *«Ապա հրաման տայր ընդ կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, եաւթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման: Սպիտակ գլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք... զիւր ազգին Արշակունեաց զհայրենեաց պաշտամանց տեղիսն մեծարէր»*[34]:

Ակնհայտ է, որ Արշակունի արքայատների պատվո հարաբերություններում «առաջինի» դրությանը հասած Հայոց արքան, ուխտագնացություն կատարելով Փայտակարան աշխարհի Յոթնա-

[32] *Ագաթանգեղոս*, 19:

[33] *Նույն տեղում*:

[34] *Ագաթանգեղոս*, 21-22:

փորյան բագինք սրբավայր[35] և պաշտամունքի տուրք մատուցելով աստվածարկված նախնիներին, փորձել է «տոհմական վրեժի», այլ կերպ ասած՝ Սասանյանների դեմ համադինաստիական պայքարի խնդիրը պահել օրակարգում: Հետևաբար, չպետք է պատահական համարել, որ նախնյաց մեծարանքի վայր էր ընտրվել ոչ թե Դարանաղյաց Անին կամ Արշակունիների նախնիների պաշտամունքին ձոնված Յաշտասարը՝ արաբական աղբյուրների հիշատակած Abraš tauīm-ը (Ապար [ցեղի] զոհասար)[36], այլ «Արշակունյաց սփյուռքի» խաչմերուկում գտնվող Յոթնափորյան բագինքը: Այստեղ էին ավանդաբար խաչվում, հարաբերվում Արշակունիների արքայատոհմի պարթևական, հայկական, մարական, վրացական, աղվանական, մազքութական ու հավանաբար նաև քուշանական ճյուղերը[37]:

Տրդատ II-ի քաղաքական քարոզչությունն այս անգամ ևս հասել է իր նպատակին: Հաջորդ՝ 226 թ. վերաբերյալ Ագաթանգեղոսը վկայում է. «*Իսկ ի գալուստ ամին միւսոյ զօր բազում կուտէր յոյժ, զումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, և ևս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի...*»[38]: Ըստ Ագաթանգեղոսի՝ Տրդատի երկրորդ արշավանքը ևս ուղղված է եղել դեպի Ասորեստան: Դրան համապատասխանում է Մ. Խորենացու հաղորդումն այն մասին, որ «*Տրդատ միահամուռ իւրովքն, և որք*

[35] Ս. Երեմյանը Յոթնափորյան բագինքը նույնացնում է Կ. Պտղոմեոսի հիշատակած Գաբառու բագինի (Γαβαροι βωμοι) հետ (*Երեմյան Ս.*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 46, 51):

[36] *Фрай Р.Н.*, Наследие Ирана, М., 2002, с. 245-246, прим. 10. *Պետրոսյան Ս.*, Փայտակարանը և Պարսպատունիքը մ.թ. I դարի երրորդ քառորդում, ՊԲՀ, 1975, թիվ 2, էջ 179:

[37] Ն. Ադոնցը, բանահյուսական քննության առնելով «Կարնամակը», թաքուցյալ կապ է ենթադրում նրա վիպական հերոս Հավթանբոխտի և Ագաթանգեղոսի հիշատակած Յոթնափորյան բագինքի միջև (*Ադոնց Ն.*, Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև, տե՛ս Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 117): Զրադաշտական գաղափարախոսության մեջ Սասանյան արքաների՝ իբրև չարի ու խավարի ուժերի դեմ պայքարողներ հանդես գալու փաստը տեղիք է տալիս այն հարցադրմանը, թե արդյո՞ք «Կարնամակի» Հավթանբոխտը Արտաշիրի դեմ պայքարող «Արշակունյաց սփյուռքի» վիպական կերպավորումը չէ:

[38] *Ագաթանգեղոս* 23:

ընդ իւրովքն էին զօրքն, ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից դիմեաց տարեկան չուառորութեամբ»[39]: Սակայն այս երկրորդ արշավանքի կապակցությամբ Պատմահայրն անում է մի հույժ կարևոր հավելում, որն անգնահատելի լուսանցք է տրամադրում S 89.4 դրամների ծագումնաբանությունը պարզելու համար: Նրա վկայությամբ հայոց արքան այս երկրորդ արշավանքի ընթացքում հասել է Մարաստան, որտեղ տիրել է Էկբատան քաղաքին[40]: Ճիշտ է, Մ. Խորենացին այս իրադարձությունը սխալմամբ վերագրել է Տիդատ III-ին, սակայն դրա մեղավորը ոչ թե Խորենացին է, այլ նրա բանահյուսական աղբյուրը՝ հայկական ժողովրդական վեպը, որը տակավին IV դ. մասամբ ակամայից՝ անունների նմանության պատճառով, մասամբ էլ որոշակի գաղափարական նկատառումներով Տրդատ II-ի որոշ գործեր վերագրել էր Տրդատ III-ին: Ամեն դեպքում, վաղուց է հիմնավորված, որ հիշյալ արշավանքը, որի հետ Մ. Խորենացին կապում է Կամսարականների գաղթը Հայաստան, իրականում կատարվել է Տրդատ II-ի կողմից՝ պարթևական տիրապետության անկման ժամանակաշրջանում[41]:

Արտավանի որդիների և նրանց ղեկավարած պարթևական զորքի հետ միանալը Տրդատ II-ի ռազմավարական գերխնդիրն էր: Մարաստանը Իրանում հակասասանյան պայքարի վերջին կղզյակն էր, որը պետք էր փրկել լիակատար պարսկական ռազմակալումից, քանի որ միայն այդ դեպքում Տրդատ II-ը կարող էր Արշակունիների տիրապետության վերականգնման հույսեր փափագել:

Ինքնին հասկանալի է, որ Մարաստան հասած Հայոց արքան, որպես հակասասանյան պայքարի առաջնորդ և հիմնական դերակատար, ազատ պետք է լիներ պատերազմի պահանջմունքների բավարարման համար տնօրինելու այդ երկրի ոչ միայն մարդկային

[39] *Խորենացի Մ.*, II, ՃԷ:

[40] *Խորենացի Մ.*, II, ՃԷ:

[41] *Կոզեան Ս.*, Կամսարականները «տեարք Շիրակայ և Արշարունեաց», Պատմական ուսումնասիրութիւններ, Վիեննա, 1926, էջ 1-13: *Մանանդյան Հ.*, նշվ. աշխ., էջ 89-90:

և ռազմական ռեսուրսները, այլև Էկբատանի արքայական գանձարանի նյութական միջոցները: Վերջիններս անհրաժեշտ էին առաջին հերթին Տրդատի դաշնակից լեռնականներին վարձատրելու համար: Բանն այն է, որ ի տարբերություն նախորդ՝ դեպի Ասորեստան և Միջագետք կատարած արշավանքի, երբ կովկասյան լեռնականները կարող էին անզուսպ թալանի տրվել, այս երկրորդ արշավանքի դեպքում նրանք դաշնակից երկրի տարածքում էին և հետևաբար, պարտավոր էին ձեռնպահ մնալ ավարառությունից: Պատերազմին նրանց մասնակցության հատուցումը պետք է լիներ օրինական ճանապարհով և, բնականաբար, այն անձի կողմից, որի կանչով նրանք հասել էին Մարաստան: Բնականաբար, դաշնակիցներին վարձատրելու համար Տրդատ II-ը օգտագործել է Էկբատանի գանձարանի միջոցները: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ընդհանուր տնտեսական անկման պայմաններում Արտավան V-ը իր գահակալության վերջում երեք մեծ արշավանքներ էր ձեռնարկել ընդդեմ պարսիկների[42], ապա կարող ենք պատկերացնել, որ էկբատանյան գանձարանում բավարար քանակությամբ հատված դրամ լինել չէր կարող: Ուստի Տրդատը վերոնշյալ նպատակի համար կարող էր օգտագործել արծաթի պաշարները: Ինչպես երևում է, նա դա արել է յուրովի՝ միաժամանակ լուծելով արշավանքի հետ կապված և՛ գործնական և՛ գաղափարական խնդիրները: S 89.4 դրամների հորինվածքային ինքնատիպությունը հիմք է տալիս կարծելու, որ նա հրամայել է ձուլածո պաշարներից դրամ հատել՝ նրա հորինվածքում զետեղելով սեփական գաղափարական-քաղաքական հռչակագրերն ու նպատակները: Դրամի երեսի ստեղծման համար օգտագործվել է Արտավան V-ի պատկերով S 89 տիպի դրոշմոցը, որով և ապահովվել է նոր դրամների մարաստանյան կոլորիտը: Սակայն էապես փոփոխվել է դրամների դարձերեսի հորինվածքը, քանզի Տրդատը «պարթևական աղեղնավորի» պատկերի և Արտավանի անվան ու տիտղոսի միջև դրոշմել է տվել իր անունը: Այսպիսով, «Արշակունիների տոհմական վրեժխնդրության» պայքարի առաջնորդը զորքին իբրև վար-

[42] *Dio Cass.* LXXX. 3, 1. *Մշիխա Զեխա*, էջ 82-83:

ձավճար տրվող դրահմաները վերածել է յուրօրինակ հուշադրամների, որոնց թե՛ երեսի, թե՛ դարձերեսի հորինվածքները այլևս նոր իմաստ և նշանակություն ունեին: S 89.4 դրամների երեսին նահատակ Արտավան V-ի պատկերն այժմ «հիշեցման» իմաստ էր ստանում: Բայց ավելի խոսուն էր դառնում դարձերեսի փոփոխված հորինվածքը: Իր անունը զետեղելով Արշակունիների արքայատան հիմնադիր նախնի Արշակ I-ի պատկերի ու այդ նույն պետության վերջին և արդեն նահատակ տիրակալ Արտավան V-ի անվան միջև՝ Հայոց Տրդատ II արքան պատկերագրության լեզվով հայտարարում էր, որ աստվածարկված նախնու կողմից առաջ պարզած արքայականության խորհրդանիշի՝ աղեղի հասցեատերն այլևս ինքն է:

Վերոնշյալ մեկնաբանության տեսանկյունից հարց է առաջանում, թե ինչու Տրդատը S 89.4 դրամների վրա իրեն արքայական տիտղոսով չի հիշատակել: Սրան ստույգ պատասխանելը դժվար է: Ինչպես արդեն նշել ենք, անհիմն կլինի կարծելը, որ դրա պատճառը եղել է «պարթևական աղեղնավորի» և Արտավանի անունն ու տիտղոսը կրող տողի միջև տարածքի անձուկությունը: Հնարավոր է, որ Հայոց արքան չի նշել իր տիտղոսը՝ զգուշանալով, որ Արտավանի որդիները դա կարող են Մարաստանի նկատմամբ իր հավակնության նշան դիտել: Մենք ավելի հակված ենք կարծելու, որ Տրդատը բաց է թողել իր տիտղոսը՝ համարելով, որ միայն իր անունն իսկ բավական է հասկանալու համար, թե ով է «Արտավանի մահվան վրեժառության» առաջնորդը և համաբան զորքի վարձատրողը:

S 89.4 դրամները թվագրված չեն: Սակայն ելնելով Մ. Խորենացու այն հաղորդումից, որ Տրդատի մարաստանյան արշավանքը տևել է մեկ տարի, կարելի է գալ այն հետևության, որ դրանք թողարկվել են 226/227 թ.:

Մշիխա Զեխան պատմում է, որ Արտավանի վախճանից որոշ ժամանակ անց նրա փոքր որդին, որ Արշակ էր կոչվում, պարսիկների կողմից գերվել և սպանվել է Տիզբոնում[43]: Դա, թերևս, հուշում

[43] *Մշիխա Զեխա*, Ադիաբենեի եկեղեցու պատմություն, էջ 82-83:

է, որ Մարաստանում Տրդատի և նրա դաշնակիցների պայքարը անհաջողության է մատնվել: Չստանալով պարթևական պահլավների աջակցությունը՝ «*Տրդատայ իւր հաստատեալ զեօթնապարիսպեանն Եկբատան, երկրորդ և վերակացուս յինքենէ թողեալ՝ դառնայ ի Հայս...*»[44]:

Այսպիսով, գրավոր աղբյուրների տեղեկությունների և S 89.4 դրահիմաների հորինվածքային առանձնահատկությունների համեմատական քննությունից կարելի է գալ երկու փոխկապակցված եզրահանգման. նախ՝ քննարկված դրամի հեղինակը Հայոց արքա Տրդատ II-ն է, որն այն թողարկել է 226/227 թ. դեպի Մարաստան կատարած մեկամյա արշավանքի ընթացքում, երկրորդ՝ Ագաթանգեղոսի ու Մ. Խորենացու հաղորդումները Արտաշիր Սասանյանի դեմ Հայոց արքայի վրեժխնդրական պայքարի մասին բնավ էլ վիպական չեն, այլ իրապես արտացոլում են պատմական անցյալի իրողությունները:



Ira and Larry Golberg Auctioneere,
83 (7-10 January 2015), Lot 4703.

[44] *Խորենացի Մ.*, II, ՁԷ:

Գրականություն

1. Աբեղյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1944:
2. Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց. Աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանաեանց, Տփղիս, 1909:
3. Ադոնց Ն., Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև, Երկեր, հատոր Ա., Երևան, 2006:
4. Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք. Մինչեւ 428 յ-Ք., Վիեննա, 1912:
5. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963:
6. Երեմյան Ս., Վաղարշ II-ի քաղաքական հարաբերությունները Հռոմի և պարթևների հետ, *ՊԲՀ,* 1976, թիվ 4:
7. Երեմյան Ս., Հայաստանը և վերջին պարթև Արշակունիների պայքարը Հռոմի դեմ, *ՊԲՀ*, 1977, թիվ 4:
8. Կոգեան Ս., Կամսարականները «տեարք Շիրակայ և Արշարունեաց», պատմական ուսումնասիրութիւններ, Վիեննա, 1926:
9. Հարությունյան Բ., Էրիխ Քեթենհոֆեն, Տրդատը և Պայկուլեի արձանագրությունը, ՊԲՀ 1996, թիվ 1-2:
10. Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թթ.), Երևան, 1945:
11. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մաս Ա, Երևան, 1957:
12. Մելիքյան Ա., Հայաստանը և Սասանյան հեղաշրջումն Իրանում, Գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, 2003:
13. Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը (Պատմական Հայաստանի Սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն), Երևան, 2016:
14. Մշիխա Զեխա, Ադիաբենեի եկեղեցու պատմություն. Թարգմանությունը Հ. Գ. Մելքոնյանի, տե՛ս *ՕԱՀՀՄ*, հատ. 8. Ասորական աղբյուրներ, Երևան, 1976:
15. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց: Աշխատութեամբ Մ. Աբեղյան և Ս. Յարութիւնյան, Տփղիս, 1913:
16. Պետրոսյան Ս., Փայտակարանը և Պարսպատունիքը մ.թ. I դարի երրորդ քառորդում, *ՊԲՀ*, 1975, թիվ 2:

17. Տաշեան Հ., Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղայ գրոց, Վիեննա, 1891:
18. Бикерман Э., Государство Селевкидов, М., 1985.
19. Дибвойз Н. К., Политическая история Парфии, Санкт-Петербург, 2008.
20. Фрай Р.Н., Наследие Ирана, М., 2002.
21. Dio's Roman History, in Nine Volumes, with an English Translation by Earnest Cary, Vol. IX, London-Cambridge-Massachusetts, 1955.
22. Ira and Larry Golberg Auctioneere, 83 (7-10 January 2015).
23. Olbrycht J. M., Parthian King's Tiara – Numismatic Evidence and Some Aspects of Arsacid Political Ideology, *Notae Numismaticae*, Tom II, Kraków.
24. Sellvood D., An Introduction to the Coinage of Parthia, London, 1980.
25. Sellvood D., Parthian Coins, In: *CHI*, vol 3(1), Ed. by E. Yarshater, Cambridge, 1983.
26. Sellwood D., The End of the Parthian Dynasty, *Spink Numismatic Circular* 98, 1990.
27. The New York Sale, Auction XXXIV, (January 6, 2015).
28. Thomas E., Early Sassanian Inscriptions, Seals and Coins, London, 1868.
29. Toumanoff C., The Third century Armenian Arshacids. A Chronological and Genealigical Commentary. *Revue des études Arméniennes*. No VI, 1969.
30. Triton Auction VII (12 Jan 2004).
31. Walker A., Forgeries and Inventions of Parthian Coins, *Bulletin on Counterfeits,* Vol. 19 No. 2 1994/5, Editor: Silvia Hurter, Zurich, 1995.
32. Wroth W., *Catalogue of the Coins of Parthia*. In: *Catalogue Of Greek Coins in the British Museum*, vol. 23, London, 1903.
33. Zonaras Ioannes, Annales, ex recensione Mauricii Pinderi, Bonnae, Bonnae impensis ed. Weberi, tome II, 1844, XII, 21.

Реинтерпретация парфянских монет S89.4

Меликян Артур

Резюме

Ключевые слова: *драхма, Артабан V, Трдат, Аршакиды, Парфянское государство, Вормиздакан*

Начиная с 19 века предметом поверхностного внимания нумизматов стал один из типов парфянских серебряных драхм, который первоначально был приписан кажущемуся последнему парфянскому царю Артавазду, а позднее – парфянскому царю Артабану V-ому. В классификации Д. Селвуда эти драхмы были приписаны к 89 типу в качестве его 4-го подтипа. В 400-летней истории чеканки парфянских монет эти монеты выделяются тем, что на их оборотной стороне, кроме имени и титула парфянского царя Артабана V -ого, упомянуто также имя «Трдат». Принято считать, что он был военачальником Артабана V-ого, который после смерти своего царя продолжил борьбу против Сасанидов и, чтобы платить войску, повторно выпустил монеты Артабана V-ого. Наше исследование показывает, что упомянутый на монетах S89.4 Трдат – армянский царь Трдат 2-ой (216-252 гг.), который после смерти Артабана V-ого возглавил борьбу против Сасанидов. В 226 году, отправившись на помощь сыновьям Артабана, он со своей армией и союзной армией кавказских горцев дошел до Мидии. Для выплаты войску жалованья на монетном дворе Экбатана он выпустил вышеупомянутые монеты. Трдат на лицевой стороне монет типа S89.4 оставил неизменным портрет Артабана V-ого, но чтобы подчеркнуть свою руководствующую роль в этой борьбе, он повелел поставить свое имя между изображением «парфянского лучника» и линией с именем Артабана.

The Reinterpretation of S 89.4 Parthian Coins

Meliqyan Arthur

Summary

***Key words**: drachm, Artabanus V, Tiridates, Arshakids, Parthian empire, Vormizdakan*

Since 19th century the transient focus of attention of numismatists has become a type of Parthian silver drahm, which was originally attributed to the imaginary last Parthian king Artavazdes and later to the Parthian king Artabanus V. In the classification of D. Sellwood it was attributed to the type of 89, as its 4th subspecies. In the Parthian four-hundred year coinage these coins stand out for that on their reverse side besides the name and title of the Parthian king Artabanus V there is also mentioned the name "Tiridat". It is considered that he was the military leader of Artabanus V, who continued the struggle against the Sasanians after the death of his king and for paying the soldiers he reissued the coins of Artabanus V. Our examinations show that, Tiridat mentioned on the 89.4 type coins, is the Armenian king Tiridat II (from 216 to 252), who led the struggle against Sasanians after the death of Artabanus V. In 226 going to help the sons of Artabanus he, with his and his allied Caucusian forces reached Media. For rewarding the army he struck the subject matter coins in the mint of Ekbatana. For underlining the aim of the struggle and his performance in it, Tiridat let the portrait of the 89 type coins of Artabanus invariable, but on the reverse side, in the line, containing the image of Parthian archer and the name of Artabanus, he stamped his name.

Ներկայացվել է 07.05.2019 թ.
Գրախոսվել է 14.05.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

Կ. Պոլսի «Համազգեաց ընկերության» առնչությունները մասոնության հետ

Մովսիսյան Ֆելիքս

Հանգուցային բառեր՝ *Թանզիմաթ, բարեփոխումներ, Փարիզ, կրթություն, մտավորականներ, ազգային միասնություն, համերաշխություն, եղբայրություն, փոխօգնություն, մասոնություն:*

19-րդ դարի 50-60-ական թվականները արևմտահայության կյանքում նշանավորվեցին սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական, մշակութային և կրթական փոփոխություններով: Արևմտահայությունը լուրջ դերակատարում ուներ հատկապես Կ. Պոլսի կյանքում, որտեղ հայ գաղթօջախը տարեցտարի ստվարանում էր Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից եկած հայության հաշվին: Նրանք զբաղեցնում էին մայրաքաղաքի ծայրամասային 20 թաղամասերի կեսից ավելին[1]: XIX դարի սկզբին Կ. Պոլսի 860 հազար բնակչից 150 հազարը հայեր էին[2], որոնց թիվը 1860թ. կազմեց 250 հազար: Քսանից ավելի հայ ամիրայական գերդաստաններ երկար տարիներ կարևոր դեր էին խաղում Օսմանյան կայսրության տնտեսության տարբեր ոլորտներում: Նրանցից Տատյան, Տուզյան, Պալյան, Արփիարյան և այլ գերդաստանների զավակները ժառանգաբար ղեկավարում էին կայսրության համար կենսական նշանակություն ունեցող արդյունաբերության բազմաթիվ ճյուղերը[3]: Կ. Պոլսի ներքին առևտրի գերակշիռ մասը կենտրոնացած էր «եվրոպականացած» հայ վաճառականների ձեռքում, որոնք սերտ կապեր ունեին ֆրանսիական, անգլիական և իտալական շուկաների հետ[4]: Կ. Պոլսի շուրջ 40 հազար հայ ար-

[1] Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1902, էջ 198:

[2] Տե՛ս Յ. Գ. Փալագաշեան, Տեղադրութիւն Կոստանդնուպոլսոյ և իւր շրջակայից, հատակագծից պատկերով Վոսփորի, Կ. Պոլիս, 1887, էջ 7:

[3] Տե՛ս Ստեփանյան Հ. Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012:

[4] Տե՛ս Հ. Գ. Մրմրեան, Թուրքահայոց հին վաճառականութիւնն եւ վաճառականք, Կ. Պոլիս, 1908, էջ 47, 53:

հեստավորներն ու առևտրականները[5] ընդգրկված էին 100-ից ավելի էսնաֆությունների մեջ[6]: Նրանք «զորաւոր կազմակերպութիւններ ունեին, եւ իրենց արհեստապետովը եւ արհեստապետական ժողովներովը (լոնճա օտասը) կը ներկայացնեին տեսակ մը ինքնագլուխ վարչութիւններ և մատակարարութիւններ»[7]: Կ. Պոլիսը արևմտահայության կրթության և մշակութային խոշոր կենտրոն էր, որտեղ գործում էին Արամյան, Արևելյան, դպրոցական և թաղային մի շարք թատրոններ[8], 25 տպարան, գրավաճառանոց[9], 42 վարժարան[10], 32 հազարից ավելի սովորողներով[11], լույս էին տեսնում տասնյակ թերթեր և հանդեսներ[12]:

Պոլսահայության ձեռքբերումները մասամբ պայմանավորված էին սուլթան Աբդուլ Մեջիդի 1839թ. նոյեմբերի 9-ին հռչակած Գյուլհանեների արքայական պալատում հռչակված Հաթթը-շերիֆ հրովարտակով[13], որով Թուրքիայում սկիզբ դրվեց Թանզիմաթի դարաշրջանի[14]: Սեփական նախաձեռնությամբ բարեփոխումներ հռչակելու «Գլխավոր, եթե ոչ միակ պատճառը» թուրքական կառավա-

---

[5] «Արձագանք», Թիֆլիս, 1885, նոյեմբեր, թիվ 10, էջ 142-143:

[6] Տե՛ս Ընդարձակ օրացոյց ազգային հիվանդանոցին, Կ. Պոլիս, 1902, էջ 199:

[7] Ա. Ալպոյաճեան, Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը: «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 202-203:

[8] Տե՛ս Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատոր առաջին, Երևան, 1962:

[9] Տե՛ս Ք. Կորկոտյան, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964, էջ 107-150:

[10] Տե՛ս Գ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 427:

[11] Տե՛ս «Արձագանք», 1885, թիվ 10, էջ 143:

[12] Տե՛ս Հայ պարբերական մամուլի մատենագիտություն(1794-1967), կազմեց Ա. Կիրակոսյան, Երևան, 1970, Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց Մ. Ա. Բաբլոյան, Երևան, 1985:

[13] «Արշալոյս Արարատյան», Զմյուռնիա, 1841, 19 նոյեմբերի, թիվ 52, Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, էջ 175:

[14] Տե՛ս Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 499, Миллер А. Ф., Краткая история Турции. М., 1948, с. 68-69; Шабанов Ф., Государственный строй и правовая система Турции в период Танзимата, Баку, 1967, с. 42-50.

րության «ոչ մեծ լուսավոր խմբի ձգտումն էր բարեփոխումների միջոցով երկիրը փրկել կործանումից», քանի որ «պետությունը կորցնում է իր ուժը, եթե օրենքները չեն պահպանվում»[15]: Թանզիմաթը հռչակում էր անկախ կրոնական դավանանքից, կյանքի, պատվի և գույքի լիակատար երաշխավորություն, պետական հարկերի կանոնավորում ու արդարացի գանձում, դատավորության հրապարակայնություն և իրավահավասարություն օրենքի առաջ: Կայսրության հպատակ ոչ մահմեդական ժողովուրդներն ստանում էին քաղաքացիական մի շարք իրավունքներ, այդ թվում՝ զինվորական և բժշկական վարժարաններում սովորելու, բանակում ծառայելու և պետական պաշտոններ ստանալու հարցում[16]: Արևմտահայությունը խանդավառված էր թանզիմաթի «հաւասարութեան, արդարութեան և բարեկարգության փրկարար սկզբունքները» հաստատելու խոստումներից, որոնք նրանց «վարչային և ընկերային բարենորոգման հզոր մղում տուին»[17]: Դրան մեծապես նպաստեց Թուրքիայում բարենորոգումներ իրականացնելու շրջանակում հանրային կրթությանը զարկ տալը:

Սկսած 1836թ. մի խումբ մեծատուն ամիրաներ ձեռնամուխ եղան Կ. Պոլսի հայ համայնքի երեխաների կրթության գործը կազմակերպելուն: 1836թ. Խասիգյուղում ստեղծվեց Ներսիսյան վարժարան, իսկ 1838թ. Սկյուտարում հիմնվեց Ճեմարան, որտեղ որպես օտար լեզու, իտալերենից բացի դասավանդվում էր նաև ֆրանսերեն: Այն դարձավ պետական վարժարաններում առաջին ընգրկված լեզուն: Դա պայմանավորված էր Բարձր դռանը Ֆրանսիայի դեսպանի ունեցած ազդեցիկ դիրքով և կաթոլիկ եկեղեցու առաքելությամբ, որոնք ֆրանսիական ազդեցության տարածման կարևոր հանգամանք էին: Մյուս կողմից 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխությունը և հատկապես Նապոլեոն Բոնապարտի վարած

[15] Миллер А. Ф. Мустафа паша Байрактар. М-Л., 1947, с. 73.

[16] Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 270, 499, Թումանեան Կ., Պատմութիւն Արևելեան խնդրոյ, Լոնդոն, 1905, էջ 264, Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 176-178:

[17] Քէչէեան Բ., Պատմութիւն Ս. Փրկչի հիւանդանոցին Հայոց, Կ. Պոլիս, 1887, էջ 90:

արտաքին քաղաքականությանը ոչ միայն Եվրոպայում, այլև Մերձավոր Արևելքում նույնպես նպաստել էին Ֆրանսիայի նկատմամբ հետաքրքրության խորացմանը: Այս իմաստով «աշխարհի քաղաքականութեան և մանաւանդ մտաւորական շարժման առանցքը Փարիզ էր, երբ Թուրքիոյ վերանորոգութեան ձեռնարկուեցաւ»[18]: Բացի այդ, ֆրանսերենը դարձել էր դիվանագիտության և միջազգային հաղորդակցության լեզու, այնպես որ թուրքական կրթական համակարգում ֆրանսերեն մտցնելը բնավ անսպասելի չէր: Դրանից շտապեց օգտվել պոլսահայությունը, որոնցից ամիրաները սկսեցին իրենց զավակներին Իտալիայից բացի ուղարկել նաև Փարիզ՝ կրթություն ստանալու:

Փարիզում բարձրագույն կրթություն ստացած առաջին պոլսեցին բժիշկ Պողոս Շաշյանն էր: Նա 1830թ. Իտալիայում, Պադուայի համալսարանն ավարտելուց հետո 1830-1832թթ. կատարելագործվեց Փարիզում: 1834թ. բժշկություն սովորելու նպատակով Փարիզ մեկնեցին Սերովբե Վիչենյանը և Գասպար Սինապյանը: 1835-1838թթ. Փարիզում հասարակական գիտություններ և լեզուներ էր սովորում Հակոբ Կրճիկյանը[19]: Սկսած 1840թ. Ֆրանսիան, և հատկապես Փարիզը, դարձան նշանավոր խառնարան հայության համար, որտեղ դարբնվում էր թուրքահայ մտքի, լեզվի, գրականության, վարչական կազմի և բուն ժողովրդական կյանքի հեղաշրջումը, որը խոր ազդեցություն թողեց պոլսահայ մտավորականության ձևավորման վրա: Փարիզ մեկնած առաջին խումբ պոլսահայ երիտասարդներից Հ. Կրճիկյանը, Սերվիչենը, Ն. Ռուսինյանը և Գ. Օտյանը 1840-ական թվականներից սկսած «խմորիչը եղան այն շաղախին, որով պիտի պատրաստուէր ազգային զարգացման շէնքը և բուն իսկ Ազգային Սահմանադրութիւնը»[20]:

1841թ. սուլթան Աբդուլ Մեջիդի հրովարտակով հայերին, հույներին և հրեաներին թույլատրվեց կրթություն ստանալ Կ. Պոլսում, որտեղ սկսած 1826թ. միակ գործող բարձրագույն ուսումնական

[18] Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, էջ 227:
[19] Նույն տեղում, էջ 228-229:
[20] Նույն տեղում, էջ 232:

հաստատությունը՝ Զինվորական բժիշկների բարձրագույն վարժարանն էր: Այստեղ դասավանդումը կատարվում էր ֆրանսերեն և թույլատրվում էր այլազգիներին նույնպես կրթություն ստանալ, որը կապված էր մեծ խոչընդոտների ու սահմանափակումների հետ: Սուլթանի հրովարտակից հետո Կ. Պոլսում պետական և ազգային շրջանակներում կրթական շարժում սկսվեց, որը հովանավորում էին «լուսամիտ մեծահարուստ» ամիրաներ Հովհաննես Տատյանը, Հովհաննես Սեվերյանը, Կարապետ Պալյանը, Մկրտիչ Ճեզայիրլյանը և Պողոս Օտյանը[21]: Նրանք ֆինանսական աջակցություն ցույց տվեցին պոլսահայ աղքատ ընտանիքներից սերած ուսումնատենչ և ուշիմ երիտասարդներին կրթությունը շարունակելու Եվրոպայում: Ապավինելով հայ ամիրաների առատաձեռն նյութական աջակցությանը, քիչ տիրապետելով ֆրանսերենին, բոլորովին անծանոթ ֆրանսիացիների բարքերին ու հասարակական կյանքին՝ պոլսահայ պատանիները մեկը մյուսի հետևից բռնում էին Փարիզի ճանապարհը: 1840թ. Մկրտիչ ամիրա Ճեզայիլյանի հովանավորությամբ Փարիզ մեկնեց Գրիգոր Աղաթոնը: Նրա հետ միաժամանակ բժշկություն էր սովորում Նահապետ Ռուսինյանը: 1842թ. Ֆրանսիա մեկնած Գևորգ Սթիմառճյանը և Հակոբ Ամասյանը կրթություն ստացան Կրիևեռնի երկրագործական վարժարանում: 1844-1848 թվականներին Փարիզում կրթություն ստացան նաև Հարություն Սվաճյանը, Խաչատուր Պարտիզպանյանը և Նիկողայոս Զորայանը: Այդ տարիներին կրթություն ստանալու համար Փարիզ մեկնեցին նաև պոլսահայ նշանավոր ամիրաներ Տատյան և Պալյան գերդաստանների զավակները, սկզբում Առաքել, Հարություն և Գրիգոր Տատյանները, այնուհետև Հարություն և Նիկողայոս Պալյան եղբայրները[22]: Փարիզում կրթություն ստանալուց հետո Կ. Պոլիս վերադարձած կաթոլիկ հայեր Հ. Կրճիկյանը և Սերվիչենը ձեռնամուխ եղան ազգային գործերի վիճակի բարելավմանը և Պատրիարքարանի հետ համագործակցությանը: Նրանք սկսեցին «մեղմօրէն տարածիչը հանդիսանալ ֆրանսիական յեղա-

[21] Նույն տեղում, էջ 231:

[22] Նույն տեղում, էջ 230-233:

փոխութեան սուրբ սկզբանց և ժողովրդապետական գաղափարներուն, որոնք արդէն անզգայաբար պահանջ կը դառնային Կ. Պոլսոյ մէջ»[23]: Դրա արդյունքում, «խմորումը հզօր եղաւ» և Փարիզ ուղարկվեց պոլսահայ երիտասարդների երկրորդ խումբը:

1846-1862թթ. Փարիզում սովորեց և աշխատեց Ճանիկ Արամյանը, իսկ 1846-1852թթ.՝ Ստեփան Ոսկանյանը: 1848թ. կրկին Փարիզ մեկնած Խաչատուր Պարտիզպանյանին ընկերացավ Խաչատուր Միսաքյանը: Նրանք, ինչպես նաև Պալյան եղբայրները կրում էին Ն. Ռուսինյանի «լուսամիտ և յանդուգն գաղափարներու ազդեցութիւնը»[24]: 1848-1851թթ. Փարիզի Առևտրական բարձրագույն վարժարանում կրթություն ստացավ Կարապետ Յութուճյանը: 1848-1853թթ. Փարիզի բարձրագույն բժշկական համալսարանում սովորում էր Հովսեփ Շիշմանյանը(Ծերենց): Նրանցից հետո Փարիզի ճանապարհը բռնեցին Ավետիս և Թովմաս Խորասանճյան եղբայրները, ովքեր հետագայում դարձան մշակութային և հասարակական գործիչներ, ինչպես նաև Աբրահամ Երամյանը, Հովսեփ Պեյրանը և ուրիշները: Փարիզում կրթություն ստացած այս երկրորդ խումբ երիտասարդները «չկարողացան զերծ մնալ Ռուսինեանի ազդեցութիւնէն»: Դրան ավելացավ նաև «1848 թ. յեղափոխութեան ժամանակը, որ հզօր ներգործութիւն մը կ'ունենար ուղղակի այս երկրորդ խումբին վրայ»[25]: Այս խումբը կազմում էին Անտոն և Սարգիս Պալյանները, Կարապետ Յութուճյանը, Հովհաննես(Արզուման) Վահանյանը, Հաբեթիկ Նեվրուզյանը, Գրիգոր Մոզյանը, Միքայել և Թոմաս Խորասանճյանը, Հովհաննես Թյուլյուզյանը, Խաչիկ Կյումյուշյանը՝ բոլորն էլ ազդեցիկ մարդկանց զավակներ կամ «խիստ առաջադեմ ու ընդունակ պատանիներ»[26]: Նրանք հայրենի Կ. Պոլիս վերադարձան որպես փայլուն կրթություն ստացած իրավաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ և առևտրականներ: Փարիզում կրթություն ստացած

[23] Նույն տեղում, էջ 233:
[24] Նույն տեղում, էջ 234:
[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում:

երիտասարդ պոլսահայերը բարեկամական և ազգակցական կապերով կապված մարդկանց զավակներ էին: Նրանք տարիներ շարունակ միմյանց հետ շփման մեջ էին, միևնույն գաղափարներով խանդավառված և միևնույն ներշնչումներով տոգորված: Նրանց շնորհիվ 1840-ական թվականների Կ. Պոլսի «մթնոլորտը գերազանցապէս խանդավառիչ էր, հղի անգին գաղափարներով»[27]:

1840-ական թվականներին Եվրոպական համալսարաններում կրթություն ստացած պոլսահայերը լուսավորության, առաջադիմության և քաղաքական բարեփոխումների անհրաժեշտության գաղափարների ազդեցության տակ իրենց նվիրեցին ազգային միասնության, համերաշխության ու եղբայրական փոխօգնության գործին: Այդ երիտասարդները ժողովրդին «հոգածութեան և զոհողութեան հոգի կը ներշնչէին, և անոնց հովանաւորութիւնը իրենց աշխատութեանց միացնելով օգտակար հաստատութեանց նախաձեռնարկներ կըլլային»[28]: Եվրոպական լուսավորության և հասարակական առաջընթացի գաղափարներով տոգորված մի խումբ երիտասարդներ Կ. Պոլսում հիմնեցին հասարակական, կրթական, ազգային և մշակութային մի քանի ընկերություններ: Դրանց գործունեության ամենաեռուն շրջանը 1840-ական թվականներին էին, որը պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող բարեփոխումներով: Դրանք մեծապես ազդեցին հայ ընկերային և հասարակական կյանքի վրա: Կ. Պոլսի հայության շրջանում դրանց հիմնումը վկայությունն է այն բանի, որ այդ ընկերությունները «մի մի նշաններ էին թէ հասարակութիւնը որքան գեղեցիկ կերպով ըմբռնել է ընկերական սկզբունքը»[29]:

Այդ ընկերությունների թվում իր նպատակադրությամբ առանձնանում էր հատկապես 1846թ. մարտի 17-ին Բերայում հիմնված «Համազգեաց ընկերությունը»[30]: Այն հավակնում էր համապատասխանել իր անվանմանը, քանզի իր առաջնահերթ

[27] Նույն տեղում, էջ 235:

[28] Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Ա., Պէյրութ, 1961, էջ 3880:

[29] Լէո, Ստեփանոս Նազարեանց, հատոր Բ, Թիֆլիս, 1902, էջ 180:

[30] Քյոմուրճեան Ե., Ստամպոլի պատմութիւն,Վիէննա, 1931,էջ 568:

խնդիրը համարում էր գավառներում կրթություն տարածելը և «ազգին կրօնապէս անջատեալ մասերը յարաբերութեան դնելը»[31], և նպատակ էր հետապնդում «ազգասիրութիւն եւ ուսումնասիրութիւն եւ յառաջադիմութիւն ի բարոյական մասին»[32]:

«Համազգեաց ընկերությունը» հիմնադրեցին կաթոլիկ հայեր Մկրտիչ Սամանճյանը, Հակոբ Տավությանը, Ա. Լութֆյանը, Խաչատուր Գազազյանը, Հովսեփ Վարդանյանը, Կարապետ Թյուլպետճյանը, Սարգիս Ասկերյանը և Մերովբե Ազնավուրյանը[33]: Այս երիտասարդ ազգասեր և ուսումնասեր գործիչները հիմնականում Մուրադյան և Ռափայելյան վարժարանների շրջանավարտներ էին, որ «համամիտ եւ համակամ խորհրդով եւ հաւանութեամբ կամեցան հաստատել զընկերութիւն իմն ընդ Լուսավորչեան հայոց»[34]: Նրանք վերադառնալով հայրենի Կ. Պոլիս «թէ հանրային և թէ կրթական ծառայութիւն կը մատուցանէին ժողովրդին»[35]: Այս երիտասարդների համար «կրօնական տարբերութիւնը իսկական արգելք մը չէր որ միեւնոյն ցեղին ու հայրենիքին զաւակները հասարակաց օգտին ու շահուն համար միացնեն իրենց ուժերը եւ ձգտին հասարակաց վախճանի մը»[36]: «Համազգեաց ընկերության» կաթոլիկ անդամները կրոնական դավանանքի տարբերություն չէին դնում: Նրանց համոզմամբ «կրօնի տարբերութիւնը… չկրնար ազգերնիս երկուքի բաժանել»[37]: «Համազգեաց ընկերության» ստեղծումով դրա հիմնադիրները նպատակ էին հետապնդում «հռոմեական դաւանութեան վրայ պատրաստուած հայկական ազդեցութեան գաղափարը յառաջացնել»[38]:

«Համազգեաց ընկերության» կանոնադրությունը կազմեց Վե-

[31] Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, էջ 250:
[32] Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 349:
[33] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 250, Պէրպէրեան Ա., նշվ. աշխ., էջ 350-351:
[34] Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 339:
[35] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 250:
[36] «Արշալոյս Արարատյան», 1848, 30 ապրիլի, թիվ 310:
[37] Նույն տեղում:
[38] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Գ, մասն Ա, էջ 3822:

նետիկի Մխիթարյաններից Պետրոս վարդապետ Մինասյանը[39], իսկ քարտուղար ընտրվեց երիտասարդ բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը[40]: Ընկերության հիմնադիր ժողովը 76 մասնակիցների անունից մարտի 17-ին գրաբար մի ընդարձակ հայտարարություն տարածեց[41], որտեղ դրվատանքի արժանի և «անչափ խնդութեան առիթ» էր համարում ընկերության ստեղծումը: Հայտարարությունը կազմված էր եվրոպական լուսավորության, և հասարակական առաջընթացի գաղափարների ազդեցության տակ: Նրանում ասվում էր, որ ընկերությունը իր նպատակը համարում է «ամենայն ազգայնոց մերոց, փոյթ իմն եռանդեան ի կանգնումն ուսումնասիրաց, եւ ի զարգացումն ուսումնական ընկերութեանց… ի բաց զտգիտութեան փարատել քօղ ի մտաց, գիտել ստանալ զիմաստութիւն,…անյիշատակ թաղեալ երբեմն ի տգիտութեան խորս…, արդ զգլուխ ի վեր ամբարջեալ յաւերակաց շիրմացն, թախիծ մեզ արկանէ որդւոց իւրոց, մի զանց առնել զիւիք ի կենդանացուցանել զնա յիմաստութիւն…»: Առաջնահերթ խնդիր էր համարվում «առաւելուլ ընկերասիրութեան և ազգասիրութեան» գաղափարի տարածումը, ազգային համերաշխությունն ու միասնությունը: Հայտարությունը հայությանը մաղթելով «կատարելութեան սէր», հորդորում էր «մի միաբանութիւն ժողովեալ, երթիցուք ուր չիցէ զմեզ ճշմարիտ ազգասիրութիւն»[42]:

Ընկերության անդամները պարտադիր պետք է լինեին «հայադաւան, հռոմէադաւան եւ բողոքական ազգայիններ»: Նրանք իրենց առաջ նպատակ էին դրել հոգ տանել ազգի գրական, գիտական, հնագիտական, հայրենագիտական, արհեստավորական և առևտրական ոլորտների զարգացման ուղղությամբ: Ընկերությունը ղեկավարելու համար ընտրվեց վարիչ մարմին, որի կազմում մտան 3 տեսուչ, 12 խորհրդական, 12 խաղաղարար, 4 գանձապետ, 2 գրագիր, 3 գրաքննիչ: Ընկերության ժողովներում և վարիչ

[39] Տե՛ս Ասկերեան, Հասունեան քաղաքականութիւն, Տփղիս, 1868, էջ 77:
[40] Տե՛ս Զարդարեան Վ., Յիշատակարան, մաս Գ., Կ. Պոլիս, 1910, էջ 133:
[41] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Գ, մասն Ա, էջ 3823:
[42] «Արշալոյս Արարատյան», 1846, 19 ապրիլի, թիվ 257:

մարմնում որոշումները պետք է ընդունվեին ձայների մեծամասնությամբ[43]: «Համազգեաց ընկերության» անդամ դառնալու համար անհրաժեշտ էր վճարել 10 դահեկան, իսկ որպես անդամ՝ ամսական 5 դահեկան: Այս հասույթով, ստացված նվիրատվություններով բացվելու էին դպրոցներ, արհեստանոցներ, հրատարակվելու էին գրքեր[44]: Հայտարարության վերջում ընկերության հիմնադիրները ներկայացնում էին 10 կետեր, որոնք պետք է ընկնեին իրենց ապագա գործունեության հիմքում: Այդ կետերն էին.

«Ա. Միասիրտ, միակամ, խաղասէր շաղկապումն անձանց ի մի միաբանութիւն:

Բ. Յօրինուած եւ թարգմանութիւն գրեաց օգտակարաց, եւ հրապարակումն այնոցիկ տպագրութեամբ:

Գ. Կանգնումն վարժարանաց եւ դպրոցաց ի քաղաքս եւ գիւղս՝ ի դաստիարակութիւն ուստերաց եւ դստերաց:

Դ. Հմտութիւն եւ գործադրութիւն արուեստին երկրագործութեան:

Ե. Հետախոյզ քննութիւն հայրենականացն հնութեանց եւ սովորութեանց Զ. Հաւաքումն մատենից նախնեաց եւ դրամոց եւ այլոց նշխարաց հնութեանց:

Է. Հաւաքումն նիւթոց բնական պատմութեան կենդանեաց, բուսականաց և ընդերկրեաց:

Ը. Ուսումն ամենազգի արուեստից ծաղկելոցն աղանց:

Թ. Բարգաւաճումն վաճառականութեան ըստ եւրոպական օրինի:

Ժ. Ուսում անթերի գիտութեան վաստակելոց ի մետաղս»[45]:

Այս հայտարարությունից հետևում է, որ «Համազգեաց ընկերության» հիմնադիրներն իրենց առաջ դրել էին համազգային մի շարք լուրջ խնդիրների լուծում: Դրանք պահանջում էին ամենից առաջ ազգը համախմբել, դարձնել միակամ և նրա ուժերը նպա-

[43] Տե՛ս Ասկէրեան Յ., Նշվ. աշխ., էջ 78-79:

[44] Տե՛ս Պէրպէրեան Ա, Պատմութիւն հայոց, էջ 351, Պօղոսեան Հ. Եփրեմ, նշվ. աշխ., էջ 52:

[45] Պօղոսեան Հ. Եփրեմ, նշվ. աշխ., էջ 52:

տակառուղղել կրթության, դաստիարակության, տպագրության, երկրագործության, արհեստների, վաճառականության զարգացմանը: Կարևոր տեղ էր հատկացվում նաև ազգային արժեք ներկայացնող տարբեր նյութերի հավաքմանը, արվեստի և գիտության առաջընթացն ապահովելուն: Չնայած այս բավական ընդգրկուն ծրագրին, որը կարելի է համարել ընկերության հեռահար նպատակը, հայտարարությունը միաժամանակ ընդգծում էր, որ իր գործունեությունում առաջնահերթությունը տալու է հետևյալ երեք ուղղություններին: Դրանք նախատեսում էին. «1. թարգմանել կամ շարադրել կարևոր հատուածներ՝ մտքի զարգացումի համար: 2. ջանք ընել՝ հաստատուն վաճառականութիւն մը հիմ դնելու. 3. Պատրաստութիւն տեսնել՝ մանչերու եւ աղջիկներու վարժարաններ հիմնելու համար»[46]: «Համազգեաց ընկերության» հիմնադրումը ողջունեց զմյուռնահայ «Արշալույս Արարատյանը»: Թերթն այդ կապակցությամբ գրում է. «Անշուշտ յուրաքանչյուր հայրենասէր անձն յաջողութիւն եւ յառաջադիմութիւն պիտի բարեմաղթէ և նպաստամատոյց ըլլայ ըստ կարի Համազգեաց Ընկերութեանը եթէ, ինչպէս որ կը խոստանայ՝ ազգասիրութիւնը եւ ընկերասիրութիւնը միմիայն առաջնորդ ունենայ միշտ իր ամէն ընթացիցը»[47]:

Համազգային ընկերության անդամները «իրապես կրթված», լուսավորության, առաջադիմության, ազատամտության գաղափարներով ոգևորված ու «ազգային ոգով ներշնչված»[48] երիտասարդ մտավորականներ և «եվրոպականացած» վաճառականներ էին: 1840-ական թվականների վերջերին Փարիզում կրթություն ստացած 25-30 այդ հայ ուսանողները[49] «գիտական, ազատական, հասարակական լեցուն պաշարով»[50] վերադառնալով Կ. Պոլիս՝ դարձան ոչ միայն հասարակական ընկերությունների ու միու-

[46] Նույն տեղում:

[47] «Արշալույս Արարատյան», 1846, 19 ապրիլի, թիվ 257:

[48] Ալպոյաճեան Ա., Զմյուռնիոյ տպարանները, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1964, թիվ 2(25), էջ 78:

[49] «Արշալույս Արարատյան», 1848, 3 փետրվարի, թիվ 304:

[50] Ֆէնէրճեան Ա., Ազատ որմնադրութիւնը հայոց մէջ.- «Հայրենիք», Բոստոն, 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 92:

թյունների հիմնադիրներ, այլև արևմտահայ ազգային սահմանադրական շարժման հիմնական գաղափարախոսները, գործիչներն ու մասոնության տարածման գլխավոր դեմքերը: «Համազգեաց ընկերությունը» Կ. Պոլսում հիմնված առաջին հասարակական ընկերությունն էր, որի հիմնադիր անդամները սերտ առնչություններ ունեին մասոնության հետ: Այս հարցը հայ պատմագիտությունում դեռևս ուսումնասիրված չէ:

Ընկերության անդամներից ապագա դիվանագետ, Կ. Պոլսի Գերագույն ժողովի լոգոֆեթ[51], պոլսահայության շրջանում ազգային սահմանադրության գաղափարն առաջինը հղացած[52] Հակոբ Կրճիկյանը 1840-ական թվականների սկզբում Փարիզում անդամագրվել էր «Հարատևող բարեկամություն» օթյակին[53]: Նա «իր ժամանակի ամէնէն առաջընթաց մտաւորականներէն մեկը եղած է»[54], որ հանրային, հասարակական գործունեությունում ընկերակցում էր Փարիզում կրթություն ստացած և մասոնությանն անդամագրված բժիշկ Սերովբե Վիչենյանի (Սերվիչեն) հետ: Այս երկու անհատները դարձան «մեր ազգային շրջանակին մէջ… առաջապահները նոր մտքերու և գաղափարներու»[55]: Նրանց հետևորդների շարքերը հետզհետե ստվարացան Մուրադյան վարժարանի շրջանավարտների հաշվին, ովքեր բարեփոխումների շարժումը «ի կատար պիտի հանեին, ազգին մտաւորականութեան ուժը և ազդեցութիւնը մարմնաւորելով»[56]: «Համազգեաց ընկերության» հիմնադիրներից Անգլիայում կրթություն ստացած Սերովբե

[51] Տե՛ս Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 321, Թոփչեան Ա., Երիտասարդ Թուրքիան և հայերը, մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 235:

[52] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1902, հոկտեմբեր, թիվ 10, էջ 326:

[53] «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79, Պէյլէրեան Ա., Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական «Սէր» օթյակը ԺԹ դարուն:.-«Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրութ, 2001, էջ 151, 155, Jamgocyan O. Les Francs-Masons Arméniens et la Constitution de l' Armenie ottoman Constantinople 1863, Paris, 2017, p. 64.

[54] Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, էջ 230:

[55] Նույն տեղում, էջ 231:

[56] Նույն տեղում:

Ազնավուրը բարձրաստիճան մասոն էր, Լոնդոնի «Հորդանան» թիվ 201 և Մանչեսթրի «Odd Fellows» մասոնական օթյակների անդամ[57]: Ընկերության անդամներից հայտնի ազգային և հասարակական գործիչներ Հովսեփ Վարդանյանը, Կարապետ Յութուճյանը, Գրիգոր Մոզյանը, Միքայել Խորասանճյանը, Սրապիոն Հեքիմյանը և ուրիշներ 1850-ական թվականներին անդամագրվեցին Կ.Պոլսում գործող եվրոպական մասոնական օթյակներին:

Ընկերության հիմնադիր երիտասարդ հայ կաթոլիկները սոսկ նպատակ չէին հետապնդում ազգին կրթել, դաստիարակել ու լուսավորել: Նրանք, միաժամանակ առաջնորդվելով մասոնական եղբայրության գաղափարներով, ձգտում էին համերաշխություն, միասնություն և ազգասիրություն սերմանել հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցիներին դավանողների միջև: Սա «Համազգեաց ընկերության» գործունեության թերևս ամենագլխավոր նպատակներից մեկն էր: Պոլսահայ երիտասարդ մտավորականների գաղափարական ձևավորման վրա լուրջ ազդեցություն թողեցին հատկապես մասոնական օթյակների նախաձեռնած և գլխավորած 1848թ. եվրոպական հեղափոխական ու ազգային-ազատագրական պայքարը, ազգային միավորման և սահմանադրական շարժումները[58]: Եվրոպայում տեղի ունեցած հեղափոխական խմորումները, ի թիվս այլ ժողովուրդների, «արձագանք գտան հայ ազգին մէջ»[59], որի առաջադեմ երիտասարդությունը լուսավորության, հասարակական առաջընթացի և ազատության նոր հույսեր փայփայեց: Սակայն բախվելով թուրքական իշխանությունների՝ քրիստոնյա ժողովուրդների իրավունքների և ազգային շահերի ոտնահարմանը՝ հայ հասարակական կազմակերպություններն ի զորու չեղան լիարժեք գործունեություն ծավալելու: «Համազգեաց ընկերությունը» գործունեության սկզբում հարկադրված եղավ հաղթահա-

[57] «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 83, 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 151, Jamgocyan O., Նշվ. աշխ., էջ 57-58, 60:

[58] Տե՛ս Вейл Ж. История республиканской партии во Франции с 1814 по 1870 гг., М., 1906, с. 57; История XIX века, Под ред. Лависса и Рамбо, т. 3, М., 1938, с. 349; Ридли Дж. Фримасоны. М., 2007,с.252-257.

[59] Ալպոյաճեան Ա., Զմյուռնիո տպարանները, էջ 79:

րել մի շարք դժվարություններ, խոչընդոտներ և նույնիսկ ձեռք բերեց հակառակորդներ: Չնայած դրան՝ ընկերութունը կարճ ժամանակում բավական համախոհներ և սատարողներ ձեռք բերեց: 1848թ. փետրվարին ընկերությունն ուներ 600-ից ավելի անդամ[60] և սեփական հավաքատեղի, որը գտնվում էր Բերա թաղամասի թիվ 13 տանը[61]: 1848թ. վերջին ընկերությունը հանդիպեց լուրջ դժվարությունների, ամենից առաջ՝ ներքին, որոնք պայմանավորված էին դավանաբանական խնդրով: Կ. Պոլսի հայ համայնքն այդ պահին լիովին պատրաստ չէր մի կողմ դնել կրոնական տարաձայնությունները կաթոլիկ հայերի հետ, համախմբել ուժերը և միասնական հանդես գալ հասարակության շահերի օգտին: Լինում էին դեպքեր, երբ «Համազգեաց ընկերության» կաթոլիկ անդամները պահանջում էին իրենց շարքերից հեռացնել ոչ կաթոլիկ անդամներին: Գործին միջամտում էին ընկերության ղեկավարները և հատկապես մասոն անդամները, ովքեր նրանց բացատրում էին՝ «մենք միեւնոյն Հայոց ազգն եմք, եւ կրօնի տարբերութիւնը… չկրնար ազգերնիս երկուքի բաժնել»[62]:

«Համազգեաց ընկերության» կրոնական համերաշխության հաստատմանը խոչընդոտում էր Կ. Պոլսի հայ կաթոլիկների պատրիարք Անտոն Հասունյանը: Նա չէր կարողանում հանդուրժել այնպիսի մի անկախ կազմակերպության գործունեությունը, ինչպիսին «Համազգեաց ընկերությունն» էր: Նա նույնիսկ փորձեց խանգարել ընկերության «Հայտարարության» ընդունմանը, բայց ընկերության հիմնադիր անդամները նրա հորդորներին տեղի չտվեցին[63]: Ընկերության կաթոլիկ և ոչ կաթոլիկ անդամների տարաձայնությունները չհարթվեցին, նրանց դավանաբանական հակամարտությունը պատրիարք Ա. Հասունյանի շնորհիվ շարունակվեց: Նա չէր դադարում կաթոլիկ հայերի կրքերը գրգռել, նրանց միտքը պղտորել և շարունակում էր «քարոզել թէ հռոմէական եկե-

[60] Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1848, 6 փետրվարի, թիվ 304:
[61] Տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1898, 17 նոյեմբերի, թիվ 3853:
[62] «Արշալույս Արարատյան», 1848, 30 ապրիլի, թիվ 310:
[63] Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Ա., էջ 3823:

ղեցին արգելու միաբանիլ ընդ հերետիկոս»: Նա սպառնում էր «թէ ոչ կարեմք տալ ձեզ արձակումն և հաղորդութիւն»[64], քանի դեռ շարունակում եք մնալ «Համազգեաց ընկերության» անդամ: Ընկերության անդամների վեճը չհանգուցալուծվեց, գործը հասավ անգամ Վատիկան և Բարձր դուռը: Վեճը կարգավորելու համար Հռոմի պապը 1847թ. վերջին Կ. Պոլիս ուղարկեց կարդինալ Ֆերրիերիին և Վեսրասիանի խորհրդականին: Նրանք անցան Ա. Հասունյանի կողմը և որևէ մեկին չընդունեցին և նրանց կարծիքը չլսեցին: 1848թ. փետրվարի 20-ին Ա. Հասունյանի նախագահությամբ հրավիրված ազգային ժողովը որոշեց դիմել Բարձր դռանը՝ խնդրելով «արտաքին պատրիարքական իշխանութեան համար» 20 հոգուց բաղկացած ազգային ժողով հաստատել: Այս առաջարկությունը պատրիարքին հաճելի չէր, ուստի նա, տարբեր պատրվակներ բերելով, փորձում էր ամեն կերպ խոչընդոտել դրա իրականացմանը:

«Համազգեաց ընկերության» անդամները առանց Ա. Հասունյանի մարտի 2-ին և 5-ին ժողովներ հրավիրեցին, որը Պետրոս Եազլըքճյանին, Անսոն Երամյանին, Սրապ Մանասյանին և Մկրտիչ Սամանճյանին լիազորեց պատրիարքին համոզել արգելք չհանդիսանալ իրենց գործունեությանը: Պատրիարքն իր համախոհներով նրանց հակառակ հանրագրություններ պատրաստել տվեց, որոնցում ասվում էր, որ «մենք հիմակուան ազգին ընթացքէն գոհ ենք, նոր կարգադրութիւն և սահմանադրութիւն չենք ուզեր»[65], քանի որ ազգը բաժանվել է երկու մասի: Մարտի 22-ին ազգային ժողով հրավիրելու կողմնակիցները դիմեցին Բարձր դռանը, որին հետևեց Ա.Հասունյանի կողմնակիցների խնդրագիրը: Նրանց վեճը սաստկացավ, իսկ կարդինալ Ֆերրիերին ոչ թե փորձեց հայության երկու հատվածների տարաձայնությունները հարթել, այլ նրանց Ա.Հասունյանի կամքին հնազանդեցնել:

«Համազգեաց ընկերության» կանոնադրությունը Հռոմ ուղարկվեց՝ դրան ծանոթանալու համար: Կարդինալն առաջարկեց, որ Ա.Հասունյանը նոր կանոնադրություն կազմի ընկերության

[64] Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 332:

[65] Ասկէրեան Հ., նշվ. աշխ., էջ 73:

համար, որը մերժվեց[66]: Ապրիլի 14-ին կարդինալ Ֆերրիերին այցելեց Թաքսիմի Ս. Հովհան Ոսկեբերանի աղքատանոցը և փորձեց հափշտակել հաշվետոմարները, բայց Հովհաննես Թոփթաշյանը և Պողոս Ղազարոսյանը թույլ չտվեցին: Վեճը փորձեց կարգավորել Բարձր դուռը, որը, մայիսի 5-ին իր մոտ հրավիրելով Ա. Հասունյանին և Կ. Պոլսի 10 ամիրաների, «ի սէր եւ ի խաղաղութիւն յորդորեց»[67]: Դրանից մի քանի օր անց կարդինալ Ֆերրիերին Կ. Պոլիսը լքեց, ում գործունեությունից Կ. Պոլսի կաթոլիկ հայ հասարակությունը խիստ հիասթափվեց:

Ի տարբերություն պապական պատվիրակի՝ Բարձր դուռը փորձեց խնդիրը կարգավորել ավելի փափկանկատ և մեղմ ճանապարհով: Թուրքական իշխանությունները որոշեցին բավարարել ոչ թե պատրիարքի կամքը, այլ ազգային ժողովի հրավիրելու կոմնակիցների խնդրանքը: Ա.Հասունյանը շարունակեց պնդել, թե պոլսահայությունը այդ կարգադրությունը չի ընդունի, քանի դեռ «Համազգեաց ընկերությունը» չի վերացել[68]: Բարձր դռան հորդորով 1848թ. հուլիսին հրավիրվեց 10 եկեղեցականներից, 24 աշխարհիկ մարդկանցից և նույնքան «Համազգեաց ընկերության» անդամներից կազմված ժողով: Բարձր դռան առաջին թարգման Էմին Էֆենդին սուլթանի անունից հայտարարեց, որ վարիչ ժողով հրավիրելու կողմնակիցների խնդրանքը օրինավոր է: Միաժամանակ պատրիարքի նախագահությամբ ստեղծվում էր 20 հոգուց բաղկացած ընտրովի ժողով: Ա. Հասունյանի կողմնակից աշխարհականները պահանջեցին «Համազգեաց ընկերության» կանոնադրությունը փոխել, ըստ որի ընկերության անդամ լինեն միայն կաթոլիկ հայերը, վարիչ մարմինն ունենա 4 խորհրդական, 2 խաղաղարար, և 4 գրաքննիչ եկեղեցական իշխանության կողմից: Այս պայմանները «Համազգեաց ընկերության» անդամները մերժեցին, բայց համաձայնվեցին որոշակի փոփոխություններ կատարել: 1848թ. հուլիսի 6-ին ժողովը փակվեց այս համաձայնությամբ, բայց

[66] Նույն տեղում, էջ 86:
[67] Նույն տեղում, էջ 75:
[68] Նույն տեղում, էջ 93:

Ա. Հասունյանը շարունակեց արգելք հանդիսանալ համաձայնության կատարմանը: Նա օգոստոսի 10-ին հրավիրված 20 հոգուց բաղկացած ժողովի աշխատանքին խոչընդոտեց: Մեծ եպարքոս Ռեշիդ փաշան Հակոբ Կրճիկյանի միջոցով Ա. Հասունյանից պահանջեց հրաժարվել պատրիարքությունից: Նոյեմբերի 26-ին Կ. Պոլսի կաթոլիկ հայերի պատրիարք ընտրվեց Կարինի թեմի առաջնորդ Հովհաննես վարդապետ Սելվյանը[69]:

«Համազգյաց ընկերության» ճակատագրով անհանգստացած «Արշալույս Արարատյան» թերթի խմբագիր Ղուկաս Պալդազարյանը, որ հետագայում դարձավ հայկական «Տիգրան» օթյակի անդամ, 1849թ. ապրիլին ուրախությամբ հայտնում էր իր ընթերցողներին, որ Կ. Պոլսի «Համազգեաց ընկերությունը վերանորոգելու վրայ է»: Թերթը ընկերության նպատակը համարում է «ազգօգուտ» և համոզմունք հայտնում, որ այն անպայման կառաջադիմի, եթե ընկերության տեսուչները և խորհրդականները «շարունակելով իրենց ազգասիրական պաշտոնը» չեն վհատվի հազար ու մի արգելքներից, որոնք բնականաբար միշտ կծառանան այդ կարգի գործերում:

Կ. Պոլսից ստացված տեղեկության համաձայն մարտի 20-ին, շուրջ տարի ու կես անգործունեության մատնված «Համազգեաց ընկերության» քսանից ավելի անդամներ «միաբան սիրով» հավաքվել են իրենց գործերը կարգավորելու նպատակով: Լրատվության հեղինակը հույս էր հայտնում, որ եթե մինչ օրս ընկերության որոշ անդամներ «անիրավաբար կամ ժամանակի պարագաներէն հարկադրեալ» վիրավորված են եղել, ապա ներկայումս «քրիստոնէավայել եղբայրութեամբ» իրենց վիրավորանքը մի կողմ կդնեն և «համազգական սիրով շահելու հոգ կըտանին»: Դա կդառնա «բացայայտ նշան մը Համազգեաց ընկերութեան հայրենասիրական նպատակին»[70]: Սեպտեմբերին կրկին անդրադառնալով «Համազգեաց ընկերության» վերաբերյալ Կ. Պոլսից ստացված լուրե-

[69] Ասկերեան Հ., նշվ. աշխ., էջ 108, Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Ա, էջ 3830, Պէրպէրեան Ա., նշվ. աշխ., էջ 345-353:

[70] «Արշալույս Արարատյան», 1849, 29 ապրիլի, թիվ 336:

րին՝ «Արշալույս Արարատյանը» դրանք համարում է «մխիթարական»: Ըստ թերթի՝ ընկերության գործունյա անդամները խոհեմությամբ և գովելի հարատևությամբ շարունակում են «իրենց ազգասիրական ծանր պաշտոնը» և անձնվեր եռանդով աշխատում են հաղթահարել բոլոր արգելքները, որոնք ծագում են «համազգային ընդհանուր ընկերության դեմ»: Համազգային ընկերությանը ծառայելու իրավունքը պարտավորեցնում է նրա հայրենասեր անդամներին ամեն կերպ քաջալերվել և նպատակային գործունեություն ծավալել հանուն ընկերության առաջադիմության, «վասնզի ամէն գործոյն սկիզբը խիստ դժուար է, մանաւանդ երբոր ազգային լուսաւորութեանը և զարգացմանը վերաբերյալ գործ մըն է»: Պատկերացնելով բոլոր դժվարություններն ու արգելքները, որոնք պետք է հաղթահարի «Համազգեաց ընկերությունը», թերթը հույս է հայտնում «թէ առանց վհատելու արիութեամբ և երկայնմտութեամբ յառաջ պիտի տանի իր վեհանձնական ազգօգուտ նպատակը, աղէկ մը տպաւորելով մտքերնուն մէջ թէ. Յաղթօղ է ամենայնի աշխատութիւն»[71]:

«Համազեաց ընկերությունը» հարկադրված եղավ գործունեությունը շարունակելու համար փոխել կանոնադրության որոշ կետեր: Փոփոխված կանոնադրությունը, որն այս անգամ բաղկացած էր 41 հոդվածից, հրատարակվեց 1851 թվականին[72]: Սակայն փոփոխված կանոնադրությունը որևէ կերպ չնպաստեց ընկերության գործունեության շարունակմանը, որը մի պահ դադարեց գործելուց: «Մասիսը» 1852թ. սեպտեմբերին գրում է, թե «կը լսենք նաև որ Համազգեաց ընկերութիւնն ալ խափաներ է»[73]:

«Համազգեաց ընկերության» գործունեության առժամանակյա դադարեցումով ընկերության հիմնադիր մասոն անդամները չհասան իրենց հետամուտ եղած նպատակին: Մասոնական գաղափարախոսությամբ կրոնական հանդուրժողականության կողմնա-

[71] «Արշալույս Արարատյան», 1849, 16 սեպտեմբերի, թիվ 346:

[72] Տե՛ս Ջատագովութիւն Համազգեաց ընկերութեան, Կ. Պոլիս, 1851, էջ 34-41, Պէրպէրեան Ա., նշվ. աշխ., էջ 351-358:

[73] «Մասիս», 1852, սեպտեմբերի, թիվ 33:

կից հայ կաթոլիկ ազատ որմնադիրները չկարողացան հաղթահարել դավանաբանական տարաձայնությունները: Ազգային համախմբման, միասնության, համերաշխության նրանց վեհ գաղափարները հանդիպեցին կաթոլիկ հոգևորականության բիրտ դիմադրությանը, որը ոչ մի կերպ չէր ցանկանում հրաժարվել իր դոգմանեըից: Սակայն ընկերության անդամ կաթոլիկ ազատ որմնադիրները չհուսահատվեցին և իրենց գաղափարական պայքարը շարունակեցին 1850-1860-ական թվականներին, երբ Օսմանյան կայսրությունում ձևավորվեց հասարակական, քաղաքական նոր իրավիճակ: Նոր իրողության պայմաններում նրանք սկսեցին ավելի համարձակ ու անկաշկանդ գործել: 1860թ. վերջին «Համազգային ընկերության» անդամները «Գովելի խորհրդով ազգային կամ մատենադարան կամ ընթերցարան մը բանալու ձեռք զարկեցին»[74]: 1861թ. սկզբին նրանք փորձ արեցին վերանայել ընկերության կանոնադրությունը[75] կրկին գործունեություն ծավալելու նպատակով: «Համազգային ընկերությունը» վերականգնել չհաջողվեց, որի մի քանի մասոն անդամներ այդ աշխատանքներին զուգահեռ, ձեռնամուխ եղան իրենց ընկերության վերակազմավորմանը: 1860թ. սեպտեմբերի 1-ին, Կ.Պոլսի Բերա թաղամասի Լալե փողոցի թիվ 13 տանը, «Համազգային ընկերության» անդամներ Սերովբե Ալիշանյանը, Գրիգոր Աղաթոնը, Մկրտիչ Աղաթոնը, Սերովբե Թագվորյանը, Գրիգոր Օտյանը, Հովսեփ Շիշմանյանը, Մարտիրոս Մյուհենտիյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Տիգրան Յուսուֆյանը հիմք դրեցին «Բարեգործական ընկերություն հայոց» անվանումով նոր կազմակերպության ստեղծմանը: Նրանց մեծ մասը Կ.Պոլսի եվրոպական մասոնական օթյակների անդամ էր: Ընկերության անդամներ «Մեղու» թերթի խմբագիր, «Իտալիա» օթյակի անդամ Հարություն Սվաճյանը[76] և անգլիական «Odd Fellows» և «Արևելյան»

[74] «Մասիս», 1860, 28 դեկտեմբերի, թիվ 464:

[75] «Մասիս», 1861, 15 մարտի, թիվ 476:

[76] Պէյլէրեան Ա., Ազատ-որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական Սեր օթեակը ԺԹ դարուն, Հայկազեան հայագիտական հանդես Պեյրութ, 2001, էջ 166:

օթյակների անդամ Սերովբե Թագվորյանը[77] Կ.Պոլսում ստեղծեցին «Երիտասարդների միություն» գաղտնի ընկերությունը[78]: 1862թ. Կ.Պոլսում եվրոպական մի շարք օթյակների հիմնադիր Սերովբե Ազնավուրի և Սերովբե Թագվորյանի նախաձեռնությամբ հիմնվեց անգլիական «Odd Fellows» մասոնական ընկերության «Հայկ» կամ «Օրիոն» մասնաճյուղը[79]: Արևմտահայ մասոնության ռահվիրա Ս. Ազնավուրի մտահղացմամբ 1864թ. Զմյուռնիայում հիմնվեց հայկական «Տիգրան» օթյակը: Երկու տարի անց նա Կ.Պոլսում մի խումբ հայ ազատ որմնադիրների հետ, ովքեր հիմնականում «Համազգային» և «Բարեգործական» ընկերությունների անդամ էին, հիմնեց «Սեր» օթյակը[80]:

[77] «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 83, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 152:

[78] Տե՛ս Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, էջ 107:

[79] «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 95-96, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 155-156:

[80] «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 75, «Հայրենիք», 1937, ապրիլ, թիվ 6, էջ 127-129, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161-164:

Связь константинопольского «Общенационального общества» с масонством

Мовсисян Феликс

Резюме

Ключевые слова: *Танзимат, реформы, Париж, образование, интеллигенция, национальное единство, солидарность, братство, взаимопомощь, масонство*

В 1840-е годы западные армяне были воодушевлены обещаниями Танзимата, которые открывали новые перспективы в их общественно-политической жизни, гарантируя равенство, справедливость и ряд гражданских прав. В эти годы группа молодых интеллигентов, получившая образование в европейских университетах и вернувшаяся в родной Константинополь, посвятила себя делу национального единения, солидарности и братской взаимопомощи. С этой целью они основали в Константинополе несколько общественных, образовательных, национальных и культурных ассоциаций. Среди них своей целенаправленностью выделялось основанное в марте 1846 года в Пере «Общенациональное общество». Оно пыталось соответствовать своему наименованию, так как в годы своей деятельности поставило перед собой цель – учить, воспитывать и просвещать нацию. Вместе с тем, общество преследовало еще одну цель: распространить идеи солидарности, единения и патриотизма среди прихожан армянской апостольской и католической церквей.

Основателями «Общенационального общества» были молодые люди, преисполненные идей европейского просвещения, прогресса, либерализма и проникнутые национальным духом; некоторые из них еще в годы учебы в Европе стали членами масонских лож. На формирование их идеологии серьезное влияние оказали европейская революционная национально-освободительная борьба 1848-1852 гг. и движения, направленные на национальное единение и сплочение. Масоны – представители «Общенационального общества» стали основоположниками, основными деятелями и идеологами национального конституционного движения. В 1850-х годах они вступили в европейские масонские ложи, действовавшие в Константинополе, а в 1860-х годах основали армянские масонские ложи в Смирне и Константинополе.

Relationships of "The National Company" of Constantinople with Masonry

Movsisyan Feliks

Summary

Key words: *Tansimat, reforms, Paris, education, intellectuals, national unity, solidarity, brotherhood, mutual aid*

In the 1840s, Western Armenians were inspired by the promises of Tanzimat, which opened new perspectives in their public and political life, guaranteeing equality, justice and a number of civil rights. During those years, a group of young intellectuals, who had studied in European universities and returned to native Istanbul, devoted themselves to the work of national unity, solidarity and mutual assistance. To reach the goal, they established several social, educational, national and cultural companies in Constantinople. Among them by its intentions was distinguished "The National Company" founded in Bera in March, 1846. It appealed to correspond to its name because during the years of its activity it followed the goal of educating, bringing up and enlightening. At the same time, the company aimed at spreading solidarity, unity and patriotism among the Apostolic and Catholic churches.

The founders of "The National Company" were young people inspired by the ideas of European lighting, progression and freedom, and national spirit, some of whom had become members of Masonic lodges during their studies in Europe. The European revolutionary, national liberation struggle of 1848-1852 and the movements for national unity and consolidation left a serious impact on their ideological shaping. Mason members of "The National Company" became the founders, main figures and ideologists of the Western Armenian national constitutional movement. In the 1850s, they joined the European Masonic lodges in Constantinople, and in the 1860s they became the founders of the Masonic lodges in Smyrna and Constantinople.

Ներկայացվել է 07.05.2019 թ.
Տպագրության է երաշխավորել պ. գ. դ., պրոֆեսոր Հ. Մ. Հարությունյանը
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

ՀԲԸՄ գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին

Սահակյան Աշոտ

Հանգուցային բառեր. *Հայաստանի օգնության կոմիտե, Պողոս Նուբար փաշա, Ֆրիտյոֆ Նանսեն, համագումար, կառավարություն, Ազգերի լիգա, բանակցություն:*

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) պատմության վերաբերյալ սփյուռքում և Հայաստանում ժամանակին լույս է տեսել մեծ թվով գրականություն: Մասնավորապես, հայկական խոշոր գաղթօջախներում միության կողմից հրատարակվել են միության կանոնագրեր, հուշամատյաններ, գործունեության վերաբերյալ տեղեկագրեր, հաշվետվություններ, ուղեցույցներ և տարաբնույթ ուսումնասիրություններ:

ՀԲԸՄ ստեղծման և նրա մասնաճյուղերի ու կառույցների, ինչպես նաև միության վարժարանների, նվիրատուների և կտակատարների գործունեության վերաբերյալ հայկական սփյուռքի գաղթօջախներում լույս են տեսել մի շարք ուսումնասիրություններ:

ՀԲԸՄ-ն ամբողջական պատմության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություն է Է. Մելքոնյանի «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937թթ.», «Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն» աշխատանքները: Արժևորելով ՀԲԸՄ-ի վերաբերյալ հայ պատմագիտությունում կատարած ուսումնասիրությունները՝ կարևորում ենք միության գործունեությանը նորովի անդրադառնալը: Սույն ուսումնասիրությունը կատարվել է Հայաստանի ազգային արխիվում պահվող միության գործունեության վերաբերյալ նոր՝ մինչ այդ չուսումնասիրված փաստաթղթերի հիման վրա: Ներկայացվում է 1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանում հայկական բարեգործական ընդհանուր միության բեղմնավոր գործունեությունը մի շարք ոլորտներում:

1921 թ. սեպտեմբերին Երևանում հիմնադրվում է Հայաստանի

օգնության կոմիտեն (ՀՕԿ), որի առաքելությունը Հայաստանի վերաշինությունն էր: Այդ նպատակով կոմիտեն սկսում է կապեր հաստատել Սփյուռքի հայկական բարեգործական կազմակերպությունների, այդ թվում ազդեցիկ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հետ: ՀԽՍՀ կառավարության հետ հարաբերություններ հաստատելու և տեղում իրավիճակին ծանոթանալու նպատակով Միությունը պատվիրակություններ է ուղարկում Հայաստան: Այդ առաքելությունները «կատարեցին նախապատրաստական աշխատութիւն մը, որ Միութեան պիտի ծառայէր իբրեւ ուղեգիծ»[1]:

Խորհրդային Հայաստանի վերաշինության ծրագրերի իրականացման գործում Սփյուռքի հայկական բարեգործական կազմակերպությունների ներգրավման համար առանցքային նշանակություն ունեցավ 1923 թ. հոկտեմբերի 14-20-ը Երևանում տեղի ունեցած ՀՕԿ-ի երրորդ համագումարը: Համագումարից կարճ ժամանակ անց ՀՕԿ նախագահությունը շրջաբերականով դիմում է ՀԲԸՄ Կենտրոնական վարչությանը՝ հույս հայտնելով, որ «Միությունը ևս լինելով նախանձախնդիր մեր հայրենիքի վերաշինության և տնտեսական զարգացման գործին՝ պիտի փութա ոժանդակել մեզ և այս կերպով մասնակցել այն ծանր պարտականության, որին լծված է Հայրենիքի Ոգնության Կոմիտեն»[2]:

ՀԲԸՄ Կենտրոնական վարչությունը որոշում է Հայաստանի վերաշինությանը մասնակցել սեփական միջոցներով՝ այդ նպատակով աշխարհասփյուռ իր մասնաճյուղերի միջոցով նախաձեռնելով դրամահավաք: Միության կողմից նախատեսված՝ Հայաստանում իրականացվելիք առաջին ծրագրերից էր Եղվարդի և Դալմայի (Հրազդան գետի աջ ափին) հողերի մշակման նպատակով ջրանցքների կառուցումը, ինչպես նաև 2000 անչափահաս և չափահաս հայ որբերի՝ Հայաստան տեղափոխումը: Այդ ծրագրերի իրա-

[1] Ի՞նչ է Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը, Փարիզ, «Մասիս», 1929, էջ 16:

[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 178, ց. 1, գ. 396, թ. 8:

կանացման մասին ՀԽՍՀ Ժողկոմխորհի թույլտվությունը արտահայտվում է 1923 թ. հոկտեմբերին ՀԽՍՀ Լուսավորության ժողկոմ Ասքանազ Մռավյանի և Հողագործության ժողկոմ Արամայիս Երզնկյանի ստորագրությամբ հաստատված 22 հոդվածներից բաղկացած փաստաթղթում[3]:

Մասնավորապես, ՀԽՍՀ կառավարությունն առաջարկում է միությանը 15 տարի ժամկետով տրամադրել 99 դեսյատին□ հող Շենգավիթում (Հրազդան գետի ձախ ափին)՝ պայմանով, որ այնտեղ որբերին տեղավորելու համար շենքեր կառուցվեն՝ «պատսպարելու համար նպատակայարմար շենքեր[4]»: Սակայն, պայմանավորված ֆինանսական խնդիրներով, Միությունը հրաժարվում է Եղվարդի և Դալմայի ծրագրերից՝ շարունակելով իրականացնել միայն Շենգավիթի ծրագիրը: Մասնավորապես, Միությունը հանձնառություն է վերցնում կառուցելու կացարան 250 որբերի համար: Վերջիններս, որոնք մինչ այդ գտնվում էին Միության ենթակայությամբ գործող Երուսաղեմի «Արարատյան», Հալեպի «Կիլիկյան Արհեստանոց» և Բեյրութի «Քելեկեան-Սիսուան» որբանոցներում, 1924 թ. հոկտեմբերի 26-ին խորհրդային «Կերչ» նավով դուրս են գալիս Պաղեստինի Յաֆֆա նավահանգստից և ճանապարհ ընկնում Հայաստան: Որբերը Բաթումով Երևան են հասնում նոյեմբերի 15-ին[5]:

Այդ ծրագրի իրագործման վերաբերյալ Միության և ՀԽՍՀ Հողային ժողկոմ Արամայիս Երզնկյանի միջև փաստաթուղթ է ստորագրվում 1925 թ. հունվարի 10-ին, ինչի առիթով ՀԲԸՄ նախագահ Պողոս Նուբար փաշան 4000 բրիտանական ոսկի գումարի նվի-

[3] Փաստաթուղթը տես՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 150, թ. 52 – 53:

□ Դեսյատին-հողային տարածության հին չափ: 1 դեսյատինը հավասար է 1.09 հեկտարի:

[4] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, Հատոր առաջին. 1906-1940, ղեկավարութեամբ Յ. Ռ. Գէորգեանի եւ Վ. Թաշճեանի, Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006, էջ 180:

[5] Մելքոնյան Է. Լ., Հայկական ընդհանուր միության պատմություն, Երևան, Մուղնի, 2005, էջ 178-179:

րատվություն է կատարում՝ Շենգավիթի «Մարի-Նուբար» որբանոցի շինության համար[6]:

Կարճ ժամանակ անց, սակայն, շինարարական աշխատանքները ղեկավարող ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հաշվարկները ցույց են տալիս, որ որբանոցի շինարարությունը պետք է արժենար ավելի թանկ՝ մոտավորապես 15000 բրիտանական ոսկի: Պողոս Նուբարի համաձայնությամբ որբանոցի շինարարության ծրագիրը փոխարինվեց Մարի Նուբար հիվանդանոցի շինարարության, իսկ նվիրատվությունը Պողոս Նուբարի կողմից հասցվեց 60.000 բրիտանական ոսկի գումարի[7]: Խնդիրը լուծելու նպատակով 1926 թ. հոկտեմբերի 28-ին ՀԲԸՄ հայաստանյան լիազոր ներկայացուցիչ Մախսուդ Միհրդատյանը ՀԽՍՀ Ժողկոմխորհին ուղղված գրության մեջ խնդրում է հիվանդանոցի շինարարության համար տարածք հատկացնել, և որ «հանձն առնե այս շենքի ճակատը պատել Մարի Նուպար բուժարան անունակոչումը»[8]: Արդյունքում, ի հիշատակ մահացած տիկնոջ, Երևանում 1927 թ. սկսվեց Մարի Նուբար ակնաբուժարանի կառուցումը, որն ավարտվեց 1930 թ. մայիսին:

Միությունը, միաժամանակ, գործնական քայլեր կատարեց հայ գաղթականների դեպի Հայաստան տեղափոխության հարցի լուծման ուղղությամբ: 1923 թ. սեպտեմբերին, ընդառաջ գնալով Հայկական ազգային պատվիրակության դիմումին՝ Ազգերի լիգան որոշում է հանձն առնել Հունաստանից 5000 հայ գաղթականության Հայաստան տեղափոխության ծրագրի ծախսերը: Այդ նպատակով Ազգերի լիգայի կողմից Հայաստան գործուղված փորձագետների պատվիրակությունը՝ գաղթականների հարցերով կոմիսար Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորությամբ, բանակցություններ է վարում Հայաստանի իշխանությունների հետ: Ծրագրվում էր գաղթականությանը տեղավորել Սարդարապատի շրջանում, ինչն

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում, էջ 183:

[8] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 546, թ. 9

իրագործելու համար պահանջվելու էր 90000 բրիտանական ոսկի փոխառություն, որն ինչպես Նանսենն էր գրում Պողոս Նուբարին. «Երեւանի կառավարութիւնը անընդունելի կը համարէ որևէ հսկողութիւն այս փոխառութիւնը մարելու յատկուացելիք եկամուտներուն վրայ. Ազգերի լիկայի անդամ պետութիւններու կառավարութիւնները, որոնք պիտի քուէարկեն ի նպաստ ծրագիրին, շատ տրամադիր չեն երեւիր նպաստելու ելեւմտական գործողութեան մը՝ խորհրդային կառավարութեան մը օգտին»[9]:

Ի վերջո, ելնելով ստեղծված վիճակից՝ Միությունն իր վրա է վերցնում հայ գաղթականության տեղափոխության ծախսերը: Այդ նպատակով 1925-1926 թվականներին Միությունը հատկացնում է շուրջ 17 000 բրիտանական ոսկի գումար[10]: Արդյունքում 1925 թ. վերջին գաղթականների առաջին քարավանները՝ 3199 հոգի Հունաստանից և 700-ը Պոլսից, իսկ արդեն 1927 թ. գլխավորաբար ԱՄՆ-ից, ճամփա ընկան դեպի Հայաստան[11]:

Խորհրդային Հայաստանում ՀԲԸՄ գործունեության կարևորագույն էջերից է 1926 թ. հոկտեմբերի 22-ին Լենինականում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացմանն ուղղված ջանքերը: Մասնավորապես աղետյալներին օգնություն ցուցաբերելու նպատակով Սփյուռքի գաղութներում սկսվում է դրամահավաքի կազմակերպումը: Այդ նպատակով ՀԲԸՄ, ՀՕԿ-ի, Հայաստանի Կարմիր խաչի և հայկական մի շարք կազմակերպությունների մասնակցությամբ Փարիզում ստեղծվում է Օգնության հանձնախումբ: Վերջինիս կողմից 1926 թ. դեկտեմբերի 17-ին Հայաստան փոխանցված գումարը կազմում է 2000 բրիտանական ոսկի, 1927 թ. մայիսի 27-ին՝ 4000 բրիտանական ոսկի, 1928 թ. ապրիլի 30-ին՝ 2500 բրիտանական ոսկի[12]: 1928 թ. վերջին Օգնության հանձնախմբի փոխնախագահ Պ. Էսմերյանը ՀԽՍՀ Ժողկոմ-

[9] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 191-192:
[10] ՀԱԱ, Ֆ.113, ց. 3, Գ.931, թ. 85:
[11] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 193:
[12] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 577 մաս 2-րդ, թ. 275:

խորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին տեղեկացնում է լրացուցիչ 5000 բրիտանական ոսկի գումար Հայաստան ուղարկելու և Լենինականում մսուր կառուցելու մտադրության մասին[13]:

Երկրաշարժի հետևանքների վերացման նպատակով միայն Միության Կենտրոնական վարչությունը Հայաստանի կառավարությանը տրամադրում է 2000 բրիտանական ոսկի գումար, մինչև Միության ԱՄՆ-ի մասնաճյուղերը կհավաքագրեին տասնյակ հազարավոր դոլարների, իսկ Եվրոպայի մասնաճյուղերը՝ շուրջ 16000 բրիտանական ոսկի գումար[14]:

1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանի վերաշինության գործում ՀԲԸՄ մասնակցությունն արտահայտվեց նաև Միությանը փոխանցված շուրջ երկու տասնյակ նվիրատվություններով ու կտակներով, ստեղծված առանձին հիմնադրամներով ու մրցանակներով*: Մասնավորապես առանձին հիմնադրամներից էին՝ Ռաֆայել Մարկոսյան հիմնադրամը, որի միջոցներով Հայաստանում բացվեց արհեստի վարժարան, Գյուլաբ Գյուլբենկյան հիմնադրամը, որը գումար հատկացրեց Հայաստանում գյուղատնտեսական վարժարանի ստեղծման համար:

Հատկապես նշանավոր էր Գրիգոր և Կարապետ եղբայրների կողմից արված նվիրատվության շնորհիվ ստեղծված Մելքոնյան հիմնադրամը, որը 3.000 բրիտանական ոսկի գումար է հատկացնում Երևանի պետական համալսարանին՝ հայագիտական հետազոտությունների համար[15]: Ընդհանուր առմամբ, 1928–1936 թվականների ընթացքում Մելքոնյան հիմնադրամը Ժողկոմխորհին փոխանցել է շուրջ 18.000 բրիտանական ֆունտ[16]:

1927 թ. հունվարին ՀԽՍՀ Լուսավորության ժողկոմի տեղակալ Հ. Յաղուբյանի և Դպրոցասեր տիկնանց ընկերության լիազոր

---

[13] Նույն տեղում:

[14] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 185:

* Կտակների, առանձին հիմնադրամների ու մրցանակների ցանկը տե՛ս ՀԱԱ, ֆ.113, ց. 22, գ. 546, թ. 22 – 22-ի շրջ.:

[15] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 183:

[16] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1730, թ. 24:

Մախսուդ Միհրդատյանի միջև ստորագրվում է համաձայնագիր՝ Երևանում վարժարան կառուցելու մասին[17]:

ՀԲԸՄ խոշոր ձեռնարկներից էր Հայաստանի ճահիճների չորացման աշխատանքների համար շուրջ 4.000 բրիտանական ֆունտ գումարի հատկացումը[18], ինչպես նաև Հայաստանում նոր բնակավայր՝ Նոր Եվդոկիա գյուղի կառուցումը: Դա հնարավոր դարձավ ծնունդով Կահիրեից բարերար Գրիգոր Մեոթեմետյանի ժառանգների կողմից Միությանն արված ավելի քան 2.700 բրիտանական ոսկի նվիրատվության շնորհիվ[19]: Կտակի գործադրումը հաստատված էր Միության նախագահ Պողոս Նուբարի և ՀԽՍՀ Հողային ժողկոմ Արամայիս Երզնկյանի միջև 1925 թ. հունվարի 10-ին Փարիզում ստորագրված համաձայնագրով[20]:

Ի հիշատակ իր ամուսնու՝ Ավետ Սարգիսի, Սարդարապատի շրջանում նոր գյուղի՝ Ավետաշենի կառուցման նպատակով Վերժինե Սարգիսի կողմից նախատեսված էր 1.000 բրիտանական ոսկի գումարի տրամադրում: Սակայն Ժողկոմխորհը գործին ընթացք չտվեց[21]: Փոխարենը այդ ծրագիրը վերափոխվեց կատաղության դեմ պայքարի «Ավետ Սարգիս» կենտրոնի[22] շինարարության:

ՀԲԸՄ և ՀԽՍՀ Հողային ժողկոմ Արամայիս Երզնկյանի միջև 1925 թ. հունվարի 10-ին Փարիզում ստորագրված համաձայնագրով հնարավոր եղավ նաև Դարուհի Հակոբյան կտակի գործադրումը Հայաստանում: Թեև այն սկզբնապես ենթադրում էր արհեստի դպրոցի շինություն, սակայն ավելի ուշ այդ ծրագիրը փոխարինվեց մեկ այլ խոշոր ծրագրով՝ ծննդատան կառուցմամբ: Այդ նպատակով հատկացված գումարը կազմեց շուր 7.000 բրիտա-

[17] Համաձայնագրի տեքստը տես՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 546, թ. 15:
[18] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 546, թ. 25-ի շրջ.:
[19] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 546, թ. 25-ի շրջ.:
[20] Պայմանագրի կետերը տես Մելքոնյան Է. Լ., նշվ. աշխ., էջ 180-181:
[21] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 546, թ.25-ի շրջ., թ.16
[22] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 185:

նական ոսկի գումար[23]: Շինարարական աշխատանքները, որ ղեկավարում էր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, տևեցին երեք տարի, և 1929 թ. մարտին Երևանում տեղի ունեցավ «Դարուհի Հակոբյան մայրանոց» ծննդատան բացումը:

ՀԲԸՄ կողմից Հայաստանում գործադրվեց նաև Մ. Խերյանի կտակը: Փոխանցված 310.000 ֆրանկ գումարով կառուցվեց և արդեն 1932 թ. սկսեց գործել մեղվաբուծության դպրոցը[24]:

1920-ական թվականներին ՀԲԸՄ ձեռնամուխ եղավ Հայաստանում իրականացնելու իր խոշորագույն ծրագիրը՝ Նուբարաշեն բնակավայրի կառուցումը: Դրա մասին որոշումն ընդունվեց 1926 թ. Ֆիլադելֆիայում գումարված ՀԲԸՄ Ամերիկայի մասնաճյուղերի տարեկան 14-րդ ընդհանուր ժողովում: Միության ԱՄՆ-ի վարչությունը որոշեց ձեռնարկել հոբելյանական հանգանակություն՝ ՀԲԸՄ հիմնադրման և գործունեության 25-րդ տարեդարձի («արծաթյա հոբելյանի») առթիվ (15 ապրիլի 1931) և ի պատիվ Պողոս Նուբար փաշայի: Այս առիթով 1929 թ. հունվարի 15-ին Միության Փարիզի Կենտրոնական վարչության կողմից հրապարակած շրջաբերականում նշվում էր, որ ծրագրի իրականացման համար ամերիկահայությունը պետք է հանգանակեր 250.000 դոլար, Պողոս Նուբարը պետք է հատկացներ 100.000 դոլար, և ևս 150.000 դոլար պետք է հանգանակվեր Ամերիկայից դուրս[25]: Այդպիսով ընդհանուր գումարը պետք է կազմեր 500.000 դոլար:

Թեև Միությունը նախատեսել էր, որ ավանը պետք է կոչվեր Նուբարաշեն, սակայն 1928 թ. սեպտեմբերին և 1929 թ. օգոստոսին ՀԽՍՀ կառավարությունը Միությանն ուղղված գրություններում իր վերապահությունն է հայտնում բնակավայրի անվանակոչման հարցում՝ նշելով, որ «աւանի անունը պիտի որոշուի ապագայ բնակիչներուն կողմէ»[26]: Սրան ի պատասխան Պողոս Նուբարը դիմում

[23] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 546, թ. 25-ի շրջ.:

[24] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 184:

[25] Շրջաբերականը տես՝ ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1349, թ. 16:

[26] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 187:

է Փարիզի Կենտրոնական վարչությանը՝ անդամներին խնդրելով կարևորություն չտալ անվան խնդրին, ընդունել Երևանի պայմանները և շարունակել հանգանակությունը ի նպաստ ավանի շինարարության[27]: Ստեղծված դժվարություններին ավելանում է 1929 թ. ԱՄՆ-ում սկիզբ առած տնտեսական Մեծ ճգնաժամը, որն իր ազդեցությունն է թողնում համաշխարհային տնտեսության վրա՝ ծանր հարված հասցնելով նաև հանգանակությանը մասնակցության խոստում տված շատ մեծահարուստ հայերին:

Չնայած վերը նշված դժվարություններին, 1930 թ. մայիսին ՀԲԸՄ և ՀԽՍՀ կառավարության միջև ի վերջո ստորագրվում է վերջնական համաձայնագիր՝ ավանի կառուցման մասին: Ըստ համաձայնագրի՝ շինարարության համար Երևանի հարավ-արևելքում՝ մայրաքաղաքից 6 կմ հեռավորության վրա, հատկացվում է 3000 հեկտար տարածք[28]: Բնակավայրի շինարարական բոլոր աշխատանքները ղեկավարում էր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի գլխավորությամբ ստեղծված հանձնախումբը: Աշխատանքները մեկնարկեցին 1931 թ.: Արդեն 1936 թ. դրությամբ, երբ պատրաստ էին մոտ 100 շենք, Միությունը Նուբարաշենի ծրագրի մեջ ներդրել էր 83452 բրիտանական ոսկի կամ 417000 ամերիկյան դոլար[29]: Նորաստեղծ բնակավայրում* սկսեցին հաստատվել հիմնականում Հունաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Լիբանանից և Սիրիայից հայրենադարձված հայերը:

Բնակավայրի աշխատանքները դեռ չէին մեկնարկվել, երբ ՀԲԸՄ հիմնադիր նախագահ Պողոս Նուբար փաշան, որ 1928 թ. հրաժարվել էր Միության նախագահի պաշտոնից, 1930 թ. հունիսի 25-ին Փարիզի բնակարանում 79 տարեկան հասակում կնքեց իր

---

[27] Նույն տեղում:

[28] Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, էջ 190:

[29] Նույն տեղում:

* 1932թ. բնակավայրը պաշտոնապես անվանվեց Նուբարաշեն (Նուբարի քաղաք): Սակայն 1938թ. բնակավայրը վերանվանվեց Սովետաշեն (խորհրդային քաղաք): Եվ միայն 1989թ. թաղամասը վերանվանվեց Նուբարաշեն: 1996թ. Նուբարաշենին տրվեց Երևանի վարչական շրջանի կարգավիճակ:

մահկանացուն[30]: Այսպիսով ավարտվեց ՀԲԸՄ գործունեության մի խոշոր շրջափուլ, որը, սակայն, ամենևին էլ չէր նշանակում Միության բեղուն գործունեության ավարտ: Ազգային մեծ բարերարի գործունեությունը շարունակեցին նրա որդիներ Առաքել, Զարեհ և Վահրամ Նուբարյանները և ՀԲԸՄ նախագահի պաշտոնը տարբեր ժամանակներում զբաղեցրած ազգային մյուս խոշոր բարերարները:

Ամփոփելով նշենք, որ Խորհրդային Հայաստանի վերաշինության, մշակույթի զարգացման և հայ գաղթականության, այդ թվում որբերի Հայաստան տեղափոխության համար 1921-1927 թվականների ընթացքում ՀԲԸՄ կողմից Հայաստանում կատարված ծախսերը կազմում են շուրջ 74.000 բրիտանական ոսկի գումար[31]: Արդեն 1936 թ. դրությամբ Միության կողմից Հայաստանում հատկացված ծախսերը հասնում են շուրջ 180.000 բրիտանական ոսկի գումարի[32]: Այսպիսով՝ ընդառաջելով հայրենիքի վերաշինության մասին Հայաստանի օգնության կոմիտեի կոչին՝ ՀԲԸՄ իր գործունեությամբ խոշոր ավանդ ունեցավ ավերակներից վերածնվող Խորհրդային Հայաստանի վերաշինության և աշխարհասփյուռ հայ գաղթականության Հայաստան տեղափոխման գործում:

[30] Պողոս Նուբար փաշայի մահվան և հուղարկավորության մասին մանրամասն տես՝ ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1349, թ. 1-2:

[31] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 546, թ. 24-26: Ի՞նչ է Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը, էջ 26:

[32] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1349, թ. 61:

Деятельность АВБС в Советской Армении в 1920-ых годах

Саакян Ашот

Резюме

Ключевые слова: *Армянский комитет помощи, Погос Нубар-паша, Фритьоф Нансен, конгресс, правительство, Лига наций, переговоры*

В сентябре 1921-го года в Ереване основывается Комитет помощи Армении (КПА), миссией которого являлась реконструкция Армении. Для этой цели комитет начинает устанавливать связи между армянскими благотворительными организациями Диаспоры, в том числе и с влиятельным Армянским всеобщим благотворительным союзом (АВБС). В результате в 1920-ом году АВБС начал активную благотворительную деятельность в Советской Армении. В частности, АВБС успешно реализовал переселение 250 сирот и тысяч армян с Ближнего Востока в Армению. АВБС финансировал работы по ликвидации последствий землетрясения в Ленинакане в 1926 году. Благодаря завещаниям и благотворительным сборам в Ереване были построены глазная клиника «Мари Нубар» и роддом «Даруи Акопян», а также сёла Новая Едовкия и Нубарашен.

The Activity of AGBU in Soviet Armenia in the 1920s

Sahakyan Ashot

Summary

Key words: *Armenian Relief Committee, Boghos Nubar Pasha, Fridtjof Nansen, Congress, government, League of Nations, negotiation*

In 1921 Committee to Aid Armenia (CAA) was founded in Yerevan. Its mission was to reconstruct and rebuild Armenia. The Committee began to establish good relations with Diaspora, including the Armenian General Benevolent Union. As a result of this relations, AGBU began his activities in Soviet Armenia. Particularly, by the help of the AGBU 250 orphans and thousands of Armenian refugees from the Middlle East settled in Armenia. AGBU donated financial aids for reconstruction of Leninakan after the earthquake in 1926. Many charity funds and donations were used to build a "Mary Nubar" eye clinic and a maternity hospital "Daruhi Hakobyan" in Yerevan, and villages New Yedovkia and Nubarashen.

Ներկայացվել է 16.05.2019 թ.
Գրախոսվել է 14.06.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

Արքայական տիտղոսաշարերն Աքքադում

Յականյան Ռուսլան

Հանգուցային բառեր՝ *LUGAL, LUGAL KIŠ, DINGIR, EN, ENSÍ, Սարգոն, Նարամ-Սին*

Ներածություն

Մ.թ.ա. XXIV դարի 2-րդ քառորդում՝ Աքքադի թագավոր Շարրուկինը (Šar-ru-GI[1]՝ Սարգոն Աքքադացի) (մ.թ.ա. 2334-2279 թթ.[2]) նվաճեց ողջ Շումերը, վերջ դնելով շումերական անկախ քաղաք-պետությունների դարավոր պայքարին՝ Հարավային Միջագետքում հաստատելով Աքքադի տիրապետությունը[3]: Աքքադի պետությունը Միջագետքի պատմության մեջ նոր էջ հանդիսացավ: Առաջին անգամ ողջ Միջագետքը միավորվեց մեկ արքայատոհմի գլխավորությամբ: Այս վերջին հանգամանքն էլ անխուսափելիորեն պետք է հանգեցներ արքայական իշխանության հզորացմանը: Մի հանգամանք, որը նկատելի էր դեռևս Ուռմայի տիրակալ (Ուռմայի էնսի, ապա Ուրուկի լուգալ) Լուգալզագեսիի իշխանության ժամանակահատվածում[4]: Պետք է արձանագրել, սակայն, որ Աքքադի պետությունը, թե հասարա-քաղաքական ու տնտեսական, և թէ

[1] *Sommerfeld W.*, Sargon von Akkade, RIA, Band 12m 1/2, Berlin. New York, 2009, S. 44-49.

[2] Թվագրումը տրվում ըստ *միջին ժամանակագրության՝ Sallaberger W., Schrakamp I.*, Philological Data for a Historical Chronology of Mesopotamia in the 3rd Millennium, ARCANE, № III, 2015, pp. 33-49, 105-110; *Hamblin W. J.*, Warfare in the Ancient Near East to 1600 BC: Holy Warriors at the Dawn of History, New York, 2006, p. 73; *Charpin D.,* The History of Ancient Mesopotamia: An Overview, CANE, Vol. II, New York, 1995, pp. 807-829, հմմտ.՝ *Khurt A.,* The Ancient Near East c. 3000-330 BC, Vol. I, London-New York, 1995, p. 45f.

[3] *Gadd C. J.*, The Dynasty of Agade and the Gutian Invasion, CAH, I/2, 1971, p. 420ff.

[4] *Kesecker N.*, Lugalzagesi: the First Emperor of Mesopotamia?, Aramazd: AJNES, 2018, № XII/1, pp. 76-93.

տարածքային առումով[5] խիստ տարբերվում էր Լուգալզագեսիի տերությունից:

Արմատապես փոփոխման էր ենթարկվել և քաղաքական համակարգը, և թե արքայական իշխանությունը որպես այդպիսին: Աքքադի տիրակալները,ի տարբերություն Շումերի, արդեն հանդես էին գալիս որպես ռազմական առաջնորդներ և արքաներ, խիստ տարբերվելով Վաղ դինաստիական շրջանի տիրակալներից, որոնք առավելապես հանդես էին գալիս որպես *քուրմ-տիրակալներ կամ* իշխաններ[6], ինչի պատճառով անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադառնալ Վաղ դինաստիական ժամանակաշրջանի Շումերի տիրակալների տիտոսներին:

Վաղ դինաստիական ժամանակաշրջանի տիրակալների տիտղոսաշարերը

Ինչպես հայտնի է՝ Վաղ դինաստիական ժամանակաշրջանի Շումերի տիրակալները հիմնականում կրում էին շումերական **LUGAL, EN** և **ENSÍ** տիտղոսները[7]:

LUGAL տիտղոսը հաճախ հանդես է գալիս նաև ***lú-gal*** ձևով, տառացի նշանակում է «*մեծ մարդ*»[8] և որոշ վերապահումներով

---

[5] Աքքադի տերությունը՝ փաստացի կարելի համարել առաջին «*կայսրություն*» Մերձավոր Արևելքում, որը ձգվում էր Միջերկրական ծովից մինչև Իրանական լեռներից՝ *Ру Ж.*, Великие цивилизации Междуречья. Древняя Месопотамия: царства Шумер, Аккад, Вавилония и Ассирия 2700-100 гг. до н.э., Москва, 2016, с. 156-157:

[6] *Annus A.*, The God Ninurta in the Mythology and Royal Ideology of Ancient Mesopotamiam, SAAS, Vol. 14, Helsinki, 2002, p. 16.

[7] *Oppenheim A. L.*, Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization, Chicago, 1964, p. 99.

[8] Շատ հետաքրքիր է նաև *lú-gal*-ի ուղղակի «*մեծ մարդ*» հասկացությունը: Ըստ Հ. Ֆրանկֆորտի այսպես էին կոչվում նաև մեծ թվով ստրուկներ ունեցող անձիք՝ *Frankfort H.*, Kingship and the Gods, A Study of the Ancient Near Eastern Religion as the Integration of Society and Nature, Chicago, 1948, p. 218: Տես նաև՝ *Hallo W. W.*, Origins, The Ancient Near Eastern Backgraund of Some Modern Western Institutions, Brill, 1996, p. 190ff.

համապատասխանում է աքքադական **šarru**-ին[9], վերջինս էլ արդեն տառացիորեն նշանակում է «*արքա*»[10]: Սակայն, պետք է նշել նաև, որ **LUGAL**-ը որպես «*արքա*» թարգմանելիս պետք է բավականին զգույշ լինել և նկատի ունենալ, որ սկզբնապես այն ընկալվել է որպես ռազմական առաջնորդ[11], որը չուներ անսահմանափակ իշխանություն և ընտրվում էր որոշակի ժամկետով՝ ծայրահեղ անհրաժեշտ դեպքերում: Վերջինիս առումով **LUGAL** տիտղոսը կարելի է համեմատել նաև Հռոմեական Հանրապետության ***dictator***-ի հետ: Ի դեպ, հետաքրքիր է նշել, որ հռոմեական dictator-ի գրեթե կեսը նշանակվել են՝ ***rei gerundae causa*** — «*պատերազմ վարելու պատճառով*»[12]: Վերջինիս վառ վկայությունը կարող է հանդիսանալ հետևյալը, Ի. Մ. Դյակոնովը նշում է, որ Լագաշի **ENSÍ** Է-անատումը (վերջինս ի դեպ Վաղ դինաստիական շրջանում եզակի չէ) Ումմայի դեմ պայքարի ժամանակահատվածում կրում է **LUGAL** տիտղոսը[13], իսկ հաղթական ավարտից հետո՝ կրկին հանդես է գալիս որպես **ENSÍ**[14]:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ **LUGAL** տիտղոսով էին հանդես գալիս այն քաղաք-պետությունների տիրակալները՝ որոնք ձգտում էին Միջագետքում շումերական քաղաք-

---

[9] *Borger R.*, Assyrisch-babylonische Zeichenliste, AOAT, Band 33, Neukirchener Verlag Neukirchen-Vluyn, 1978, № 151, S. 100.

[10] *Gadd C. J.*, The Cities of Babylonia, CAH, I/2, p. 103ff.; *CAD*, Š/2, vol. 17, Chicago, 1992, p. 76f.

[11] *Дьяконов И. М.*, Города-государств Шумера, История Древнего Мира, Раняя Древность, Кн. I, М., 1989, с. 64.

[12] *Մաշկին Ն.*, Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951, էջ 206-207:

[13] Մինչ օրս հայտնի Է-անատումի 19 արձանագրություններից միայն երկուսում է հանդես գալիս որպես՝ *[É]-an-na-túm lugal-Lagaš* (*RIME 1*, E1.9.3.1, Col. III, ll. 1-2, Rev. Col. V., ll. 42-44; E1.9.3.12, ll. 1-3), իսկ մնացած դեպքերում՝ *É-an-na-túm énsi-Lagaš*: Շատ հետաքրքիր է նաև, որ Ուրուկի բոլոր տիրակալների անունները բացառությամբ՝ Ուր-զագեից և Էն-շակուշ-Անայից, սկսվում են Lugal-ով՝ *RIME 1*, E1.14, p. 409ff.

[14] *История Древнего Востока*, Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации, часть 1, Месопотамия, под. Ред. И. М. Дьяконова, М., 1983, с. 195.

պետությունների միջև մղվող պայքարում գերիշխանության հասնել: Լուգալ-հեգեմոնն, ինչպես իրավացիորեն նկատում է Ի. Մ. Դյակոնովը՝ հենվում էր իրեն հավատարիմ շքախմբի և ռազմական ջոկատի վրա, որով նա կարող էր գործել արդեն առանց հաշվի առնելու *ավագների խորհրդի* որոշումները: Շումերի հյուսիսում, լուգալ-հեգեմոնը կրում էր ***LUGAL KIŠ*** տիտղոսը, իսկ հարավում՝ ***LUGAL KALAM.MA.KI***, տառացի՝ «երկրի լուգալ»: Վերջին տիտղոսն ստանալու համար լուգալ-հեգեմոնին անհրաժեշտ էր, որպեսզի այն ճանաչում ստանա Նիպպուր քաղաքի տաճարում[15]:

EN տիտղոսը տառացի նշանակում է «*տեր, տիրակալ*»[16], համապատասխանում է աքքադական **bēlu**-ին[17] և հանդես է գալիս նաև որպես «*քուրմ*»[18]: Շումերում այս տիտղոսը հիմնականում կրում էին Ուրուկի տիրակալները[19]:

ENSÍ տիտղոսը նշանակում է «*շինության հիմնադիր տեր (կամ քուրմ)*»[20]: Ինչպես դժվար չէ նկատել, տիտղոսը բաղկացած է շումերական **EN** և **SÍ** բառերից, որտեղ **EN**-ը նշանակում է *քուրմ, տեր*, իսկ **SÍ**-ն՝ *հիմնադրել*: Շումերական **ENSÍ**-ին համարժեք էր աքքադական **iššakku/m**-ին[21]: Այն փաստացի հանդես էր գալիս որպես աստվածների տեղապահ և կառավարում էր տվյալ քաղաքի հովանավոր աստծո անունից: **ENSÍ**-ի հիմնական գործառույթն այն էր, որ հովանավոր աստծո համար տաճարներ կառուցեր, հետևեր աստծո տաճարի հողատարածքների ընդլայնմանն ու հերկմանը և այլն: Այն միաժամանակ տվյալ պետության ռազմական առաջնորդն էր: **ENSÍ** տիտղոսն իր մեջ փաստացի միավորում էր

---

[15] *Дьяконов И. М.*, Op. cit., с. 66.

[16] *Borger R.*, Op. cit., № 99, S. 84.

[17] *CAD*, B, Vol. 2, Chicago, 1965, p. 191ff.

[18] *Oppenheim A. L.*, Op. cit., p. 99.

[19] *История Древнего Востока*, часть 1, с. 171.

[20] *Там же*; *Дьяконов И. М.*, Op. cit., с. 64.

[21] *CAD*, I-J, vol. 7, Chicago, 1960, p. 262ff.; *Borger R.*, Op. cit., № 295, S. 121; *Յականյան Ռ.*, Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, IX-X, Երևան, 2014, էջ 230:

հոգևոր և աշխարհիկ իշխանությունը[22]:

Աքքադի արքաների տիտղոսաշարերը

Սարգոն Աքքադացու և նրա հաջորդների կառավարման ժամանակահատվածում՝ ականատես ենք լինում տիրակալի իշխանության գործառույթների կտրուկ փոփոխության: Նոր տերության հասարակական-քաղաքական համակարգին համապատասխան, առաջին հերթին ականատես ենք լինում անսահմանափակ իշխանությամբ օժտված արքայի գործառույթին:

Այժմ անդրադառնանք Սարգոն Աքքադացու և նրա հաջորդների տիտղոսներին:

Šarrum – որոշ վերապահումներով այս տիտղոսը կարելի է շումերական *LUGAL*-ի համարժեքը համարել, չմոռանալով, սակայն որ նրանք նույնական չէին: Եթե, ինչպես արդեն նշեցինք՝ *LUGAL*-ը սկզբնապես հանդես էր գալիս որպես ռազմական առաջնորդ, ապա՝ **šarrum**-ն արդեն արքա է բառի բուն իմաստով[23]: Սարգոն Աքքադացու աքքադերեն արձանագրության մեջ ներկայացված տիտղոսում արդեն հանդիպում ենք՝ [***Šar-ru-***GI] [LUGAL (***šarrum***[24])] [***A-kà-dè.***KI] «*Շարրու-կի՝ Աքքադի արքա*» արտահայտությունը, որի շումերական տարբերակն ունի հետևյալ համարժեք զուգահեռը՝ [Šar-um-GI] [lugal-[ag-ge-dè.KI][25]: **LUGAL *A-kà-dè.*KI** «*Աքքադի արքա*» տիտղոսը Սարգոնից հետո կրում են աքքադական գրեթե բոլոր արքաները[26]:

Սարգոնից հետո, սակայն **LUGAL *A-kà-dè.*KI** արքայական հիմ-

---

[22] *Frankfort H.*, Op. cit., p. 222f.

[23] *CAD*, Š/2, vol. 17, Chicago, 1992, p. 76f.

[24] Տեքստում *LUGAL*-ի հետ միասին, ընթերցողին չմոլորեցնելու պատճառով փակագծում ավելացրել ենք նաև աքքադական *šarrum*-արքան: Նշենք նաև, որ այն հանդես չի գալիս շումերական իմաստով, այլ ներկայացված է աքքադագիտության մեջ ընդունված գաղափարագրի ձևով: Տես՝ *RIME 2*, p. 8.

[25] *RIME 2*, E2.1.1.1., ll. 1-3.

[26] Հետաքրքիր է, որ նույն տիտղոսն է կրում նաև Լի-լու-ուլ-դանը (LI-lu-ul-DAN)՝ *RIME 2*, E2.1.12, որի պատկանելությունը որևէ արքայատոհմին՝ քննարկման փուլում է:

նական տիտղոսին[27] հետագայում ավելանում է նաև «*հզոր*»՝ ***da-núm*** ածականը: Այն կրում էին մասնավորապես՝ Նարամ-Սինը (մ.թ.ա. 2254-2218թթ.)[28], Շար-կալի-շարրին (մ.թ.ա. 2217-2193թթ.)[29], Դուդուն (մ.թ.ա. 2189-2169թթ.)[30] և Շու-Տուրուլը (մ.թ.ա. 2168-2154թթ.)[31]:

Վաղ դինաստիական ժամանակաշրջանից պահպանված ու Աքքադի առաջին արքաների կողմից լայնորեն կիրառված տիտղոսներից էր **LUGAL KIŠ** «*տիեզերքի արքա*» տիտղոսը: Սարգոնից[32] բացի այս տիտղոսի կիրառմանն ականատես ենք լինում նրա անմիջական հաջորդներ Ռիմուշի (մ.թ.ա. 2278-2270թթ.)[33] և Մանիշտուշուի (մ.թ.ա. 2269-2225թթ.)[34] տիտղոսաշարերում: Ի դեպ նշված Սարգոնի, Ռիմուշի և Մանիշտուշուի տիտղոսաշարերը հարուստ չեն, նրանք կրում են բացառապես **LUGAL KIŠ** տիտղոսը:

Հաջորդ ***šar kibrātim arba'im*** *«աշխարհի չորս ծագերի արքա»* տիտղոսը, որը մեծ տարածում է ստանում նաև հետագա դարաշրջաններում և փաստացի մնում է շրջանառության մեջ ընդհուպ մինչև մ.թ.ա. I հազարամյակի կեսերը: Աքքադի արքաներից այս տիտղոսը կրել է միայն Նարամ-Սինը՝ ***Na-ra-am-***^{d}**EN.ZU** ***da-núm*** **LUGAL** ***A-kà-dè.*****KI** ***ù ki-ib-ra-tim ar-ba-im*** - «Նարամ-Սին, հզոր արքա, արքա Աքքադի և աշխարհի չորս ծագերի»[35]: Հետաքրքիր է նաև, որ Նարամ-Սինի ժամանակակից՝ կուտիների առաջնորդ

---

[27] *RIME 2*, E2.1-E2.1.12.

[28] *RIME 2*, E2.1.4.

[29] *RIME 2*, E2.1.5: Ի դեպ Շար-կալի-շարրիի տիտղոսաշարն այդքան էլ հարուստ չէ, մասնավորապես՝ E2.1.5.7; E2.1.5.8; E2.1.5.2001; E2.1.5.2002; E2.1.5.2006-2011 և E2.1.5.2013 արձանագրություններում նա հանդես է գալիս միայն *LUGAL A-kà-dè.KI* տիտղոսով:

[30] *RIME 2*, E2.1.10, բացառությամբ՝ E2.1.10.2 արձանագրության, որտեղ կրում է միայն *LUGAL A-kà-dè.KI* տիտղոսը:

[31] *RIME 2*, E2.1.11; բացառությամբ՝ E2.1.11.2003 արձանագրության:

[32] *RIME 2*, E2.1.1.

[33] *RIME 2*, E2.1.2.

[34] *RIME 2*, E2.1.3.

[35] *RIME 2*, E2.1.4.1., ll. 1-7 և այլուր:

Էրրիդու-պիզիրը նույնպես կրել է այս տիտղոսը: Նիպպուր քաղաքի գլխավոր աստծո Էնլիլի դեմ Նարամ-Սինի ոտնձգություններին վերջ դնելու համար՝ նիպպուրցիներն օգնություն են խնդրում Էրրիդու-պիզիրից: Վերջինս, ըստ երևույթին արշավանք է ձեռնարկում դեպի Նիպպուր, հաղթում Նարամ-Սինին կամ նրա որևէ ջոկատին, և որից հետո էլ ի նշանավորումն այս հաղթանակի՝ Էրրիդու-պիզիրը իր Սիպպարյան արձանագրության մեջ իրեն վերագրում է՝ ***E-er-ri-du-pi-zi-ir da-núm*** LUGAL ***Gu-ti-im ù ki-ib-ra-tim ar-ba-im*** - «*Էրրիդու-պիզիր, հզոր արքա Գուտիումի և աշխարհի չորս ծագերի*»[36]:

Հաջորդ տիտղոսը DINGIR է՝ *«աստված»* գաղափարագրի կիրառումն է արքայի անվան դիմաց և համապատասխանում է աքքադական ***ilu/m***-ին: Մերձավոր Արևելքում առաջին անգամ այս տիտղոսն սկսել է կիրառել Նարամ-Սինը՝ ***d****Na-ra-am-****d***EN.ZU՝ *«Աստված Նարամ-Սին»*[37] կամ ***d****Na-ra-am-****d***EN.ZU DINGIR *A-kà-dè*.KI «Նարամ-Սին, Աքքադի Աստված»[38], ապա վերջինիս որդին՝ Շար-կալի-շարրին՝ ***d****Šar-kà-li*-LUGAL-*ri* ՝*«Աստված Շար-կալի-շարրի»*[39]:

Ինչպես արդեն նշվեց, Աքքադի ժամանակաշրջանի արքաներն օժտված էին անսահմանափակ իշխանությամբ, որոնց վառ վկայությունն էր արքաների կրած տիտղոսաշարերը՝ LUGAL KIŠ, DINGIR-*A-kà-dè*.KI, LUGAL *A-kà-dè*.KI ***ù ki-ib-ra-tim ar-ba-im***, ինչպես նաև արքաների անունները՝ Սարգոն՝ ***Šar-ru-GI*** *«Իրական*

---

[36] *RIME 2*, E2.2.1.1, ll. 12-18.

[37] *RIME 2*, E2.2.1.4.12-13; E2.2.1.4.15-18; E2.2.1.4.20; E2.2.1.4.23-24; E2.2.1.4.26-31; E2.2.1.4.33; E2.2.1.4.12-35; E2.2.1.4.37-38; E2.2.1.4.40-43; E2.2.1.4.47; E2.2.1.4.49-50; E2.2.1.4.53-54; E2.2.1.4.1003; E2.2.1.4.2002; E2.2.1.4.2004-2006; E2.2.1.4.2011; E2.2.1.4.2014-2016; E2.2.1.4.2020; E2.2.1.4.2023.

[38] *RIME 2*, E2.2.1.4.2003, l. 1; E2.2.1.4.2007, ll. 1-2; E2.2.1.4.2009, ll. 1-2; E2.2.1.4.2010, ll. 1-3; E2.2.1.4.2013, ll. 1-2; E2.2.1.4.2014, ll. 1-2; E2.2.1.4.2018, ll. 4-5.

[39] *RIME 2*, E2.1.5.2; E2.1.5.4; E2.1.5.6; E2.1.5.10; E2.1.5.2001; E2.1.5.2010; E2.1.5.2012; E2.1.5.2015.

(ճշմարիտ) արքա», Մանիշտուշու՝ ***Man-ištūšu*** *«Ով է նրա հետ հավասար»*, *Նարամ-Սին՝* ***ᵈNa-ra-am-ᵈ***EN.ZU *«Սին (Լուսնի) աստծո սիրելի»,* Շար-կալի-շարրի՝ ***Šar-kà-li-***LUGAL(šarr)***-ri*** *«Բոլոր արքաների արքա»*, իսկ Նարամ-Սինի որդիներից մեկը կրում էր Բին-կալի-շարրի՝ ***Bin-kali-LUGAL*** *«Բոլոր արքաների սերունդ»* անունը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է նշել, որ ի տարբերություն Վաղ դինաստիական ժամանակաշրջանի Շումերի՝ Աքքադի տիրապետությունից սկսած՝ փոփոխման են ենթարկվում տիրակալների ոչ միայն գաղափարական գործառույթները, այլև գործառական իշխանությունը:

Գրականություն

1. *Մաշկին Ն.,* Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951:
2. *Յականյան Ռ.,* Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, IX-X, Երևան, 2014, էջ 229-246:
3. *Дьяконов И. М.*, Города-государства Шумера, История Древнего мира, Ранняя Древность, Кн. I, М., 1989, с. 57-72.
4. *История Древнего Востока*, Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации, часть 1, Месопотамия, под. Ред. И. М. Дьяконова, М., 1983.
5. *Ру Ж.*, Великие цивилизации Междуречья. Древняя Месопотамия: царства Шумер, Аккад, Вавилония и Ассирия 2700-100 гг. до н.э., Москва, 2016
6. *Annus A.*, The God Ninurta in the Mythology and Royal Ideology of Ancient Mesopotamiam, SAAS, Vol. 14, Helsinki, 2002.
7. *Borger R.*, Assyrisch-babylonische Zeichenliste, Alter Orient und Altes Testament, Band 33, Neukirchener Verlag Neukirchen-Vluyn, 1978.
8. *CAD* - The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Vol. 2, B, 1965; Vol. 7, I-J, 1960; Vol. 17, Š/2, 1992.

9. *Charpin D.,* The History of Ancient Mesopotamia: An Overview, in Civilizations of the Ancient Near East, Ed. in Chiff Jack M. Sasson, Vol. II, New York, 1995, pp. 807-829.
10. *Frankfort H.*, Kingship and the Gods, A Study of the Ancient Near Eastern Religion as the Integration of Society and Nature, Chicago, 1948.
11. *Gadd C. J.*, The Cities of Babylonia, CAH, I/2, 1971, pp. 93-144.
12. *Gadd C. J.*, The Dynasty of Agade and the Gutian Invasion, CAH, I/2, 1971, pp. 417-463.
13. *Gelb I. J., Kienast B.*, Die altakkadischen Königsinschriften des Dritten Jahrtausends v. Chr., Stuttgart, 1990
14. *Hamblin W. J.*, Warfare in the Ancient Near East to 1600 BC: Holy Warriors at the Dawn of History, New York, 2006.
15. *Hallo W. W.*, Origins, The Ancient Near Eastern Backgraund of Some Modern Western Institutions, Brill, 1996.
16. *Kesecker N.*, Lugalzagesi: the First Emperor of Mesopotamia?, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2018, № XII/1, pp. 76-95.
17. *Khurt A.,* The Ancient Near East c. 3000-330 BC, Vol. I, London-New York, 1995.
18. *Oppenheim A. L.*, Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization, Chicago, 1964.
19. *RIME 1 - Frayne D. R.*, Presargonic Period (2700-2350 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Early Periods, Vol. 1, Toronto-Buffalo-London, 1998.
20. *RIME 2 - Frayne D.*, Sargonic and Gutian Periods (2234-2113 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Early Periods, Vol. 2, Toronto-Buffalo-London, 1993.
21. *Sallaberger W., Schrakamp I.*, Philological Data for a Historical Chronology of Mesopotamia in the 3rd Millennium, Associated Regional Chronologies for the Ancient Near East and the Eastern Mediterranean, № III, 2015.
22. *Sommerfeld W.*, Sargon von Akkade, RIA, Band 12m 1/2, Berlin. New York, 2009, S. 44-49.

Царственные титулы в Аккаде

Цаканян Руслан

Резюме

Ключевые слова: *LUGAL, LUGAL KIŠ, DINGIR, EN, ENSÍ, Саргон, Нарам-Син*

В настоящей статье обсуждаются царские титулы, используемые в Аккаде. Были кратко обсуждены и рассмотрены титулы правителей Раннединастического периода Шумера. Среди обсуждаемых титулов Раннединастического периода Шумера – *LUGAL – "царь, вождь-военачальник, большой человек" (термин сравнили с dictator-ом Римской эпохи), EN - "жрец, господин, владыка" и ENSÍ - "жрец, жрец-строитель"*. Было подчеркнуто, что правители Шумера не имели неограниченную власть, не были царями как правители Аккадского периода.

Были рассмотрены и титулы Аккадских царей - *LUGAL KIŠ - "царь вселенной", DINGIR-A-kà-dè.KI – "бог Аккада", LUGAL A-kà-dè.KI ù ki-ib-ra-tim ar-ba-im "царь Аккада и четырёх сторон света"*. Отметили, что все эти титулы и собственные имена Аккадской династии – такие как Саргон (Šar-ru-GI) (2334-2279гг. до н.э.) – "Истенен царь", Ман-ишту-шу (Maništūšu) (2269-2225гг. до н.э.) "Кто с ним (равен)?", Нарам-Син (^{d}Na-ra-am-^{d}EN.ZU) (2254-2218гг. до н.э.) "Любимец (бога) Сина (Луны)", Шар-кали-шарри (Šar-kà-li-LUGAL (šarr)-ri) (2217-2193гг. до н.э.)- "Царь всех царей", а имя второго сына Нарам-Сина был Бин-кали-шарри (Bin-kali-LUGAL) - "Потомок всех царей", и т.д., доказывают, что Аккадские цари имели неограниченную власть.

Royal Titles in Akkad

Tsakanyan Ruslan

Summary

Key words: *LUGAL, LUGAL KIŠ, DINGIR, EN, ENSÍ, Sargon, Naram-Sin*

This article discusses the royal titles used in Akkad. The titles of the rulers of the Early Dynastic period of Sumer were shortly discussed and reviewed. Among the titles discussed in the Early Dynastic period of Sumer - *LUGAL - "king, leader-military leader, big man"* (the term was compared with the dictator of the Roman era), *EN - "priest, lord, ruler" and ENSÍ - "priest, priest-builder "*. It was emphasized that the rulers of Sumer did not have unlimited power, were not kings as governors of the Akkadian period.

The titles of the following Akkadian kings have been discussed: LUGAL KIŠ - "King of the Universe", DINGIR-A-kà-dè.KI - "God of Akkad", LUGAL A-kà-dè.KI ù ki-ib-ra-tim ar-ba- im "king of Akkad and the four cardinal points". It was noted that all these titles and proper names of the Akkadian dynasty - such as Sargon (Šar-ru-GI) (2334-2279 BC) - "The king is legitimate", Man-ishtu-shu (Man-ištūšu) (2269-2225 BC) " Who is (equal) with him? ", Naram-Sin (^{d}Na-ra-am-^{d}EN.ZU) (2254-2218 BC) "Favorite (of God) Sin (Moon)", Shar-kali-sharri (Šar-kà-li-LUGAL (šarr) -ri) (2217-2193 BC) -"King of all kings ", and the name of the second son Naram-Sin was Bin-kali-sharri (Bin-kali-LUGAL) - "The descendant of all kings", etc., prove that the Akkadian kings had unlimited power.

Ներկայացվել է 07.05.2019 թ.
Գրախոսվել է 14.05.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ПЕДАГОГИКА И МЕТОДИКА

PEDAGOGY AND METHODOLOGY

Աղյուսակների և սխեմաների օգտագործումը «Ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում» թեմայի սեմինար պարապմունքի ժամանակ

Աղաջանյան Սամվել

Հանգուցային բառեր. *բանավեճ, գիտելիքների ձեռքբերում, կոլեկտիվ աշխատանք, ինքնուրույն մտածողություն, բարեփոխումներ*

Ժամանակակից բուհական կրթությունն անհնար է պատկերացնել առանց սեմինար պարապմունքների: Սեմինարը պարապմունքի կազմակերպման ձև է, որի դեպքում ուսանողները գիտելիքների տարբեր աղբյուրներից ինքնուրույն ուսումնասիրում են նյութը և դասախոսի ղեկավարությամբ կատարում են առաջադրանքները: Սեմինարների ժամանակ ուսանողները մեծապես օգտագործում են տարբեր աղբյուրներից ստացած ինֆորմացիան: Ակտիվ մեթոդների, օրինակ՝ բանավեճերի օգտագործման ընթացքում նրանք խորացնում, համակարգում և ամրապնդում են իրենց գիտելիքները, ձեռք են բերում աշխատելու արժեքավոր հմտություններ: Նման պարապմունքերին հեշտությամբ հայտնաբերվում և վերացվում են ուսումնասիրվող նյութի վերաբերյալ կասկածները և դժվարությունները: Բայց ամենագլխավորն այն է, որ սեմինարներին մասնակցությունն ակտիվություն է ձևավորում գիտելիքների ձեռքբերման պրոցեսում և ուսանողների մոտ ձևավորում է ինքնուրույն մտածողություն: Սեմինարն առաջին հերթին կոլեկտիվ աշխատանքի ձև է: Սեմինարին պատրաստվելու ժամանակ մեծ է նաև դասախոսի դերը. նա պետք է կանոնակարգի և խմբագրի ուսանողների գործունեությունը, օգնի գրականության հետ աշխատանքներում, խորհուրդներ տա և հսկի նրանց աշխատանքը:

Սեմինարի թեմայի ընտրությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Քննարկման դրվող պրոբլեմները ոչ միայն պետք է

լինեն արմատական, այլ նաև ուսանողների ուժերին համապատասխան և պետք է հետաքրքրություն առաջացնեն: Քննարկվող հարցի վերաբերյալ ուսանողների գիտելիքների նվազագույն ծավալի անհրաժեշտությունը նպատակահարմար է դարձնում սեմինարի անցկացնելը ուսումնասիրվող թեմայի կեսում կամ վերջում: Նման պարապմունքների արդյունավետության համար անհրաժեշտ է կոնսպեկտավորման, դասախոսի հանձնարարած գրականության վերլուծության, կարճ զեկուցումներ և հաղորդումներ պատրաստելու, բանավեճերին մասնակցելու հմտություններ և կարողություններ: Եվ իհարկե սեմինարի թեման պետք է ապահովված լինի ուսանողներին հասանելի գրականությամբ: Սեմինարն անցկացնելուց առնվազն երկու շաբաթ առաջ անհրաժեշտ է ներկայացնել նախատեսվող պարապմունքի պլանը: Հարցերը պետք է լինեն պրոբլեմային, նախատեսեն այլընտրանքային տեսակետներ և լուրջ քննարկում:

Պլանի հետ միաժամանակ հանձնարարվում է համապատասխան գրականության ցանկ, ընդ որում անհրաժեշտ է ցույց տալ յուրաքանչյուր մենագրության, հոդվածի հետ կատարվող աշխատանքների առանձնահատկությունները: Բացի գրքի վերնագրից՝ անհրաժեշտ է նշել նաև համապատասխան էջերը: Առանձին ուսանողների կամ խմբերի կարելի է հանձնարարել լրացուցիչ առաջադրանքներ, որոնք կարող են լինել ինչ-որ հարցի վերաբերյալ նյութ հավաքելու, գրականության հիման վրա աղյուսակ, սխեմա կազմելու, ինֆորմացիոն տեղեկանքներ կազմելու, վիճակագրական տվյալներ հավաքելու ձևով: Ուսանողների գործունեության բնույթով և կազմակերպչական ձևերով պայմանավորված՝ բոլոր սեմինարները կարելի է բաժանել հետևյալ տիպերի. **ԾԱՎԱԼՈՒՆ ԶՐՈՒՅՑ –** Այս դեպքում ուսանողները պատրաստվում են պլանի բոլոր հարցերի շուրջ և առավելագույն չափով ընդգրկվում են թեմայի քննարկման մեջ: Այդ գործում նրանց օգնում են յուրաքանչյուր հարցի վերաբերյալ նախօրոք պատրաստված ծավալուն ելույթները: **ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ**

ՌԵՖԵՐԱՏՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ – Ելույթ ունեցողի համար համակուրսեցիներից մեկը նշանակվում է ընդդիմախոս: Մնացած ուսանողները ծանոթանում են թեմայի վերաբերյալ հիմնական գրականությանը, որպեսզի պատրաստ լինեն զեկուցման վերաբերյալ քննարկմանը: **ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ** – Ուսանողներին հնարավորություն են տալիս պաշտպանել իրենց տեսակետները քննարկվող հարցի վերաբերյալ: Այսպիսով, սեմինարի տվյալ տիպը անմիջականորեն կապված է ուսումնական աշխատանքի այնպիսի ձևի հետ, ինչպիսին է բանավեճը: **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԵՐԱԿՇՌՈՂ ՍԵՄԻՆԱՐ** – Այս սեմինարն սկսվում է դասախոսի ներածական խոսքով, որը լսարանին ծանոթացնում է թեմային, ուսումնական խնդիրներին, դրանց լուծման եղանակներին և լրացուցիչ տեղեկություններին: Այնուհետև ուսանողներին կամ խմբերին առաջարկվում է ընտրել տարբեր բարդության մի քանի առաջադրանքներ: Աշխատանքը տևում է շուրջ 20 րոպե, որի ընթացքում ուսանողները կարող են օգնության համար դիմել դասախոսին: Սեմինարն ավարտվում է խմբերի գործունեության արդյունքների կոլեկտիվ քննարկմամբ և ստացած գիտելիքներն ու կարողություններն ամրապնդող վարժությունների կատարմամբ [1, 110-111]:

Սեմինարը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական փուլի՝ **դասախոսի ներածական խոսք, պլանի կետերի քննարկում, կատարված աշխատանքի արդյունքների ամփոփում:** Սեմինարի սկզբում դասախոսը ձևակերպում է թեման, բացատրում է դրա ուսումնասիրման նպատակներն ու խնդիրները, դրա տեղը դասընթացի կառուցվածքում, հիմնավորում է քննարկման դրված պրոբլեմների կարևորությունն ու հրատապությունը: Սեմինարի այս մասը պետք է ընդգրկի 2-4 րոպե: Դասախոսի խոսքից հետո կամ խոսքը տրվում է զեկուցողին, կամ ուսանողներին առաջարկվում է արտահայտվել պլանի հարցերի վերաբերյալ: Առաջին դեպքում սովորաբար ներկաների ակտիվությունը մեծ չէ. մասնակիցները խուսափում են զեկուցողին դիտողություն անելուց կամ

նրա հետ վիճելուց, քանի որ թեմայի վերաբերյալ նա ավելի շատ ինֆորմացիայի է տիրապետում: Նպատակահարմար է սեմինարն անցկացնել առանց զեկուցման և ուսանողներին միանգամից ներգրավել պրոբլեմի քննարկման մեջ: Ուսանողների պատրաստվածության աստիճանից կախված՝ օգտագործվում են հետևյալ տարբերակները

ա) Որևէ ուսանողի առաջարկվում է սկսել դասը, այդ դեպքում շատ հաճախ սեմինարը վերածվում է թեմայի վերաբերյալ սովորական հարցման դասի:

բ) Ելույթ ունենալու հնարավորություն տալ ցանկացողին, դրա համար դասախոսի ներածական խոսքը պետք է նպաստի մտքերի փոխանակման ակտիվությանը:

գ) Քննարկման մեջ ներգրավել թույլ պատրաստված ու պասիվ ուսանողներին, քանի որ ավելի ուժեղները կարող են նրանց ուղղել, և այդ դեպքում կբարձրանա քննարկման մակարդակը: Նման տարբերակ հնարավոր է միայն լսարանի փոխադարձ վստահության մթնոլորտում [1, 110-111]:

Ընդհանրապես սեմինարի ժամանակ դասախոսի վարքագիծը պետք է շատ կոռեկտ լինի: Ավելի լավ է չընդհատել ելույթ ունեցողներին, քննարկման ընթացքին միջամտել միայն այն դեպքում, եթե ուսանողը շեղվում է բուն նյութից: Հնչեցված բազմաթիվ կարծիքներից հետո մնացածներին խորհուրդ է տրվում արտահայտել իրենց վերաբերմունքը ելույթների վերաբերյալ: Ելույթների ժամանակ ուսանողները կարող են օգտվել իրենց գրառումներից, բայց չկարդալ դրանք: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հետևությունները ձևակերպում է դասախոսը. նա է ուղղություն տալիս նաև բանավեճի ընթացքին: Սեմինարն ավարտվում է դասախոսի եզրափակիչ խոսքով: Առանձնակի ուշադրություն պետք է հատկացնել գնահատման վրա:

Անհրաժեշտ է գնահատել ոչ միայն զեկուցողին և նրա ընդդիմախոսին, այլ նաև բանավեճի առավել ակտիվ մասնակիցներին: Անհաջող ելույթները պետք է ենթարկվեն հանգիստ քննարկման:

Չի կարելի գնահատական նշանակել կամավոր, բայց անհաջող պատասխանների համար, ինչպես նաև ցածր միավոր նշանակել ոչ ճիշտ տեսակետի համար:

«Ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում» թեմայի սեմինար պարապմունքի ժամանակ վերը հիշատակված մոտեցումներից բացի՝ կարելի է մեծապես կիրառել նաև աղյուսակներ և սխեմաներ, որոնք հնարավորություն կտան ուսումնական նյութը ներկայացնել սովորողների համար հարմար և մատչելի ձևով:

Այս սեմինարի համար առաջարկել ենք աշխատանքների հետևյալ պլանը.

1. Ճորտատիրական իրավունքի վերացման պատճառները,

2.Գյուղացիական բարեփոխման նախապատրաստումը,

3.Բարեփոխման արդյունքները:


Ռուսաստանի նոր շրջանի պատմությունը դասավանդելու ժամանակ առանձնահատուկ տեղ է հատկացվում Ալեքսանդր II-ի բարեփոխումներին, մասնավորապես՝ ճորտատիրական իրավունքի վերացմանը: Այս թեման կարևորվում է հատկապես նրանով, որ հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել XIX դարի երկրորդ կեսի Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական իրավիճակի մասին: Ի վերջո ճորտատիրության վերացումը վճռական նշանակություն ունեցավ Ռուսական կայսրության հետագա ճակատագրի համար և ճանապարհ բացեց հետագա բարեփոխումների համար:

Ղրիմի պատերազմից հետո ռուսական պետության մեջ ի հայտ եկան բազմաթիվ ներքին հակասություններ: Կարիք էր զգացվում փոփոխությունների, և երկիրն անհամբերությամբ սպասում էր դրան: XIX դարի կեսին ագրարագյուղացիական հարցը Ռուսաստանում դարձել էր սուր սոցիալ-քաղաքական խնդիր: Եվրոպական պետությունների համեմատ՝ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքը պահպանվեց երկար ժամանակ՝ խորապես վնասելով երկրի տնտեսական և սոցիալ-քաղաքական զար-

գացմանը: Կարելի է նշել, որ XIX դարի երկրորդ կեսին ճորտատիրական իրավունքի վերացման անհրաժեշտության գաղափարը հասունացել էր հասարակական գիտակցության մեջ:

Ալեքսանդր II-ի (1855-1881թթ.) կառավարման առաջին շրջանում ձևավորվել էր լուսավորյալ, լիբերալ հայացքների տեր պաշտոնյաների և ցարական ընտանիքի անդամների մի խումբ, որոնք հասկանում էին, որ «այսպես ապրել այլևս հնարավոր չէ» [2, 67]: Ակնհայտ էր, որ ճորտատիրության վերացումն անխուսափելի էր:

Ամփոփելով պլանի առաջին կետը՝ հանգում ենք հետևյալ սխեմային, որը նպաստում է հարցի էության խոր ընկալմանը [3]:



▪ Ռուսաստանում գոյություն ունեցող ճորտատիրական իրավունքն ու ավատատիրությունը խոչընդոտում էին կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը: Նոր կապիտալիստական հարաբերությունների և պահպանվող ճորտատիրական կարգի միջև առկա հակասություններն ընկան ռուսական ավատատիրության ճգնաժամի հիմքում: Ճորտատեր կալվածատերերն այլևս չէին կարողանում խոչընդոտել Ռուսաստանի և Եվրոպական երկրների միջև աճող ապրանքաշրջանառությանը և չէին կա-

րողանում պահպանել իրենց դարն ապրած ու քայքայման ուղին բռնած տնտեսվարման ձևերը:

- Ղրիմի պատերազմում կրած պարտությունը բացահայտեց ճորտատիրական Ռուսաստանի հետամնացությունը Եվրոպական երկրներից:
- Երկրում հեղափոխական պայթյունը կանխելու համար հարկավոր էր իրականացնել տնտեսական, սոցիալական և քաղաքական անհետաձգելի բարեփոխումներ:

Ռուս ժողովուրդը աչքի էր ընկնում պասիվությամբ, համբերատարությամբ և իմաստուն ղեկավարության նկատմամբ հավատով, սրա հետ մեկտեղ՝ երկրում հաճախ էին տեղի ունենում գյուղացիական տարատեսակ խռովություններ. ասվածը հիմնավորելու համար ներկայացնում ենք հետևյալ աղյուսակը [4, 70], որից պարզ երևում է, որ ժողովրդական դժգոհությունն անկասելիորեն աճում էր.

Տարեթիվը	Հուզումների քանակը
1831-1840թթ.	328
1841-1850թթ.	545
1851-1860թթ.	1010

Նոր կայսր Ալեքսանդր II-ը գիտակցում էր, որ միապետության սոցիալական և տնտեսական բազան ամրապնդելու համար անհրաժեշտ է դիմել վճռական քայլերի:

Պատմական իրադրությունից ելնելով՝ Ալեքսանդր II-ն ընտրեց բարեփոխումների ճանապարհը, որով առաջնորդվում էր իր գործունեության ամբողջ ընթացքում:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1857թ. հունվարի 3-ին Ալեքսանդր II-ի հրամանով և նախագահությամբ ստեղծվեց «Գաղտնի կոմիտե»: Կոմիտեի նպատակն էր. «Կալվածատիրական գյուղացիների դրության բարելավման միջոցառումների քննարկումը»: Ինչպես տեսնում ենք, «ազատագրում» բառը դեռևս չի օգտագործվում: Ընդհանուր առմամբ կոմիտեն բավականին զգուշավոր էր աշխատում:

1858թ. փետրվարին «Գաղտնի կոմիտեն» վերանվանվեց «Ճորտատիրական կախվածությունից դուրս եկող կալվածատիրական գյուղացիների հարցի Գլխավոր կոմիտե:

1859թ. մարտի 4-ին Կոմիտեին կից ստեղծվեցին Խմբագրական հանձնաժողովներ, որոնք ուսումնասիրում էին նահանգային կոմիտեների նախապատրաստած նյութերը և գյուղացիների ազատագրման օրենքի նախագծեր էին կազմում:

Քննարկելով տեղերից ստացված առաջարկները՝ ակնհայտ դարձավ, որ կալվածատերերի շրջանում ուրվագծվում է երկու հակադիր մոտեցում.

Կալվածատերերի մեծամասնությունն առաջարկում էր գյուղացուն ազատություն տալ առանց հողի, կամ հատկացնել շատ փոքր բաժնեհող:

Լիբերալ ազնվականներն առաջարկում էին ազատություն ստացող գյուղացիներին փրկագնի դիմաց հողաբաժին հատկացնել:


Նախապես Ալեքսանդր II-ը ևս պաշտպանում էր մեծամասնության տեսակետը, սակայն «պուգաչովշչինայի» կրկնությունից վախը նրան հարկադրեց փոխել իր հայացքները: Ցարի մոտեցումների այս էվոլյուցիան մեծապես պայմանավորված է նաև կառավարությունում առկա «լիբերալ բյուրոկրատիայի» ազդեցիկ խմբավորման ներգործությամբ:

Ճորտատիրության վերացման օրենքն ընդունվեց հետևյալ փուլերով [5].

Տարեթիվը	Կատարված աշխատանքը
1859թ. օգոստոս	Գործնականում օրենքը պատրաստ էր, բայց կատարվում էին որոշ փոփոխություններ և լրացումներ:
1860թ. հոկտեմբեր	«Խմբագրական հանձնաժողովներն» ավարտեցին իրենց աշխատանքները և նախագիծը հանձնեցին Գլխավոր կոմիտեին, որտեղ այն կրկին քննարկվեց և նոր փոփոխության ենթարկվեց՝ այս անգամ կալվածատերերի օգտին:
1861թ. հունվարի 28	Նախագիծը ներկայացվեց Պետական խորհրդի քննարկմանը, որն այն ընդունեց որոշ փոփոխություններով (կրճատեցին գյուղացու բաժնեհողի չափը):
1861թ. փետրվարի 19	Հրապարակվեց ճորտատիրական իրավունքը վերացնելու վերաբերյալ ցարական հրովարտակը, որով 22,6 միլիոն ճորտ գյուղացիների ազատություն էր շնորհվում: Նույն օրը հրապարակվեց «Ճորտատիրական կախվածությունից ազատվող գյուղացիների մասին» կանոնադրությունը, որը բաղկացած էր 17 օրենսդրական ակտերից:


Փուլերի բովանդակության համառոտագրումը օգնում է ուսանողներին խորությամբ ըմբռնել ընթացող գործընթացի էությունը:

Ճորտատիրական իրավունքի վերացումը և գյուղացիներին անձնական ազատություն շնորհելը գյուղացիական բարեփոխման ամենաակնառու ձեռքբերումներն էին: Ժամանակակիցներն այս բարեփոխումն անվանեցին մեծ, քանի որ ազատություն շնորհեց միլիոնավոր ճորտ գյուղացիների, վերացվեց ճորտային իրավունքը, որը Եվրոպան անվանում էր «ռուսական ստրկություն», և որը ողջ ռուս ժողովրդի համար դարձել էր չարիք: Ճորտատիրական իրավունքի վերացմամբ ճանապարհ բացվեց դեպի բուրժուական հարաբերություններ, դեպի երկրի տնտեսության արդիականացում: 1861թ. բարեփոխման հիմնական դրույթները ներկայացնում ենք հետևյալ պատկերով.



Ազատագրվելուց հետո գյուղացիները համարվում էին «Ժամանակավոր պարտավորագրյալ»: Այս կարգավիճակում գյուղացիները համարվում էին անձնապես ազատ, և կալվածատերերն այլևս չէին կարող տնօրինել նրանց կյանքը: Սակայն պահպանվում էին բոլոր պարտավորությունները (կոռ, հարկ) նախկին տերերի նկատմամբ:

Գյուղացիների կարգավիճակի փոփոխության փուլերը ներկայացվում են հետևյալ սխեմայով.



Օրենքը կալվածատերերին պարտավորեցնում էր փրկագնի դիմաց գյուղացիներին որոշակի չափով բաժնեհող հատկացնել: Միաժամանակ ողջ հողը, այդ թվում՝ նաև գյուղացիների օգտագործման տակ գտնվողը, համարվում էր կալվածատիրոջ սեփա-


կանությունը: Գյուղացուն հատկացվող բաժնեհողը չէր կարող սահմանված չափաբաժնից ոչ ավել լինել, ոչ էլ պակաս: Կայսրության տարբեր մասերում այդ չափաբաժինը կազմում էր 4-ից 12 դեսյատին: Բաժնեհողի առավելագույն չափը պետք է կազմեր նվազագույն չափի եռապատիկը (max=3*min):

Եթե գյուղացու հողաբաժինը գերազանցում էր առավելագույն չափաբաժինը, ապա ավելցուկը կտրում էին (այստեղից էլ առաջացել է «Օտրեզկա» արտահայտությունը): Եթե չէր հասնում սահմանված նվազագույն չափին, ապա պակասը լրացվում էր: Գյուղացիների կողմից օգտագործվող հողերի ավելի քան 40%-ը կրճատվեց, միայն 3%-ի վրա տարածվեց ավելացման սկզբունքը:

Գյուղացիները մինչև 1863թ. փետրվարի 19-ը պետք է մնային ժամանակավոր պարտավորագրյալ վիճակում: Դրանից հետո գյուղացիները պարտավոր էին կալվածատիրոջ հետ փրկագնման պայմանագիր կնքել, որով գյուղացիները պարտավորվում էին փրկագին վճարել, սահմանվում էր փրկագնի և բաժնեհողի չափ: Մինչև 1863թ. գյուղացիների շուրջ 60%-ը հրաժարվում էր ստորագրել փրկագնման պայմանագիրը, քանի որ փրկագնի գումարը 2-3 անգամ գերազանցում էր հողի շուկայական արժեքը: Գյուղացիների՝ փրկագնի անցնելու գործընթացը բավական երկար ժամանակ պահանջեց: 1881թ. ժամանակավոր պարտավորագրյալ վիճակում էր գտնվում նախկին ճորտ գյուղացիների 15%-ը:

Ժամանակավոր պարտավորագրյալ գյուղացիների համար օրենքը նախատեսում էր հարկի հետևյալ չափերը՝ արդյունաբերական նահանգներում արական սեռի 1 անձի համար 10 ռուբլի, մնացածում՝ 8-9 ռուբլի (Պետերբուրգից մինչև 25 վերստ հեռավորության վրա գտնվող կալվածքներում՝ 12 ռուբլի): Անցնելով փրկագնի՝ գյուղացին պարտավորվում էր կալվածատիրոջը միանվագ վճարել պայմանավորված փրկագնի մոտ հինգերորդ մասը: Փրկագնի մնացած մասը վճարում էր պետությունը: Բայց գյուղացին այդ գումարը (տոկոսներով) պետք է 49 տարվա ընթացքում ամենամյա վճարումների ձևով վերադարձներ պետությանը: Փրկագինը վճարելուց հետո հողի սեփականատեր դառնում էր գյուղացիական համայնքը (հենց համայնքն էր իրականացնում իր

անդամների հողաբաժինների փրկագնման գործընթացը): Ըստ էության, հողի մասնավոր սեփականության և տեսանելի ապագայում ֆերմերական տնտեսությունների զարգացման մասին խոսք չէր գնում: Միայն 1906թ. Ստոլիպինի ագրարային բարեփոխման արդյունքում գյուղացիներն իրավունք ստացան դուրս գալ համայնքից և իրենց հողաբաժինը դարձնել մասնավոր սեփականություն: Տեքստի այս հատվածը պատկերվում է ստորև բերված սխեմայում.



Այսպիսով, եթե փրկագնման գումարն ընդունենք 10 ռուբլի տարեկան.

10 ռ - 6%

xռ. - 100%

x= 10 x 100 : 6 = 166ռ. 66կ.

Խրճիթն արժեր 30-40 ռուբլի, ձին՝ 15-20 ռուբլի:

Եթե գյուղացին 49 տարի վճարեր փրկագնի գումարը, ապա պետությանը կտար նախնական գումարի 294%-ը, որը երեք անգամ ավելի էր նախնական գումարից: Այսպիսով, բարեփոխումը ծանր հարված հասցրեց գյուղացու ընտանեկան բյուջեին և էականորեն վատացրեց նրա դրությունը:

Քննարկվող ժամանակահատվածում նկատվում էր լիբերալ-ընդդիմադիր շարժում այն ազնվականների միջավայրում, որոնք անհրաժեշտ էին համարում ոչ միայն վերացնել ճորտատիրական իրավունքը, այլև ձևավորել կառավարման համադասային ընտրովի մարմիններ, ստեղծել հրապարակային դատարան, ընդհանրապես մտցնել հրապարակայնություն, իրականացնել բարեփոխումներ կրթության ու լուսավորության բնագավառում:

Փաստորեն մի կողմից այս բարեփոխումները լայն ճանապարհ բացեցին կայսրությունում կապիտալիստական արտադրահարաբերությունների հետագա խորացման համար, մյուս կողմից նրանց թերի լինելը մասամբ արգելակում էր կապիտալիզմի զարգացումը, և արդյունքում հող էր ստեղծվում սոցիալական նոր լարվածության համար:

Կարելի է փաստել, որ գյուղացիական բարեփոխումը հանդիսացավ այն հիմնական նախադրյալը, որից անմիջականորեն բխում էին մյուս բարեփոխումները:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս փորձը, սեմինար պարապմունքների ժամանակ աղյուսակների և սխեմաների օգտագործումը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Ուսուցումն առավել արդյունավետ է այն պարագայում, երբ աղյուսակները և սխեմաները կազմվում են սեմինարի ընթացքում, քանի որ այդ դեպքում անհամեմատ բարձրանում է ուսանողների ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական մտածողությունը:

Գրականություն

1. Աղյուսակներ և սխեմաներ կազմելիս օգտվել ենք Короткова М. В., Студеникин М. Т., Методика обучения истории в схемах, таблицах, описаниях, М. 1999.
2. Բոլոր տվյալները վերցված են История России IX-XXвв., под. ред. Г. А. Аммона, М. 2006.
3. Берельковский И. В., Павлов Л. С., История, методика преподаваия, М. 2001.
4. Великие реформы в России середины XIX века, /Сост. И.Л. Абрамова, Б. В. Колобов, Г. Л. Волохова и др./, М., 2002.
5. Троицкий Н. А., Россия в XIX веке: Курс лекций, М., 1997.

Использование таблиц и схем во время урока-семинара на тему «Отмена крепостного права в России»

Агаджанян Самвел

Резюме

Ключевые слова: *дискуссия, приобретение знаний, коллективная работа, самостоятельное мышление, реформы*

Невозможно представить совершенное университетское образование без уроков-семинаров.

Семинар – это такой тип организации урока, при котором студенты самостоятельно изучают материал из разных источников. Выполняют задания под руководством преподавателя.

На семинаре студенты в основном используют информацию, полученную из разных источников.

Во время обсуждений они углубляют, координируют и укрепляют свои знания, а также приобретают ценные навыки для своих работ. При таких занятиях с легкостью обнаруживаются и ликвидируются всякие затруднения и сомнения касательно изучаемого материала. Однако самым важным является то, что участие в семинарах формирует активность в процессе приобретения знаний, а также образует у учащихся самостоятельное мышление. Во время урока-семинара на тему “Отмена крепостного права в России” можно в основном применять также таблицы и схемы, которые позволят представить изучаемый материал для учащихся в удобной и доступной форме.

The Use of Charts and Schemes "The Abolition of the Right to Serfdom in Russia"

Aghajanyan Samvel

Key words: *debate, acquisition of knowledge, group work, independent thinking, reforms*

It is impossible to imagine modern university education without seminars. A seminar is a way of organizing a lesson at which students study the material by themselves using different sources of knowledge and do the assignments led by the lecturer. At seminars students greatly use the information gained from various sources. During debates they deepen, coordinate and strengthen their knowledge, develop valuable skills for their work. The doubts and difficulties concerning the studied material can easily be found out and eliminated at such lessons. But the most essential point is that the participation in seminars forms activity in the process of gaining knowledge and students develop self-thinking.

Charts and schemes can greatly be used during the seminar on the topic "The Abolition of the Right to Serfdom in Russia". It will give an opportunity to present the learning material to the learners in a suitable and affordable way.

Ներկայացվել է 15.05.2019 թ.
Գրախոսվել է 24.05.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

Մայրենիի միասնացված դասերին քերականական նյութի և որոշ առարկաների ինտեգրումը՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց

Եդոյան Անուշ
Գևորգյան Վարդուհի

Հանգուցային բառեր՝ *ակտիվ ուսումնառություն, գիտելիքի ինտեգրում, միասնացված դաս, ակադեմիական նպատակադրումներ, ներառարկայական և միջառարկայական ինտեգրում, ՏՀՏ-ների գործադրմամբ ինտեգրման ապահովում:*

Մանկավարժության և հայ մեթոդիկայի պատմությունից հայտնի է, որ տարբեր ժամանակներում տարբեր պահանջներ են ներկայացվել մայրենի լեզվի դասընթացին, կառուցվածքին ու բովանդակությանը՝ երբեմն այն դարձնելով խիստ տեսական, երբեմն էլ՝ խիստ գործնական, երբեմն խիստ ընդգծված ձևով գերագնահատելով քերականության[1] տեղն ու դերը մայրենի լեզվի դասավանդման ընթացքում, իսկ երբեմն էլ ծայրահեղ թերագնահատելով:

Հայոց լեզվի և գրականության ուսումնական բնագավառում քերականության դերի խիստ բարձրացումը և դրա բացարձակ անտեսումը հավասարապես վտանգավոր են և անիմաստ: Մայրենի լեզվի մեթոդիկայի երախտավորներից պրոֆ. Ա.Տեր-Գրիգորյանի կարծիքով՝ «լեզվական գիտելիքն այն չափով միայն պետք է տեղ ունենա մայրենի լեզվի տարրական դասընթացում, որքանով այն հասանելի է երեխայի ըմբռնմանը և որչափով այն նպաստում է խոսքի ուսուցումը գիտակցական հիմքերի վրա դնելուն, զարգացնում է երեխայի տրամաբանական մտածողությունը, նրանց մեջ վերացարկում կատարելու կարողություն է մշակում» [6, 272]:

[1] Քերականության եզրույթը մայրենիի լեզվի տարրական դասընթացում օգտագործվում է պայմանականորեն՝ այդ եզրույթի տակ ընկալվում են մատչելի գիտելիքներ ոչ միայն ձևաբանությունից և շարահյուսությունից, այլև հնչյունաբանությունից, բառագիտությունից, բառակազմությունից:

Գաղտնիք չէ, որ վերջերս միջին դասարաններում կտրուկ փոփոխություն է նկատվում սովորողների՝ ուսման նկատմամբ ունեցած հետաքրքրության և առհասարակ սովորելու հանդեպ: Այս խնդրի լուծման որոնման ճանապարհին շատ է խոսվում դասագրքերի փոփոխության, սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջների վերանայման և առհասարակ առարկայական ծրագրերի բեռնաթափման մասին: Այս համատեքստում քննարկում ծավալելիս հարց է առաջանում՝ արդյոք արդարացված է մայրենիի միասնացված դասը կրտսեր և միջին դասարաններում, որքանով են ընթերցանության համար ընտրված բնագրերը բխում երեխաների հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակներից, կամ դրանք արդյոք նպաստում են լեզվական նյութի ինտեգրմանը:

Ցանկացած դաս որոշակի ամբողջություն է, որի մասերը սերտորեն կապված են միմյանց: Դասի ամբողջականությանն ու ներդաշնակությանը ուսուցիչը կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ նա հստակորեն պատկերացնում է դասի թեման և խնդիրները, գնահատում է նյութի դասավանդման համար ընտրված բնագրի ուսուցողական ու դաստիարակչական արժեքը, գիտակցում է լեզվական նյութի հեշտ յուրացման համար ընտրված վարժությունների և առաջադրանքների կարևորությունը և դրանց առաջադրման հերթականությունը, կազմում է դասի պարզ և կոնկրետ պլանը, որով և առաջնորդվում է դասի ընթացքում:

Սակայն դասի ներդաշնակությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի՝ դասին լավ պատրաստված լինելով, այլև սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած մոտիվացմամբ: Իսկ երեխային հետաքրքրելու ու նրան ակտիվ ուսումնառության մեջ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների հետաքրքրությունից և նախասիրությունից բխող ուսումնական պրոցեսի կազմակերպումն է:

Ժամանակակից մանկավարժագիտության մեջ **ինտեգրումը** սովորողի կողմից կոնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամ-

բողջական ընկալման ձևավորումն է, որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով:

Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել: Մայրենիի միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշչով սահմանված նպատակներից մեկը, այն է՝ «սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը» [3, 1]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 12 տարեկան երեխան դեռևս ֆիզիկապես և հոգեպես բավարար չափով պատրաստ չէ երևույթներն անջատ-անջատ ընկալելու: 11-12 տարեկանը դեռ չի «առանձնացել» իր Ես-ի հետ, իրեն դեռ բավականին չի ճանաչում [4, 50]:

Քանի որ սա հենց այն տարիքն է, երբ երեխան սկսում է զգալ իր բարոյական էությունը, սկսում է ձևավորվել երեխայի անձը, հետևաբար ինքն իրեն ճանաչելով մարդկանց հետ ունեցած կենդանի հարաբերություններով, իրականության մեջ աստիճանաբար իր տեղը փնտրելով, նոր ապրումներ ու զգացողություններ ունե-

նալով է, որ պիտի գիտակցի իր ով լինելը:

Անշուշտ, 5-6-րդ դասարաններում մայրենի լեզվի միասնացված ուսուցմամբ կրթական ծրագրերի իրականացումն առաջին հերթին պայմանավորված է 10-12 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկություններով: Վաղ դեռահասության տարիքում, երբ երեխան ունի իմանալու, կարողանալու, խոսելու, տեսնելու, զգացածն արտահայտելու բուռն ցանկություն, նրան լեզվագիտության և գրականագիտության բարդ աշխարհ տանելով՝ կարող ենք խոչընդոտել հետագա առաջընթացը: Իսկ տարիքային հաջորդ շրջանում, «երբ դեռահասը դուրս է գալիս իր պատյանից», սկսում է իրեն և շրջապատը առանձին-առանձին դիտարկել, տարանջատվում են նրա ընկալումները, հայացքն էլ սկսում է սևեռվել կոնկրետություններին, ամբողջից նա սկսում է առանձնացնել իրեն և իրերը, ուրեմն և պատրաստ է երևույթներն ուսումնասիրել առանձին-առանձին» [4, 50]: Ուստի այս տարիքի երեխաների հետ բարձրարժեք, բայց փոքրածավալ գրական երկերի վերլուծությամբ լեզվական իրողությունները սեփական խոսքում գործնականորեն կիրառելու հնարավորություն ենք ընձեռնում, որով էլ իրագործվում են կրթական պարտադիր փաստաթղթերով սահմանված ակադեմիական նպատակադրումները՝ աշակերտների համագործակցային, հաղորդակցական, ստեղծագործական կարողությունների և ինքնուրույն բանավոր ու գրավոր խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը:

Վիգոտսկու պատկերավոր խոսքով ասված՝ երեխայի հետաքրքրությունը համապատասխան չափով և պահանջված ժամանակահատվածում ձեռք բերած գիտելիքը կարելի է համարել «բարենպաստ ջերմաստիճան»: Ըստ հայտնի մանկավարժի՝ ինչպես մարդու բնականոն ջերմաստիճանը 36,6 աստիճանն է, և երբ այն բարձրանում է, կարող է խանգարվել նրա նորմալ կենսագործունեությունը, այնպես էլ երեխայի «կրթական ջերմաստիճանը» պետք է պահել խելամիտ չափի սահմաններում, այլապես կարող

են խաթարվել ուսման նկատմաբ նրա սերն ու ձգտումը, ֆիզիկական և հոգևոր զարգացումը [7, 368]:

Ասվածից պարզ է դառնում, որ միջին դասարանների մայրենիի բովանդակությունն ու կառուցվածքը, սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, ենթադրում են զուտ գործնական ուղղվածություն երեխայի հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակներից բխող ուսումնական բնագրի վրա տարվող աշխատանքներով:

Այժմ միջին դպրոցի մայրենիի 5-6-րդ դասարանների միասնացված (ինտեգրված) ուսուցմամբ դասագրքերով տարվող աշխատանքը սովորողների առաջ բացում է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման և դրանց կիրառման նոր հնարավորություններ: Մայրենիի դասագրքերում դասը ներկայացված է համալիր եղանակով՝ մեկ ամբողջության մեջ ներառելով ընթերցանության նյութը, գրականագիտական տեղեկությունները, տեքստի վրա կատարվող աշխատանքը, լեզվական գիտելիքը և համապատասխան գործնական վարժությունները: Միասնացված դասն առաջին հերթին ապահովում է քերականության և կենդանի լեզվի կապը, որը կարևոր նշանակություն ունի 5-6-րդ դասարաններում նախատեսված ծրագրային նյութի սահմաններում՝ հնչյունաբանությունից և բառագիտությունից ուսուցանվող լեզվական հասկացությունների գործնական արժեքը ընդգծելու համար: Մյուս կողմից էլ՝ մայրենիի միասնացված ուսուցմամբ լայն հնարավորություն է բացվում սովորողի սոցիալական հմտությունների զարգացման համար՝ նրան վարժեցնելով հետազոտական, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ կատարելու:

Նշված սկզբունքով ուսուցման նպատակներին հասնելու համար ժամանակի հրամայական է դառնում նոր մոտեցումների մշակման անհրաժեշտությունը և՛ ներառարկայական, և՛ միջառարկայական ինտեգրման շրջանակում:

Հայոց լեզվի և գրականության ինտեգրմանը զուգահեռ ուսուց-

ման արդյունավետությանը խիստ նպաստում է հարակից առարկաների, արվեստի ճյուղերի համադրմամբ նյութի մատուցումը: Եթե ընթացիկ ծրագրային դասանյութն ունի աշխարհագրության, հայրենագիտության, պատմության, երաժշտության, արվեստի մյուս բնագավառների հետ աղերսներ, ապա նյութի դասավանդման ընթացքում ուսուցիչն իր ուսուցման զինանոցում պիտի ամբարի ու ժամանակին օգտագործի միջառարկայական ինտեգրման հնարավորությունները՝ ուսուցման ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների ճիշտ և տեղին գործադրմամբ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա:

Ներկայացնենք մեր փորձից վերցված հետաքրքիր մի հանձնարարություն, երբ ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները կարդում են բնանկար կամ նկարագրություն պարունակող երկը, վերլուծում, դատողություններ անում և լրացնում «Քառաբաժան» աղյուսակը: Օրինակ՝ 6-րդ դասարանի աշակերտները Վ.Դավթյանի «Լիճը» [2, 122] բանաստեղծության վերլուծությամբ «Քառաբաժան» աղյուսակը լրացնում են այսպես.

Ի՞նչ տեսա: Կապույտ ու սպիտակ գույներ, ճայեր, աստղեր, լեռներ, արև…	**Ի՞նչ լսեցի:** Պատարագի մեղեդի, ճայերի ձայներ, ալիքների ծփանք…
Ի՞նչ զգացի: Երանություն, մաքրության բերկրանք, հաճույք, անափ երջանկություն…	**Նոր վերնագիր:** «Կապույտ երազ», «Պատարագ»

Նյութի ավանդման հաջորդ փուլում աշակերտները կերպարվեստի ուսուցչից հանձնարարություն են ստանում նկարելու և գույների օգնությամբ ամբողջացնելու բնագրի մեջ ամփոփված մտքերը, ապա լրացրած աղյուսակի ու բանավոր վերլուծության շնորհիվ դասանյութը վերարտադրել նկարելով:



Նույն սկզբունքով կարելի է ուսումնասիրել Ավ.Իսահակյանի «Գետակի վրա», Վ.Տերյանի «Աշնան», Հովհ. Շիրազի «Գարնանամուտ», Վ.Դավթյանի «Զվարթնոցի արծիվը», Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» և այլ բանաստեղծությունները:

Այսպես, ինտեգրման մեթոդով կերպարվեստի հետ միջառարկայական կապ հաստատելով՝ նպաստում ենք սովորողների կողմից գրական երկի նյութի տեսանելի զգայական ընկալմանը. աշակերտը կարդում է հատվածաբար, այն վերածում նկարի, ընտրում բնագրից բխող գույներ, ավելացնում ստեղծագործական ինքնուրույն երանգներ, բանավոր խոսքով հիմնավորում նկարն ու բնագիրը:

5-6-րդ դասարանների մայրենիի դասագրքերում շատ են բանաստեղծությունները, որոնք երգի են վերածված: Օրինակ՝ Ավ.Իսահակյանի «Գետակի վրա», Ս.Շահազիզի «Երազ», Պ.Սևակի «Էրեբունի-Երևան»: Կան ստեղծագործություններ, օրինակ՝ Մ.Գալշոյանի «Կռունկ», Շ.Ազնավուրի «Ազնավուրը Ազնավուրի մասին»,

որոնք հնարավոր չէ ուսումնասիրել առանց երաժշտությունն ունկնդրելու, ստացած տպավորությունները մեկնաբանելու: Երաժշտության ազդեցությամբ նյութի յուրացումը անասելի արդյունավետ է դառնում, քանի որ ստեղծվում է զգացմունքային տրամադրվածության անկաշկանդ հոգեբանական մթնոլորտ, ուր գործի են դրվում երեխաների զգայարանները: Առանձին դասանյութեր՝ Ա.Բիտովի «Մատենադարան», Ա.Այվազյանի «Պոեմ վասն շենքի և շինության», Ա.Պարսամյանի «Լռություն է» ստեղծագործությունները, ներառարկայական կապ ունեն ճարտարապետության, հայկական խաչքարերի պատմության հետ, որոշ նյութեր՝ Վ.Խեչումյանի «Գլուխգործոց», Վ.Պետրոսյանի «Էսքիզներ»՝ մանրանկարչության, «Նոյի տապանը Արարատի վրա», Մ.Սարգսյանի «Գրիգոր Նարեկացի»՝ հայ եկեղեցու պատմության, Հ.Բեկնազարյանի «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»՝ կինոարվեստի, Մ.Խորենացու «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Ծնունդ Վահագնի», Փ.Բուզանդի «Արշակ և Շապուհ»՝ հայ ժողովրդի պատմության, ավանդազրույցների հետ: Այդ առարկաների ուսուցիչների հետ համատեղ տրվող և վերահսկվող առաջադրանքները լուծում են թե՛ լեզվական, թե՛ գրականագիտական, թե՛ ընդհանուր ու համակողմանի զարգացման բազմաբնույթ կարևոր հարցեր:

5-6-րդ դասարանների դասագրքերում շատ են այնպիսի դասանյութերը, որոնք հնարավոր չէ անցնել առանց աշխարհագրության հետ միջառարկայական կապեր ստեղծելու: Օրինակ՝ Վ.Դավթյանի «Լիճը», Վ.Անանյանի «Սևանա լիճը», Մ.Ղուկասյանի «Ո՞ւր է կղզյակը Սևանա», «Սևանա լիճը ըստ հանրագիտարանի», Ս.Կուրտիկյանի «Գեղամա լեռներ, Գեղամա ծով», «Նոյ նահապետի տապանը Արարատի վրա» (ըստ Աստվածաշնչի): Հետաքրքիր է առաջադրանքի այն ձևը, երբ ուսուցիչը պահանջում է համացանցից ՏՀՏ-ների կիրառմամբ կամ «Աշխարհագրություն» առարկայի դասընթացից ներկայացնել համապատասխան տեղեկատվություն՝ այն զուգորդելով արձակ կամ չափածո երկի կամ կտավի հետ, ինչի արդյունքում հնարավոր է դառնում ինտեգրել այս երկու առարկաները, որի շնորհիվ աշակերտին հաղորդվող աշխարհաճանաչողական տեղեկությունները սովորողի մեջ համապարփակ

պատկերացումներ են ձևավորում կոնկրետ երևույթի կամ բնագավառի վերաբերյալ՝ նրան տալով կյանքում պիտանի և պահանջված գիտելիք, ինչին աշակերտը հասնում է հետազոտական աշխատանք կատարելու ճանապարհով: Մայրենիի դասընթացում ներառարկայական ինտեգրման արդյունավետությանը նպաստող պայման է ժամանակակից կամ ինտերակտիվ մեթոդների ու մեթոդական հնարների կիրառումը: Այսպես, 6-րդ դասարանում Վ.Անանյանի «Սևանա լիճը» պատմվածքն անցնելիս ուսուցիչը հանդիպադրման հնարի կիրառմամբ պահանջում է Սևանա լիճը ներկայացնել T-աձև աղյուսակով՝ առանձնացնելով լճի գիտական բնութագիրը՝ ըստ հանրագիտարանի, և գեղարվեստական բնութագիրը՝ ըստ Վախթանգ Անանյանի:

Սևանա լիճ

Գիտական խոսք	Գեղարվեստական խոսք
Տեղեկատվության ճիշտ հաղորդում: Շատ են թվերը, փաստերը, գիտաբառերը: Չկա հույզ, զգացմունք:	Մեծ է հուզական ներգործությունը: Բառերով նկարելու, պատկերներ ստեղծելու հնարք է օգտագործվել: Զգալի է պատկերավորման և արտահայտչականության միջոցների առատությունը:

Այսպիսի աշխատանքը արդյունավետ է և փորձով հիմնավորված: Եվ, որպես ուսուցման վերջնարդյունք, 6-րդ դասարանի աշակերտներն ուսուցչի օգնությամբ կբանաձևեն գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները:

Ինչ խոսք, մայրենիի դասագրքերում ինտեգրված դասանյութերը ուսուցչի ստեղծագործական մտքի դրսևորման համար լայն ասպարեզ են բացում, քանի որ յուրաքանչյուր նյութի ուսուցման ընթացքում ուսուցիչն ինքն է որոշում, թե տվյալ բնագրի շրջանակներում ինչ տիպի ինտեգրում պիտի կազմակերպի՝ դրանով իսկ պարարտ հող նախապատրաստելով ակտիվ ուսումնառության համար: Սակայն դասանյութերում հաճախ հանդիպող թերություններից է բնագրերի մեջ լեզվական նյութի հետ առնչվող

կենդանի խոսքում հանդիպող խոսքային միավորների սակավությունը, և որպես դրա ուղղակի հետևանք՝ այն վարժություններն ու առաջադրանքները, որոնք չեն բխում երեխաների՝ այս տարիքային խմբին հետաքրքրող նախասիրություններից, ժամանակակից երեխային զարգացնող թեմաներից, ուստի դրանց հանձնարարումը աշակերտների համար դառնում է ձանձրալի և ոչ այնքան օգտակար զբաղմունք:

Կարծում ենք՝ այս բացն անհրաժեշտ է լրացնել այժմ կրթության մեջ լայն կիրառում գտած ու ժամանակի հրամայական դարձած կրթական գործիքներից մեկի՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների՝ լեզվական նյութի հետ ինտեգրելու միջոցով:

Մայրենիի միասնացված դասերին լեզվական նյութի արդյունավետ յուրացման լավագույն գործիքներից մեկը ՏՀՏ-ների գործադրմամբ ինտեգրման ապահովումն է: Փորձը ցույց է տվել, որ լեզվական նյութի ուսուցման ժամանակ համակարգիչների կիրառումը ոչ միայն տեղին է ու նպատակահարմար, այլև ուսուցման այս ձևի հիմքում դրվում են երեխայի հետաքրքրությունն ու դրա բավարարման ժամանակակից պահանջմունքը: Այս տեսակետից բացառիկ են ինտեգրման մեթոդով ստեղծված համակարգչային խաղերն ու վարժությունները, որոնք թույլ են տալիս երեխայի մեջ զարգացնել վերացական, տրամաբանական, օպերատիվ մտածողություն, վերլուծելու և կանխատեսելու հստակ հնարավորություններ [8, 2]: Ինտեգրման մեր փորձի նշված օրինակը կարելի է գտնել հետևյալ հղումով՝ https://scratch.mit.edu/projects/297209374/:

Ի տարբերություն կինոնկարների և հեռուսատատեսության՝ համակարգչային խաղերով խաղացողը դառնում է գործողությունների մասնակից և ինքն է որոշում դեպքերի հետագա ընթացքը: Այժմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման մեջ դառնում է մշակույթի իրական մասնիկ, և ժամանակակից դպրոցներում դրանց ներդրումը պարտադիր է ու անխուսափելի [5, 50]:

Այսպիսով, մայրենիի միասնացված դասերի ինտեգրման առանցքում առաջնահերթությունը պիտի տրվի սովորողի սոցիալականացմանն ուղղված առաջադրանքներին, քանի որ այդ կերպ

կազմակերպված ուսումնառությամբ յուրաքանչյուր սովորողի յուրացրած գիտելիքները դառնում են անձի ձևավորման և կայացման կարևոր նախապայման: Ուստի ինտեգրման մեթոդաբանությամբ ուսուցանվող մայրենիի միասնացված բնագրերը դադարում են զուտ պասիվ ուսումնական նյութ լինելուց, քանի որ դրանք ուսուցչի երևակայական մտածողությունը գործի դնելու, լեզվական կենդանի օրինակներ մտածելու և ուսումնական որոշ առարկաների հետ ինտեգրելու միջոցով լայն հնարավորություն են ընձեռնում յուրաքանչյուր աշակերտի արդիական պահանջմունքներից բխող ուսուցում կազմակերպելու համար:

Գրականություն

1. Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Մայրենի 5, Երևան, 2015:
2. Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Մայրենի 6, Երևան, 2016:
3. «Հայոց լեզու և գրականություն» ծրագրեր. հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր, Երևան, 2007:
4. Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Երևան, 2009:
5. Սարգսյան Տ., Համակարգչային խաղերը ինտեգրացված ուսուցման գործընթացում, ԿԱԻ, Մանկավարժություն, Երևան, 2011:
6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
7. Выготский Л.С., Психология развития ребенка, Москва, 2003.
8. Седов И.А., Компьютерная игра как средство саморазвития будущего учителя в условиях информатизации общества, 2002, с. 2.

Интеграция грамматического материала и некоторых предметов на единых уроках родного языка как эффективное средство обучения

Едоян Ануш
Геворкян Вардуи

Резюме

Ключевые слова: *активное обучение, интеграция знаний, единый урок, академические цели, инклюзивная и междисциплинарная интеграция, интеграция с использованием ИКТ*

На единых уроках родного языка на основе интегрирования нужно отдать предпочтение заданиям, направленным на социализацию учащегося, так как таким образом усвоенные знания каждого ученика становятся важной предпосылкой для формирования и становления личности.

Единые оригинальные тексты обучаемой родной речи путем методики интегрирования перестают быть пассивными учебными материалами, так как дают возможность учителю с помощью образного мышления, придумывания живых языковых примеров, а также интегрирования некоторых учебных предметов организовать для каждого ученика индивидуальный учебный процесс, исходя из актуальных требований.

The Integration of Grammatical Material and Some Subjects at the Joined Lessons of the Native Language as an Effective Means of Teaching

Yedoyan Anush
Gevorgyan Varduhi

Summary

Key words: *active learning, knowledge integration, combined lesson, academic purposes, inclusive and interchangeable integration, integration by using ICT*

At the joined lessons of the native language the importance should be given to those tasks which aim at learners' socialization, because during the process of such learning the knowledge gained by the learners becomes the basis for shaping an individual.

Joined original texts taught with the methodology of integration cease being passive teaching materials, because the teacher can use them creatively to build vivid examples, to integrate with some school subjects and thus, create an opportunity of organizing the teaching process in accordance with the pupils' needs.

Ներկայացվել է 14.05.2019 թ.
Գրախոսվել է 10.06.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

Մանկավարժական կոմպետենցիաների ձևավորումը գործարար խաղի միջոցով

Հովհաննիսյան Անահիտ

Հանգուցային բառեր. *կրեատիվություն, ինտերակտիվ մեթոդներ, ստեղծագործական ներուժ, գնահատման չափորոշիչներ, մասնագիտական կոմպետենտություն, պատճառ-հետևանքային կապ, ոչ ստանդարտ մտածողություն*

Գործարար խաղը ուսուցման կոլեկտիվ մեթոդ է, որտեղ որոշումները մշակվում և ընդունվում են սովորողների հավասար մասնակցության պայմաններում, ինչպես նաև այլ խմբերի որոշումների տարբերակների քննադատության արդյունքում: Գործարար խաղը բնույթով համադրական է. այն ներառում է ուսուցման ակտիվ մեթոդների մի ամբողջ համալիր՝ բանավեճ, մտագրոհ, տվյալների հետազոտում, իրավիճակի վերլուծություն, գործողություն՝ համաձայն ցուցումների: Ուսուցման ավանդական մեթոդների համեմատությամբ՝ որպես ուսուցման ակտիվ մեթոդ գործարար խաղն ունի հետևյալ **առավելությունները.**

- խաղի նպատակները համապատասխանեցվում են սովորողների գործնական պահանջներին.
- խաղը հնարավորություն է տալիս միավորելու խնդրի ծավալային կողմը և խորությունը.
- գործարար խաղին բնորոշ է հետադարձ կապի առկայությունը, որով այն դառնում է ավելի իմաստալից և կառավարելի.
- խաղում ձևավորվում է վերաբերմունք մասնագիտական գործունեության հանդեպ, ավելի դյուրին են հաղթահարվում կարծրատիպերը, ճշտվում է ինքնագնահատականը.
- ավանդական մեթոդները ենթադրում են մտածական բաղադրիչի գերակայություն, իսկ գործարար խաղում անձը դրսևորվում է տարբեր կողմերով՝ մտածական, հոգեկան, ֆիզիկական, կամային և այլն.

- մեթոդը խթանում է անձի անդրադարձ՝ ռեֆլեքսիվ գործառույթները, ստեղծում է մեկնաբանելու, ստացված արդյունքներն իմաստավորելու հնարավորություն.
- գործարար խաղերը մեծացնում են իրականության շրջանակը, տեսանելի դարձնում ընդունված որոշումների հետևանքները.
- խաղն ընձեռում է նաև ճշգրիտ տեղեկատվություն ստանալու հնարավորություն, բարձրացնում է ստացված արդյունքների նկատմամբ սովորողների վստահությունը և պատասխանատվության զգացումը։

Նշված առավելությունները տվալ մեթոդի կիրառման հարցում որոշիչ են ուսուցման գործընթացում: Այսօր գործարար խաղերը կիրառվում են սովորողների կողմից մասնագիտական գործնական հմտություններ ձևավորելու նպատակով: «Գործարար խաղը միշտ կրում է ընդգծված մասնագիտական բնույթ, այսինքն՝ նախատեսված է ստեղծագործական մտածողության զարգացման, գործնական հմտություններ և կարողություններ ձևավորելու, հաղորդակցման անհատական ոճ և կոլեկտիվ խնդիրներ լուծելիս համապատասխան վարք մշակելու համար» [3, 6]:

Ա. Ա. Վերբիցկին գործարար խաղը դիտարկում է որպես «ապագա մասնագետի պրոֆեսիոնալ գործունեության առարկայական և սոցիալական բովանդակության վերարտադրում, որը մոդելավորում է համակարգերի այն հարաբերությունները, որոնք, որպես ամբողջություն, բնորոշ են այդ գործունեությանը» [1, 129]:

Գործարար խաղի ընթացքում լուծվում են մի շարք ուսումնական խնդիրներ.

- բարձրանում է սովորողների ակտիվությունը.
- ձևավորվում է մասնագիտական գրականությունը վերլուծելու կարողությունը.
- ակտիվանում է սովորողների ստեղծագործական մտածողությունը.
- մշակվում է տարբեր տեսակետները գործնականում գնահա-

տելու, դրանք համեմատելու կարողությունը.

- ձևավորվում են խնդրի արդյունավետ լուծման հմտություններ:

Գործնական խաղերին հատուկ են կենսական որոշված իրավիճակների դիտարկումը, խաղի էությունը կազմող խնդիրների և ընթացակարգերի կանոնավոր կրկնությունը, կոնֆլիկտայնության և թաքնված ներուժի առկայությունը:

Որոշակիացնելով գործարար խաղերի առավելությունը՝ ընդգծենք, որ դրանք նպաստում են մասնագիտական փորձի կուտակմանը, տալիս են հնարավորություն՝ կատարելու փորձաքննություն, կիրառելու տրվող խնդիրների նկատմամբ տարբեր ռազմավարություններ: «Գործարար խաղը վերացական չէ. այն մասնակցի համար իրական գործընթաց է, որտեղ ապահովվում է խաղային գործողությունների իրական դաշտը, ձևավորվում է մասնագիտական իրավիճակի ամբողջական կերպարը: Խաղը նաև հնարավորություն է տալիս ձեռք բերելու սոցիալական փորձ, ձևավորելու ապագա մասնագետների ընդհանուր մասնագիտական կոմպետենցիաները» [1, 144]: Դրանց թվում են.

- **Ինտելեկտուալ-մանկավարժական կոմպետենտությունը,** որը ձեռք բերած գիտելիքիները, փորձը մասնագիտական գործունեության մեջ արդյունավետ կիրառելու կարողությունն է:
- **Տեղեկատվական կոմպետենտությունը,** որը աշակերտների, ծնողների, աշխատակիցների մասին մանկավարժի տեղեկույթի ծավալն է:
- **Կարգավորող կոմպետենտությունը,** որը մանկավարժի ունակությունն է՝ կառավարելու սեփական վարքը, վերահսկելու անձնական հույզերը, կատարելու ռեֆլեքսիա:
- **Հաղորդակցական կոմպետենտությունը.** որը նշանակալի մասնագիտական որակ է, ներառում է խոսքի հմտություն, լսելու կարողություն, էքստրավերսիա, էմպատիա:

Մասնագիտական կոմպետենտության կարևորագույն բաղադ-

րատարր է նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու և դրանք գործնականում ինքնուրույն կիրառելու կարողությունը:

Ստորև առաջարկվում է գործարար խաղի մի օրինակ, որը կարելի է կիրառել համալսարանում մանկավարժական դասընթացներ ուսումնասիրող ուսանողների գործնական պարապմունքներին:

Գործարար խաղի սցենար

Թեմա. «Մանկավարժական կոմպետենցիաների ձևավորումը գործարար խաղի միջոցով»:

Նպատակը. ձևավորել մանկավարժի մասնագիտական և անձնային կոմպետենցիաները, սեփական տեսակետը փաստարկված պաշտպանելու կարողությունը:

Խնդիրները.

- զարգացնել ուսանողի գործունեությունը նախագծելու, կրեատիվ մտածելու, և գործելու կարողությունը,
- զարգացնել կոլեկտիվում աշխատելու կարողությունը՝ ձևավորելով սոցիալական հմտություններ,
- խթանել ռեֆլեքսիվ գործառույթները, ստեղծել ստացված արդյունքներն իմաստավորելու, մեկնաբանելու հնարավորություն՝ նպաստելով ապագա մանկավարժների մասնագիտական կայացմանը:

Գործարար խաղի ընթացքը.

Դասախոս. Բարև ձեզ, հարգելի՛ ուսանողներ: «Կրեատիվություն» բառը անգլերենից թարգմանաբար նշանակում է *ստեղծել, ստեղծագործել:*

Կրեատիվությունը մանկավարժական գործունեության առաջատար բաղադրիչն է և վճռորոշ գործոն է հանդիսանում ուսուցչի մանկավարժական վարպետության կատարելագործման ճանապարհին: Կրեատիվ ուսուցչի արտադրանք կարող են լինել նոր կրթական տեխնոլոգիաները, ուսուցման և դաստիարակության նորագույն ձևերը և մեթոդները:

Եվ այսպես, գործարար խաղի շրջանակներում առաջարկում եմ փնտրել և գտնել ստանդարտ իրավիճակներից դուրս գալու ոչ ստանդարտ տարբերակներ:

Կազմակերպական մաս.

Դասախոս. Առաջարկում ենք խաղալ 2 թիմով՝

1. *«Կրեատիվ մտածողներ»,*
2. *«Գիտակներ»:*

Ձեզ տրվում են գործնական պարապմունքի գնահատման չափորոշիչները, խնդրում եմ՝ ծանոթացեք: Գործարար խաղը գնահատելու է՝ առարկայի դասախոսը, որին կօգնի ձեր կողմից որոշված լավագույն կուրսընկերը:

Դասախոս. Յուրաքանչյուր թիմին առաջարկում եմ պատասխանել ***բլից հարցերի:*** Ավելի արագ և ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր:

1. Ի՞նչ է նշանակում «ականջիդ օղ արա»: (Հիշիր)
2. Սննդից հրաժարում՝ ի նշան բողոքի: (Հացադուլ)
3. Համակարգչային ծրագրերի խափանման մասնագետ: (Հաքեր)
4. «Մենեջմենթ» բառի հոմանիշը: (Կառավարում)
5. Ո՞ր ժանրում է հայտնի դարձել Վ. Այգեկցին: (Առակներ)
6. Քառորդ դարը քանի՞ տարի է: (25)
7. Մեր երկրի հիմնական օրենքը: (Սահմանադրություն)
8. Ի՞նչ հապավում է ԱՊՀ-ն: (Անկախ պետությունների համագործակցություն)
9. Քանի՞ օր կա նահանջ տարում: (366)

I. Հանձնարարություն №1

Որպեսզի ձեզ ճանաչեն և ձեր մասնագիտական որակները գնահատված լինեն, դուք պետք է կարողանաք ինչ-որ կերպ ձեզ ներկայացնել:

(5 միավոր)

Վարժություն «Հայտարարություն»

5 րոպեի ընթացքում յուրաքանչյուր թիմ պետք է ձևակերպի կարճ հայտարարություն իրենց ծառայությունների մասին, որտեղ կարտացոլվի մասնագիտական եզակիությունը և կներառի այն, ինչ այլ մասնագետ չի կարող առաջարկել: Այնուհետև այս հայտարարությունը կարդացվում է բոլորին: Գովազդի բովանդակության վերաբերյալ մենք կարող ենք հղել ցանկացած հարց՝ պարզելու համար՝ արժե արդյոք օգտվել այդ ծառայությունից:

II. Հանձնարարություն №2

Հարգելի մասնակիցնե՛ր, 21-րդ դարի մանկավարժը պետք է առաջադեմ հայացքներ ունենա բոլոր ոլորտներում: Առաջարկում եմ ստուգել ձեր ընդունակությունները *«Քո խաղը»* մրցույթի տեսքով: *Մուլտի-մեդիա* էկրանին կհայտնվի աղյուսակ, որոնց հարցերը վերաբերում են հետևյալ կարգերին [2].

1. *«Կրթության հապավումներ»,*
2. *«Մանկավարժություն, հոգեբանություն»,*
3. *«Ժողովրդական իմաստություն»,*
4. *«Գլխիվայր»*:

Թիմերին անհարաժեշտ է հերթականությամբ պատասխանել երկուական հարցի՝ ընտրելով համապատասխան կարգից որոշված թիվը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում թիմը գնահատվում է:

(2 միավոր)

III. Կարգ – «Կրթության հապավումներ»

1. *ՆՈՒՀ* (Նախադպրոցական ուսումնական հաստատություն),
2. *ԲՀՄԳԿ* (Բժշկա-հոգեբանական-մանկավարժական գնահատման կենտրոն),
3. *ՎՄՋ* (Վաղ մանկության զարգացում),
4. ԱՈՒՊ (Անհատական ուսումնական պլան),
5. *ԿԱՊԿԳ* (Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում):

IV. Կարգ – «Մանկավարժություն, հոգեբանություն»

Հանձնարարություն թիմերին

1. 20-րդ դարի կեսերին նկատվել է երեխաների և դեռահասների ֆիզիկական զարգացման տեղաշարժ՝ քաշի և մարմնի չափի աճ, արագացված սեռահասունություն, որը կոչվում է... (աքսելերացիա):
2. Օբյեկտիվ աշխարհը արտացոլող մարդկանց ընդհանրացված փորձը կոչվում է… (գիտելիք):
3. Գործողության գիտակցված բազմակի կրկնությունների հետևանքը կոչվում է… (հմտություն):
4. Փոփոխված իրադրության մեջ գործընթացը կատարելու ունակությունը կոչվում է… (կարողություն):
5. Ուսումնասիրվող առարկաների, երևույթների արտացոլումը մարդու գիտակցության մեջ կոչվում է… (ընկալում):
6. Առարկայի, երևույթի պատճառա-հետևանքային կապերը ուսումնասիրելու ընթացքում սովորողը… (իմաստավորում է):
7. Իմաստավորման բարձրագույն աստիճանն է… (ընդհանրացումը):
8. Ընտանիքի անդամների փոխկապակցվածությունը և կայունությունը, ինքնակարգավորման միտումը կոչվում է… (հոմեոստազ):

V. Կարգ – «Ժողովրդական իմաստություններ»

Հանձնարարություն թիմերին.

- Ով ուզում է շատ իմանանալ, նա պետք է քիչ… (քնի)
- Աշխարհը լուսավորվում է արևով, իսկ մարդը… (գիտելիքով)
- Ամոթ չէ չիմանալը, ամոթ է… (չսովորելը)
- Տգետ մարդը՝ չսրած… (կացին է)
- Ով շատ է ուզում բարձրանալ վեր, նա կստեղծի… (աստիճան):

VI. Կարգ – «Գլխիվայր»

Ուսանողները ոչ միշտ են կարողանում հստակ արտահայտել իրենց մտքերը, այդ իսկ պատճառով դուք պետք է սովորեք ցանկացած դեպքում հասկանալ նրանց: Դուք պետք է «գլխիվայր»-ի միջոցով գտնեք հայտնի ֆիլմի վերնագիրը կամ էլ ասացվածքը, նաև բացատրեք, թե որ դեպքում այն կարող է ասվել Ուսանողի կողմից: (1-3 միավոր) (Տե՛ս աղյուսակ 1)

1. Հանձնարարություն 1-ին թիմին.

– Չէէէէ, ես հո հավ չեմ:

– Կոստյու՞մը ինձ պետք է գեղեցկացնի:

– Ձիուն նայում են, գարին տալիս:

– Էշը ինքն է, խոտը ուրիշին առջև կը դնէ:

2. Հանձնարարություն 2-րդ թիմին.

– Երեքը կերել ենք, իլա երեքն էլ պետք է ուտենք:

– Նաջարյանը փոշմանել է:

– Խելոքի հետ կորցրածը կորած չէ, հիմարի հետ գտածն է կորած:

– Երբ որ նշան են բռնել թիկունքիդ, քո զգաստությունն էլ իմաստ չունի:

VI. Կարգ – «Մտագրոհ»

Հանձնարարություն թիմերին

Թիմերին առաջարկվում է ներկայացնել մանկավարժի մասնագիտական կոմպետենտությունը որոշող նշանակալի և կարևոր որակները: *(1-3 միավոր)* (Տե՛ս աղյուսակ 1)

Գնահատման չափորոշիչներ (թղթային տարբերակը տրվում է թիմերին)

Աղյուսակ 1

Գնահատման չափանիշներ	**Մակարդակ**		
	3 (20 – 17 միավոր)	**2 (16 – 13 միավոր)**	**1 (12 - 8 միավոր)**
Ուսանողների ակտիվությունը	Ակտիվ մասնակցություն են ունեցել ելույթներում, նաև ուրիշ մասնակիցներին հարցեր են հղել:	Ելույթներում ցուցաբերել են միջին աստիճանի հետաքրքրվածություն:	Չի մասնակցել բանավեճին, մասնակիցներին հարցեր չի հղել:
Ելույթների փաստակման մակարդակը, առաջարկությունների նորարարությունը, գործնական նշանակությունը:	Խնդրի վերաբերյալ ցուցաբերել են գիտելիքների բարձր մակարդակ, օգտագործել են վիճակագրական տվյալներ, անցկացրել են անձնական սոցիոլոգիական ուսումնասիրություն, մշակել առաջարկություններ:	Օգտագործել են վիճակագրական տվյալներ, ձևակերպել են խնդիրը, ոչ հստակ են պատասխանել հարցերին, ծանոթ են տեսական նյութի հետ, մշակել են սեփական առաջարկությունները:	Չունի փաստարկման ունակություն, եզրակացությունները ձևակերպել է տեսական վերլուծության հիման վրա, դժվարանում է հարցերի պատասխաններում:
Ընթացակարգի պահպանում	Լիակատար պահպանում	Որոշված ժամանակի մասնակի ավելցուկ են ունեցել:	Զգալիորեն խախտել է ընթացակարգը
Խոսքի կառուցումը	Հուզական է, լակոնիկ, օգտագործում է մասնագիտական հասկացություններ	Խոսքը զուրկ է հուզականությունից, երբեմն օգտագործում է «աղբ-բառեր»	Բացակայում է ելույթի հուզական երանգավորումը հաճախ օգտագործում է «աղբ-բառեր», դադարներ:
Արտաքին տեսքը	Գործնական ոճ	Առկա են անփութության տարրերը	Հագուստը չի համապատասխանում գործնական ոճին՝ սպորտային հագուստ, ջինս:
Ուսանողի Ա.Ա.Հ.	**Արդյունքների գնահատման համապատասխանությունը**		
1.	**20 – 17 միավոր**	**16 – 13 միավոր**	**12-8 միավոր**

- *1-ին թիմն* առանձնացնում է մասնագիտական կոմպետենտությանը վերաբերող որակները:
- *2-րդ թիմն* առանձնացնում է անձնական կոմպետենտությանը վերաբերող որակները:

Կրթության ժամանակակից իրավիճակը պահանջում է հատուկ պատրաստված մասնագետներ: Ուսանողներին փոփոխությունների կարող է նախապատրաստել միայն այն մանկավարժը, որն ինքն է պատրաստ փոխվելու, խորացնում է իր մասնագիտական գիտելիքները և կարողությունները, ռեֆլեքսիան, նախագծային գործունեության ունակությունը, այսինքն՝ նա մասնագիտական կոմպետենտություն ունեցող մանկավարժ է:

Այսպիսով, ուսուցման գործընթացում գործարար խաղերի կիրառումը նպաստում է սովորողների մասնագիտական կոմպետենցիաների զարգացմանը, ձևավորում է սեփական տեսակետը փաստարկված պաշտպանելու, ստացված տեղեկատվությունը վերլուծելու և մեկնաբանելու, կոլեկտիվում աշխատելու կարողություն: Գործարար խաղը նպաստում է որոշակի սոցիալական հմտությունների և ճիշտ ինքնագնահատականի ձևավորմանը:

Գրականություն

1. Вербицкий А. А. Активное обучение в высшей школе: контекстный подход: Метод. пособие. М.: Высш. шк., 1991. - 207 с.
2. Обзор деловых игр [Электронный ресурс]. URL: http://md-HR. ru.
3. Пидкасистый П. И., Хайдаров Ж. С. Технология игры в обучении и развитии [Текст] / П. И. Пидкасистый, Ж. С. Хайдаров. – М.: МПУ, 1996. – 272 с.

Формирование педагогических компетенций посредством деловой игры

Оганесян Анаит

Резюме

Ключевые слова: *креативность, интерактивные методы, творческий потенциал, профессиональная компетентность, причинно-следственные связи, нестандартное мышление, критерии оценивания*

Сегодня деловые игры используются с целью приобретения деловых профессиональных навыков обучающихся. Деловая игра - это коллективный метод обучения, при котором решения разрабатываются и принимаются в условиях равного участия обучающихся, а также критическим обсуждением вариантов между группами. Деловая игра включает в себя целый набор активных методов обучения: дебаты, «мозговой штурм», дискуссия в команде и между командами, изучение и анализ данных, анализ ситуации, действие в соответствии с инструкциями. По сравнению с традиционными методами обучения, деловая игра, как активный метод обучения, имеет ряд преимуществ, которые подробно изложены в статье. В процессе деловой игры решаются поставленные образовательные задачи. Посредством деловой игры участники приобретают социальный опыт, формируются общие педагогические компетенции будущих специалистов: интеллектуально-педагогические, информационные, регулирующие, коммуникативные. В статье представлен сценарий формирования педагогических компетенций посредством деловой игры, который может быть организован на практических занятиях студентов, изучающих педагогические дисциплины. Составлены критерии оценивания результатов деловой игры на каждого студента.

Formation of Pedagogical Competences through Business Game

Hovhannisyan Anahit

Summary

Key words: *creativity, interactive methods, creative potential, professional competence, cause-and-effect relationships, innovative thinking, criteria for assessment*

Today, business games are used to acquire students' business skills. A business game is a collective learning method in which decisions are developed and made under conditions of equal participation of students, as well as critical discussion of options between groups. A business game includes a whole set of active learning methods: debate, brainstorming, in team and between team discussions, data research and analysis, situation analysis, action in accordance with instructions. Compared to traditional teaching methods, the business game, as an active teaching method, has a number of advantages, which are detailed in the article. In the course of the business game, the educational tasks set are solved. Through the business game, participants acquire social experience, form the general pedagogical competencies of future specialists such as intellectual, educational, informational, regulatory and communicative. The article presents the scenario of the formation of pedagogical competencies through the business game, which can be organized in practical classes of the students studying pedagogical disciplines at the university. The criteria for evaluating the results of the business game for each student are compiled.

Ներկայացվել է 17.05.2019 թ.
Գրախոսվել է 23.05.2019 թ.
Ընդունվել է տպագրության 14.06.2019 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աղաջանյան Սամվել – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Գևորգյան Վարդուհի – Վանաձորի Րաֆֆու անվան թիվ 19 հիմն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Եղոյան Անուշ – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Րաֆֆու անվան թիվ 19 հիմն. դպրոցի տնօրեն, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Հովհաննիսյան Անահիտ – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ղուլյան Յուրիկ – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Մաթևոսյան Սյուզաննա – «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Մալումյան Գայանե – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Մելիքյան Արթուր – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Մովսիսյան Ֆելիքս – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Սահակյան Աշոտ – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Սահակյան Հեղինե – Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ցականյան Ռուսլան – պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Փիլոյան Վալերի – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

КРАТКИЕ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ СТАТЕЙ

Агаджанян Самвел – кандидат исторических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Геворкян Вардуи – учительница армянкого языка и литературы, Ванадзорская основная школа № 19 имени Раффи

Гулян Юрик – кандидат исторических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Едоян Ануш – кандидат педагогических наук, доцент, директор Ванадзорской основной школы № 19 имени Раффи, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Малумян Гаяне – кандидат филологических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Матевосян Сюзанна – студентка 4-го курса по специальности «Русский язык и литература», Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Меликян Артур – кандидат исторических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Мовсисян Феликс – доктор исторических наук, профессор, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Оганесян Анаит – кандидат педагогических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Пилоян Валерий – кандидат филологических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Саакян Ашот – кандидат исторических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Саакян Эгине – Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Цаканян Руслан – кандидат исторических наук, Институт востоковедения НАН РА

BRIEF INFORMATION ABOUT THE AUTHORS OF THE ARTICLES

Aghajanyan Samvel - Candidate of Historical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Gevorgyan Varduhi - A teacher of Armenian Language and Literature from Vanadzor Basic School №19 named after Raffi

Ghulyan Yurik - Candidate of Historical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Hovhannisyan Anahit - Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Malumyan Gayane - Candidate of Philological Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Matevosyan Syuzanna - 4th year student in the specialty of "Russian Language and Literature", Vanadzor State University named after H. Toumanyan

Meliqyan Arthur - Candidate of Historical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Movsisyan Feliks - Doctor of Historical Sciences, Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Piloyan Valeri - Candidate of Philological Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Sahakyan Ashot - Candidate of Historical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Sahakyan Heghine - Vanadzor State University named after H. Toumanyan

Tsakanyan Ruslan - Candidate of Historical Sciences, Institute of Oriental Studies of NAS RA

Yedoyan Anush - Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, A headmaster of Vanadzor Basic School №19 named after Raffi, Vanadzor State University named after H. Toumanyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մալումյան Գայանե
Կերպարակերտումը գրողի և պատմողի հայեցակետերից՝ ըստ Դովլաթովի «Մերոնք» նովելաշարի 8

Սահակյան Հեղինե, Մաթևոսյան Սյուզաննա
Վ. Նաբոկովի «Կամերա օբսքուրա» վեպը. կուրության մոտիվն ու Ա. Ռեմիզովի ստեղծագործությունները 27

Փիլոյան Վալերի
Տագնապներ վասն հիշողության.....38

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ղուլյան Յուրիկ
Պարենային խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1919 թ. հունվար – 1920 թ. նոյեմբեր) 50

Մելիքյան Արթուր
S 89.4 պարթևական դրամների վերամեկնաբանություն 62

Մովսիսյան Ֆելիքս
Կ. Պոլսի «Համազգեաց ընկերության» առնչությունները մասոնության հետ 81

Սահակյան Աշոտ
ՀԲԸՄ գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին.....103

Ցականյան Ռուսլան
Արքայական տիտղոսաշարերն Աքքադում 115

Աղաջանյան Սամվել
Աղյուսակների և սխեմաների օգտագործումը
«Ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում»
թեմայի սեմինար պարապմունքի ժամանակ 127

Եղոյան Անուշ, Գևորգյան Վարդուհի
Մայրենիի միասնացված դասերին
քերականական նյութի և որոշ առարկաների ինտեգրումը՝
որպես ուսուցման արդյունավետ միջոց.....142

Հովհաննիսյան Անահիտ
Մանկավարժական կոմպետենցիաների ձևավորումը
գործարար խաղի միջոցով 155

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....167

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Малумян Гаяне
Создание образов с позиции писателя и рассказчика на основе новеллистического цикла Довлатова «Наши» 8

Саакян Эгине, Матевосян Сюзанна
Роман В. Набокова «Камера обскура»: мотив слепоты и творчесто А. Ремизова 27

Пилоян Валерий
Тревоги во имя памяти 38

ИСТОРИЯ

Гулян Юрик
Продовольственная проблема в Республике Армения (январь 1919 г. – ноябрь 1920 г.)....50

Меликян Артур
Реинтерпретация парфянских монет S89.4....62

Мовсисян Феликс
Связь константинопольского «Общенационального общества» с масонством....81

Саакян Ашот
Деятельность АВБС в Советской Армении в 1920-ых годах....103

Цаканян Руслан
Царственные титулы в Аккаде 115

Агаджанян Самвел
Использование таблиц и схем во время урока-семинара
на тему «Отмена крепостного права в России» 127

Едоян Ануш, Геворкян Вардуи
Интеграция грамматического материала и некоторых предметов
на единых уроках родного языка как эффективное средство обучения ...142

Оганесян Анаит
Формирование педагогических компетенций
посредством деловой игры.....155

КРАТКИЕ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ СТАТЕЙ.....168

CONTENTS

LITERARY STUDIES

Malumyan Gayane
Character Creation in Dovlatov's Series of Stories "Our Folks"
from the Writer's and Narrator's Perspective 8

Sahakyan Heghine, Matevosyan Syuzanna
The Novel V. Nabokov "The Camera of the Obscura":
the Motive of Blindness and the Creativity of A. Remizov 27

Piloyan Valeri
Alerts for Memory 38

HISTORY

Ghulyan Yurik
Food Problem in the Republic of Armenia
(from January 1919 to November 1920) 50

Meliqyan Arthur
The Reinterpretation of S 89.4 Parthian Coins 62

Movsisyan Feliks
Relationships of "The National Company"
of Constantinople with Masonry 81

Sahakyan Ashot
The Activity of AGBU in Soviet Armenia in the 1920s 103

Tsakanyan Ruslan
Royal Titles in Akkad 115

Aghajanyan Samvel
The Use of Charts and Schemes
"The Abolition of the Right to Serfdom in Russia" 127

Yedoyan Anush, Gevorgyan Varduhi
The Integration of Grammatical Material and Some Subjects
at the Joined Lessons of the Native Language
as an Effective Means of Teaching 1142

Hovhannisyan Anahit
Formation of Pedagogical Competences through Business Game 155

BRIEF INFORMATION ABOUT THE AUTHORS OF THE ARTICLES.....169

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածները տպագրվում են հայերենով, ռուսերենով կամ անգլերենով: Հոդվածը պետք է ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Համակարգչային շարվածքը. Microsoft Office Word 2007 ծրագրով, A4 չափսի թղթի վրա, լուսանցքները վերևից (Top)՝ 20 մմ, ներքևից (Bottom)՝ 25 մմ, ձախից (Left)՝ 30 մմ, աջից (Right)՝ 10 մմ: Տառատեսակը՝ Unicode (Sylfaen), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը (Line spacing)՝ 1.5, պարբերությունը (First line)՝ 0,75 սմ: Չօգտագործել մեկից ավելի տառաբացատ: Աղյուսակները, նկարները, գրաֆիկական պատկերները պետք է ունենան համարակալում, վերնագրային բացատրություն՝ 10 տառաչափով, հաստ, թեք (Bold, Italic): Դրանց բարձրությունը չգերազանցի 170 մմ, լայնությունը՝ 110 մմ: Աղյուսակների տեքստը պետք է լինի 10 տառաչափով: Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները ներկայացվում են Microsoft Equation, թեք (Italic), իսկ հիմնականները՝ առանձին տողով, մեջտեղում, կարող են համարակալվել նույն տողի աջ անկյունում՝ կոր () փակագծերի մեջ: Այն հոդվածների համար, որոնք պարունակում են սիմվոլներ և Sylfaen տառատեսակի մեջ չկան, պարտադիր է նաև այդ սիմվոլների էլեկտրոնային ֆոնտը: Առաջին էջի վերևում, մեջտեղում տրվում է վերնագիրը (Bold), առանց գլխատառերի: Հաջորդ տողում՝ աջից, ազգանուն, անուն (Bold, Italic): Հաջորդ տողում գրել՝ «Հանգուցային բառեր.» արտահայտությունը և 6-8 հանգուցային բառեր կամ բառակապակցություն: Հանգուցային բառերի շարքում չեն ներառվում վերնագրում արդեն իսկ նշված բառերը: Տեքստում հղումները տրվում են կամ ուղղանկյուն փակագծերում [], կամ էջի ներքևում՝ հերթական համարակալմամբ: Իսկ ծանոթագրությունները տրվում են միայն էջի ներքևում՝ հերթական համարակալմամբ: Տեքստի վերջում գրվում է «Գրականություն» բառը (Bold) առանց գլխատառերի: Հաջորդ տողից՝ գրականության ցանկը՝ այբբենական կարգով համարակալված: Գրականության ցանկին հաջորդում են ամփոփումները՝ երկու լեզուներով, որոնք իրենց բովանդակությամբ և հան-

գուցային բառերով պետք է լինեն նույնական և բաղկացած լինեն 150-200 բառից: Գրվում է հոդվածի վերնագիրը, հաջորդ տողում՝ ազգանուն, անունը (ձևավորումը՝ ըստ բնագրային հոդվածի), և առանձին տողերով՝ «Ամփոփում» բառը՝ համապատասխան լեզվով, առանց գլխատառերի, հանգուցային բառերը, ամփոփման տեքստը: Ամփոփումները չպետք է պարունակեն հապավումներ, հղումներ և մեջբերումներ: Ամփոփումները պետք է հոդվածի մասին պատկերացում տան հոդվածից առանձին և արտացոլեն հոդվածի բովանդակությունը: Հոդվածի առավելագույն ծավալը 12 էջ է, նվազագույնը՝ ա) 4 էջ՝ ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտությունների համար, բ) 6 էջ՝ հումանիտար և հասարակագիտական գիտությունների համար, գ) 8 էջ՝ ուսումնամեթոդական աշխատանքների համար: Հոդվածի ծավալի՝ առաջադրված չափանիշներին չհամապատասխանելու դեպքում տպագրության վերաբերյալ որոշումը կայացնում է խմբագրական խորհուրդը: Հոդվածի ծավալի մեջ չեն ներառվում երկու լեզվով ամփոփումները և գրականության, աղբյուրների, համառոտագրությունների ցանկերը:

Մեր հասցեն՝ ՀՀ, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36
Հեռ.՝ (+374 322) 20917
Կայքէջ՝ www.vsu.am
էլ. փոստ՝ info@vsu.am
Պատասխանատու քարտուղար՝
poghosyanalbert@mail.ru

К СВЕДЕНИЮ

Статьи публикуются на армянском, русском или английском языках. Статью необходимо представить в бумажном и электронном вариантах. Компьютерное оформление: Файл Microsoft Office Word 2007. Размер бумаги А4. Поля: сверху – 20 мм, снизу – 25 мм, слева – 30 мм, справа – 10 мм. Шрифт – Unicode (Sylfaen). Размер – 12 pt. Междустрочный интервал – 1,5. Абзац – 0,75 см. Не использовать больше одного пробела. Таблицы, рисунки, графические изображения должны иметь нумерацию, поясняющее заглавие (10 pt, полужирный шрифт, курсив – Bold, Italic). Размеры графического материала: ширина – не более 110 мм, высота – не более 170 мм, размер текста на рисунках – 10 pt. Формулы и математические выражения представляются в формате Microsoft Equation, курсивом, а основные отдельной строкой, в центре, могут быть пронумерованы в правом углу той же строки в круглых () скобках. Для тех статей, которые содержат символы, не значащиеся в шрифте Sylfaen, необходимо представить электронный фонт символов. На первой странице по центру указывается заголовок (Bold), заглавные буквы по необходимости не употреблять. На следующей строке – фамилия, имя (Bold, Italic). Через строку написать словосочетание «Ключевые слова:» и 6-8 ключевых слов или словосочетаний. Ссылки на литературу в тексте указываются в квадратных скобках - []. Примечания даются в конце страницы с возрастающей нумерацией. В конце текста пишется слово «Литература» (Bold) без заглавных букв. Со следующей строки – список литературы с возрастающей нумерацией. После списка литературы представляются резюме на двух языках. Содержание резюме и ключевые слова на двух языках должны быть идентичными и состоять из не менее 150-200 слов. Сначала указывается заглавие статьи, на следующей строке – фамилия и имя автора (оформление по оригинальной статье),

затем отдельными строками слово «Резюме» на соответствующем языке, заглавными буквами, после этого – ключевые слова и текст резюме. Объем статьи: а) 4-6 страниц для физико-математических, естественных, технических наук; б) 6-8 страниц для гуманитарных и общественных наук; в) 8-10 страниц для учебно-методических работ. Объем статьи не включает резюме на двух языках, списки литературы, источников и примечаний. Статьи будут опубликованы только после прохождения экспертизы и проверки на плагиат.

Наш адрес: РА, 2001, г. Ванадзор, ул. Тиграна Меца 36
Тел: (+374 322) 20917
Веб-сайт: www.vsu.am
Эл. почта: info@vsu.am
Ответственный секретарь:
poghosyanalbert@mail.ru

ACKNOWLEDGEMENT

The articles are published in Armenian, Russian or English. The articles should be submitted in paper and electronic versions.Computer Layout: Formatting: MS World 2007, page layout - A4, margins - 2 cm from the top; 2,5 cm from the bottom; 3.0 cm from the left; 1,0 cm from the right. Font- Unicode (Sylfaen); Font size- 12pt; line spacing (interval) – 1.5, First line- 0,75 cm. No double space. Diagrams, pictures and graphic should be enumerated, the text font size on them should be 10 pt, Bold, Italic, the picture size no bigger than 110 X 170 mm. The font size of the diagrams should be 10pt. Equations and mathematical expressions are presented in Microsoft Equation, Italic, the main ones – on a separate line, in the centre and can be enumerated in the right hand corner of the same line in round brackets (). The articles containing symbols which are not available in Sylfaen font, should be provided with the electronic font of those symbols. The title of the article should be in Bold, at the top of page 1, in the centre, without uppercase letters. The author's surname and name on the next line, in Bold, Italic. The next line should have the phrase: Key words and 6-8 key words or expressions. The references in the text should be in square brackets []. Notes should be at the bottom of the page, enumerated in order of increasing. At the end of the text - "Bibliography" in Bold, without uppercase letters. The list of used literature from the next line` enumerated in alphabetical order. Bibliography is followed by summary in two languages, which should be identical in their contents and key words and consist of at least 150-200 words. The title of the summary, surname and name of the author in the next line, the word "Summary" in the corresponding language, in uppercase letters, the key words and the summary text on separate lines. The size of the article: 4-6 pages for physicomathematical, natural and technical sciences a) 6-8 pages for

humanities and social sciences, b) 8-10 pages for teaching and methodological articles. The summary in two languages, lists of bibliography, sources and abbreviations are not included in the size of the article.

Our address: PA, 2001, Vanadzor, 36 Tigran Mets Str.
Tel: (+374 322) 20917
Website: www.vsu.am
E-mail: info@vsu.am
Secretary-in-Charge:
martuntovmasyan@mail.ru

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պրակ Ա

**(Հումանիտար և հասարակական գիտություններ,
դրանց դասավանդման մեթոդիկա)**

Երևան – 2019
«Միսմա» ՍՊԸ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ

ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Выпуск А

(Гуманитарные и общественные науки,
методика их преподавания)

Ереван – 2019
ООО «Мисма»

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TOUMANYAN

SCIENTIFIC PROCEEDINGS OF

VANADZOR STATE UNIVERSITY

Issue A

(Humanities and Social Sciences, Their Teaching Methodology)

Yerevan – 2019
"Misma" LTD

Համակարգչային ձևավորումը՝ *Աշխեն Գալստյանի*
Սրբագրումը՝ *Լիլիթ Պետրոսյանի, Անահիտ Լորեցյանի, Նազիկ Ավագյանի*

Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60 X 84 1/16
Ծավալը՝ 11.7 մամուլ
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է «Միսմա» ՍՊԸ-ում
Երևան – 2019

Компьютерное оформление – *Ашхен Галстян*
Корректура – *Лилит Петросян, Анаит Лорецян, Назик Авагян*

Бумага – офсетная
Размер – 60 X 84 1/16
Объем – 11.7 печатных листов
Тираж – 100 экземпляров

Издано в ООО «Мисма»
Ереван – 2019

Computer Design: *by Ashkhen Galstyan*
Proofreading: *by Lilit Petrosyan, Anahit Loretsyan, Nazik Avagyan*

Offset Paper
Size: 60 X 84 1/16
Amounted to 11.7 Press
Print Run: 100

Printed in “Misma” LTD
Yerevan – 2019

www.vsu.am